

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԲԱՆԱՀՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Ե. ԼԱՂԱՋԵԱՆԻ

ՇՈՏԱԿՈՒ ԲԱՐԲԱՌՈՎ

Ա. Լ. Օ

Ալօն մէկ ֆըխաբայ (աղքատ) մարդմ էր, Պան չկէր. էլաւ մըջ ուր տան կան (ման) էկաւ, մէ խառ թուրմ տեսաւ, ըստ ուր կնկան. Նա թուր կըտանեմ տիւքեան, կըտամ շինել, դառնամ գեամ պազրդեանի պէշին (վաճառականի դէմ):

Տարաւ թուրն էտու շինել, առեց էկաւ:

Կնիկն սաց. Ալծ, մէրթայ պազրդեանի պէշին. քեյնէ չի կեայ:

Ալօն սաց. Ոլլա ձենէ կուկեայ:

Սաց. Դէ կնաւ:

Ալօն ուր թուր կապեց վրէն, կնաց քեազքէն էլաւ տիւս դարձաւ սաց. Վազ էրթայ պազրդյնի պէշին, կըկեայ ըսպանել, վալլահ ևս կը դառնամ՝ համ տուն (զնամ տուն):

Դարձաւ էկաւ ուր տուն սաց. Վալլա, կնիկ, ևս կողութիւն աընեմ:

Կնիկ սաց. Զէ, քե սի, քեյնէ չիկեայ:

Ալօն ընդեաւ մըջ տիւքներաց. հըմէն կիշեր կինէր մէկ խառ տիւքեան կըթալնէր:

Էլան քեազքյեր գեացին մը վալին սին. Վալի, վոլլահ, մէկ խառ կեօտ ընդյեր մե քեաղայք, մեր քեաղայք աւիրից:

Սաց. Դեյ դալալ տանյք կանչել, էտ գեող կնդնւնյք (գտնենք խանինյք, սպանինյք):

Ալօն վալի վաշի ամբ (հրաման) լսաւ, սաց. Կնիկ, ըլի (ել) վախնինյք ինա քեազքէյն, էնանյք ուրիշ տեղ:

Ալօն էլաւ վե, ուր էշ իսպի, խուրճին էթալ վըրէն, քըրքըրուկ լըխէվի կէր՝ էն էլ էթալ վըր իշուն, իլաւ քեազքիյց կնաց:

Կնաց, կնաց խասաւ. Ինոկ (դիւղի անուն է):

Ալօն իշկից, որ էն տեղ շատ խաղող կէր, խնձոր կէր,
տանձ կէր:

Ալօն սաց կնկան. Վալլահ; մենյք տըկէնանյք ըստայ:

Տունմ ուր խմար տէսաւ, կնաց նստաւ ուր տուն:

Թեանիմ օր վրէն ընցաւ, տիսաւ որ զազու լաճ Ալօի
կնկան մենէն հազ արաց (հաւանեց):

Ալօն էանու վըրէն ակխաւ (արթնցաւ), սաց. Տէր Աստված, ևս
ինչդ աընեմ:

Օրմ Ալօ սաց կնկան. Կնիկ, ևս կորցայ (կուրացայ), ձի կը-
շախես, չես թողնի որ անօթի մեռնիմ:

Սաց. Խո, կըշախիմ, հասօր (այսօր) հասօր տիւ իմ մարդն ես:

Մնաց՝ մէկ օր սաց. Կնիկ, եմ (իմ) մէտէն (ախորժակ) կէր-
թայ ձաւար (ձաւարով փըլաւ):

Կնիկ էլաւ սաց. Քեյ խամար ձաւար կըշինիմ:

Կնիկ էլաւ դէան (ցորեն) տարաւ տիւռ, փոեց արև, սաց.
Օւա (այ) Ալօ, ես տի էրթամ ճրու, խաւեր տըգեան, նէա դէան
ա՛ռուին:

Ալօն սաց. Եմ ձեռ պռնի տար մօ դէան, ես կաչկեմ:

Կնիկ Ալօի ձեռ պռնեց տարաւ մօ դէան:

Սաց. Փէտմ տու իմ ձեռ, խաւեր կը քըշիմ:

Փէտմ էտու էանու ձեռ, Ալօն խաւեր քըշեց, Կնիկ էլաւ
կնաց ճրու:

Ալօ տիսաւ որ՝ գեօ զազու (զատաւորի) լաճ էկաւ մտաւ
Ալօի տուն:

Ալօն հետեանց քեարմ էզար, էտու, զազու լաճու կյլիսուն:

Ղաղու լաճ ըսպանից. Էկաւ ձեռ էտու զազու լաճ քէշից,
տարաւ էթալ տուն, էկաւ նստաւ մը ուր դէան:

Տեսաւ Ալօյի կնիկ էկաւ, սաց. Կնիկ, պանմ էկաւ կնաց մը-
տաւ մե տուն, սաց, չըմ կիտե շուն էր, թէ կատու էր, թէ տա-
ւար էր. վալլահ ես էլ քեարմ զարկիր եմ, մէ կնա, մէ տես, մէ
ամինկուեր մկայ կոտրեր ի. թէ սաղ ի:

Կնիկ կնաց իշկից, դէան (այստեղ) տիսաւ զազու լաճու լէշ
գեօ էնտե սպանուկ:

Դարձաւ էկաւ մօ Ալօ սաց. Տնակուլ, տիւ զազու լաճն իս
սպանիր:

Սաց. Ղաղու լաճու պմն մեր տուն լինչ էր, ընչի՞ տի
գեար:

Սաց. Մենյք տրկից ինք, էկաւ մեր տուն լինչ տը էլնի որ:

Ալօն սաց. Հըպա հէվարին ինչդ կընի, տանինյք պախինյք
մէ տեղ:

Դազուն իրեյք խառ ռազվան (պարտէղ) կայ, դազին թան-
պան (պատուէր) արեր ի, մէկ խառ նոր ծառ կայ էանու ռազի մէջ,
դազին սիր ի (ասել է) ռազվանին (պարտէզպանին) ամանաթ (ա-
ւանդ) քեյ էտա նոր ծառ:

Դիշեր էրկու սհաթ կնաց: Ալօ էլաւ զե, թիլմ իսկից դազու
լաճի վիդ, տարաւ կախից նոր ծառէն. տիսաւ ռազվանքտիր ըն-
տեղէն էկան, իշկըցին, տիսան մէկ մարդ ըլիր նոր ծառն
վիր. զարկըցին էտա մարդուն, շատ զարկըցին, թիլ կտրաւ.
մարդ ընկաւ տակ: Մարդն շատ տփէցին սաց. Պիրէյք ճրայք
կողցրէք, մընինք (տեսնանք), նէս մարդ զով ի:

Շրոյք կըսուցին, տիսան որ գեօ դազու լաճ:
Հապա ինչխ անինք, սին:

Մէկ մէկու ըսեցին. Հըպա էլէյք էրթանյշ մը Ալօն:
էլան իրիկուն զեացին մը Ալօն, կանչիցին. Ալծ, Ալծ:
Ալօն սաց. Էան վազի ի:

Սաց. Տիւռ պաց, մենյք ինք:

Ալօն տիւռ էպաց, սաց. Աստված խէրն էնի, դազու ռազ-
վանքտիր, բնչ ըլիր:

Սաց. Վալլան մենյք դազու լաճ սպանինյք:

Սաց. Տիւ ինչդ դազու լաճ սպանիք:

Ախըր սպանինյք, թայպիրմ տիս, տիւ քեռ Աստված:

Սաց Ալօն. Ջնէշ շատ չըմ ուզի, իրեյք քիս (մէկ քիսան
մօտ 50 ր. է) փարա պիրէյք ձի խըմար, էանու ջանդակ պիրէյք
թալէյք իմ տուն, ես կըսթթեմ (կանհետացնեմ):

Ռազվանքտիր էանու ուզած իրեյք քիս փարէն պիրին, էանու
ջանդակն էլ պիրին թալին Ալու տուն, ռազվանքտիր թողին գեացին
սազ (այդին):

Ալօն կնիկ սաց. Տնակուլ, Ալծ, հէլի թայպիրմ (պատրաս-
տութիւն) տիս, էսա ճանտըկին, կեախ ի լիւնայ:

Ալօ էլաւ զե, թիլմ կախից դազու լաճու ջանդկին, տարաւ
կախից տէրտըրջ հէրթըսէն:

Տէրտէր տկիսաւ (զարթնեց), էլաւ փէզմ տոփից, էդա ջան-
դակ տըփից: Թիլ կտրվից էկաւ տակ:

Տէրտէր սաց. Տիրուխնի, հէլի ճրազմ կպոււ:

Տիրուխնին էլաւ ճրազ կպուց, տիսաւ դազու լաճու ջանդակ
մազ անունց տան տախտին փոած:

Սաց. Տիրուխնի, բա դօրիս բնչխ էնինյք:

Տիրուխնին սաց. Մի վախէնայ, վազի կնա մօ Ալօն:

Տէրտէր կնաց մօ Ալօ, կանչից. Ալծ, Ալծ, տիւս արի:

Սաց. Նա վով ի, որ կըկանչի՝ Ալօ:

Սաց. Իս եմ, Ալօ, իս եմ, տիւռ պաց:
Ալօ տիւռ էսպաց, տիւռաւ տէրտէր, սաց. Խէր էլնիր
տէրտէր:

Սաց. Ալօ, դազու լաճ սպանիր ինք:

Սաց. Հը՝ տէրտէր, ինչին դազու լաճ սպանիր իք, վար տեղ
սպանիր իք:

Սաց. Վալլահ, սպանիր ինք:

Ալօն սաց. Տէրտէր, տիւ մեր տէրտէրն ես, քեյ ծէն չըմ
ըժե, կնա մէկ քիս փարա ձը խմար պի, էանու ջանդակ վերցու
րե թալի մե տուն:

Տէրտէր կնաց, քիսէմ փարա էանու խամար իպի: էանու
ջանդակն էլ իպի էթալ Ալօի տուն:

Սաց Ալօն. Դէ կնա քյնի, տէրտէր:

Տէրտէր կնաց ուր տուն:

Ալօի կնիկ սաց. Ալօ, կեախ (ժամանակ) ի լիւսնայ: էլլր
թայպիրմ վըր նէա լըշին տես:

Ալօ էլաւ վե, թիլմ իսկից դազու լաճու ջանդէկի վզէն, տա-
րաւ մօլլի հէրդուս վէ կախից:

Մօլլէն ակիսաւ, էլաւ վե, փէտմ առից էլաւ թըխ (գէպի):
Ջանդակ, շատ տփից: Տփից, տփից, ապա սաց ուր կնկան:

Հէլի ճրայգմ կպու, տիսնանյը նէա թնչ ի: Կնիկ էլաւ վե
ճրայգ կպուց, մօլլէն իշկեց, տեսաւ գեօ դազու լաճ, սաց.

Աստված քիւ տուն տիւրի, դազու լաճ, նէա թնչ կյաս ի
(կերպարանք), որ քիւ սիրտ եմ աղջիկ կուզէր, յառաշըլէ թօ զեյլ
տանէր քեյ խամար:

Մօլլէն սաց ուր կնկան. Հապա թնչին տը անենյը:

Կնիկ սաց. վազի շուտ մօ Ալօն:

Մօլլէն կնաց մօ Ալօն, կանչից Ալօ, Ալօ, այ Ալօ:

Ալօն սաց. Ան-պիլ ի:

Մօլլէն սաց. Ալօ; տիւռ պաց ես գեամ ներս, քեյ տիւ
պանմ ըսիմ:

Տիւռ էպաց, տիսաւ գեօ մօլլէն, սաց. Աստված խէր էնի,
մօլլա, թնչ կայ:

Սաց. Խէրն էն ա որ դազու լաճ սպանինք, գեօ մի տուն
ջանդակ թալած:

Սաց. Ի՞շին դազու լաճ սպանիրէյք:

Սաց. Վալլահ, գեօ սպանիրինյը:

Սաց. Էն, տիւ իմ մօլլէն ես, կնա մէկ քիս փարա պի՛ էանու
լէշ պի թալ մե (մեր) տուն:

Մոլլէն կնաց մէ քիս փարա իպեւ խոռու Ալօ, անու լէն էլ իսկ էթալ Ալօի տուն:

Ալօի կին սաց. Ալօ, իլի, մի թայպերմ որսն, կետիս ի որ լիսնայ, զազին որ մի ակախի, զմի միզ կըկտրի:

Ալօ էլաւ վե, թիլմ ըսկից զազու տողի վզէն. Կնաց վըր տանսքներուն (տանիք) իրեյք գան Ալօ կանչից, սաց. Հէյ խալիոր մարդ կայ՝ էանուր քիւն չտանի, կնիկ կայ՝ էանուր լաճ կըլայ, էն էլ ակախի, շահատ (վկայ) կէնէյք Ասսու խամար, որ ևս զազու լաճն իմ, ևմ խէր մօլլի աղջիկ ձը խամար չուզեց, մօլլի աղջիայ քեարբուն (խէր) կէրթամ ձի կըխեղտիմ:

Մէ խատ թըթի ծառ զեօ մաջ զազու պակին, Ալօն ան լէշ տարու մն թըթի ծառէն կախեց, էկաւ ուր տուն խանդիյստ քյնաւ:

Դազին խը լսուն էլաւ վե, իշկաց ծառ վե, մէ մարդմ կախուկ ծառ վե, կնաց մօտացաւ, զեօ էանու լաճ:

Վայ վամիլէր, էլաւ կանչից. Վավի ի իմ լաճ սպաներ: Շահադ (վկաներ) հանդէ կայնան սին. Ասսու խամար շնադ ինք որ առաւտուն էր, իրեյք զիր քը լաճ կանչիրի, իմ խէր մօլլի աղջիկ ձիկ խմար չուզից, էանուր քեարբուն, կէրթամ ձի կը խեղտիմ:

Էլան զազու լաճու ջանդակ տարան պախին: Տարին թըմմաւ. մէկ օր Ալօն էլաւ զիւր կնիկ տփից: Կնիկ էլաւ տանիս, կանչից: սաց. Դազու լաճ Ալօն է սպաներ:

Ալօն էլաւ ուր թուր կապեց վըր ուր, ձին խէծաւ, փախաւ կնաց չիւմ Մուսուըլ մէկի:

Դազին իմացաւ. էլաւ մարդ օգօրկից Մուսուըլ, սաց. Մէկ մարդ անուն Ալօ, ևմ լաճ սպանեց էկաւ Մուսուլ, էանու պոնէյք, սպանէյք:

Մուսուլա վալին էլաւ զարադու իդիր վըր կարմնջին: Ալօ կընաց Մուսուլա մօտկացաւ, տեսաւ քօչըրի (վաչկան քրգեր) խօվիւմ կէր ընդե, սաց. Խովիւ, էրի Մուսուլա ճամպախս ձիկ շացք տու:

Խովիւ սաց. Տնակուլ, զեօ էն Մուսուլ, ճամպախս նէա է, հըմա կնամ դիւզ:

Ալօն սաց. Ես շատ խաշիմ իմ (անտեղեակ), չըմ կիտի էրթայ, արբ էրթանյք, իմ ձին կիտամ քիյ, տիւ խիծի:

Խովիւ սաց. Չըմ իզեայ:

Ալօ սաց. Արբ, իմ թուրն էլ կիտամ քիյ, իմ ջլերն (շոբեր) էլ կիտամ քիյ:

Խովիւ սաց. Դէ իճի տակ:

Ալօն ձիուց իճաւ տակ, ջլերն խոռու էանու, ուր թուրն էտու էանու, ուր թուրն էտու էանու, ձին էտու խովիւ խէծաւ, խով-

վու ջլերն էլ Ալօ խակեաւ, խովվու քեապանակ (բրթեայ վերաբ-կուն, սպան) քեաշից վըր ուր գեացին Մուսուլ:

Խասան վըր կարմնջին, Սլօ փրթաւ կնաց մըջ քեաղքին, խովիւ խասաւ էլաւ վըր կարմնջին, դարաղուլ էզարկ խովվի վիզ կտրեց, ձիուց իպեւ տակ:

Ալօ կնաց մըջ քեաղքին կան էկաւ կնաց մէ պառվու տուն, սաց. Պառաւ, քեյ թնչ կայ:

Սաց. Զիկ մէկ լաճ կայ:

Սաց. Զիկ էլ ըրա քեյ լաճ, էլնինք էրկու:

Հէվարին, որ մութ էլաւ, Ալօ սաց. Պառաւ, տուր եմ խուր-ջին մենյը կընանք (գնանք) կողութիւն:

Ալօն առեց ուր ախպէր կընաց, կնաց կնաց խասաւ խըզինի (գանձարանի) տուան հոջեւ, տիւր էպաց, կնաց քիչմ փարա խա-նեց, առեց էկաւ:

Խը լուսուն խազնադար իլաւ վե, կնաց խըզինէն իշկեց, տիսաւ գեօ գեող ընգեյը խըզինէն տարիր ի:

Էկաւ սաց վալուն թէ գեող ընգեյը խզինէն տարիր ի: Վալին սաց. Պիրէյը հառջեւ խզնի տուան խորմ փորէյը, էտա խորի կէս կուպր լցէյը, որ մէյ տիր էլ էան գեող գեայ, մանի մըջ էան խորին, էլ տիւր չիգեայ:

Էլան փորեցին, կէսն իզեր կուպր լցին:

Հէվարին Ալօն իլաւ վե, սաց ուր պառվուն. Պառաւ, մէ տու իմ խուրջին:

Ալօ առեց խուրջին, հինք (ինքն) ուր ախպէր էլմ էլ գեացին գեողութիւն: Գեացին խզնին մօտացան:

Ալօ սաց ուր ախպօր. Տիւ յառէջ զյնա, ես փշուրմ ճիւր թափիմ կեամ քըյ խասնիմ:

Ախպէր որ յառաջ կնաց, ընգեաւ մաջ խորին, Ալօ էկաւ էլաւ վե, կանչեց ախպօր, տեսաւ ախպէր գեօ մաջ խորին, ձէն իտու սաց. Տօ տիւր ընգեյը ես խուր վե:

Սաց. Խա, ես գեօ մաջխուրին:

Սաց. Քիյ իրար չտաս, իմ ոտք կըզնեմ վըր քիւ թիւին, կընցընիմ հէամ էան կուլ (կողմ), էլմ էլ քիչմ փարայ կառնիմ կը-կեամ. ոտք կըզնիմ վըր քիւ թիւին, կընցընիմ կեամ նէա կուլ, էնտուց ձեռ կըթալիմ քի կըխանիմ տիւր:

Ոտ էտիր վըր ուր ախպօր թիւին, կնաց էան կուլ. էլմ էլ փշուրմ փարայ առից, էկաւ, ոտ էտիր վըր էանու թիւին, ընցաւ նէա կուլ, ձեռ էտու ախպօր ձեռ որ տը քեաշէր տիւր, չը կըր-ցաւ էրաւ չէրաւ չը կէրցաւ, դանակ ծոցին էխան, էթալ ախպօր վիզ կտրից, զյօնի տարաւ, լէշ մեաց մաջ խուրին:

Խը լըսուն խըզնդար էլաւ, կնաց խըզինի տիւռ էպաց, ըշկեց նէա ինչ. գեօ գեող (գող) բէզյլօս մաջ խորին, Դարձաւ էկաւ սաց վալուն. Մեր գեող գեօ դա մաջ խորին ընդյած առանց զյլօխ:

Վալին սաց. Ան էշ առէյք քէյշէյք վըր հաղպրին (աղրիւր), քեանիմ քեաղքիյ կնիկ գեա, կըկեայ վըր հաղպրին, վիր լաճ ըլինի, էանու աշք կառնի ինի, էանու սիրտ իրիցի, տըլայ. որ էլաց՝ պոնէյք պիրէյք:

Խոշամբեյր էլան ըղէշ խանին խուրից, առին գեացին, թալիցին վըր հաղպրին, դարաղօլ կայնաւ հոջնւ:

Ալօ տիսու պառաւ տ'էլնէր տ'էրթէր հաղպիւր ճրու:

Ալօ սաց. Պառաւ, արհամ ճրու:

Պառաւ սաց. Խա, տընամ ճրու:

Ալօ սաց. Պառաւ, քեօ լաճու էշ գեօ պիրած դրած վըր հաղպրին. քես աշք առնի հինի, քես սիրտ աը իրիցի, տիւ տըլաս, ամա քեյ զայիմ պոնի. կնա քիւ կուժ լից, քէոյ ոտ ասկասցու (անցկացրու) քեար, ինիս, կուժ կուտրի, նստի վըրէն կուշտ լացի, թէ որ քիյ պանիցին, քեյ աը խարցման, աը ասեն նէա քիւ լաճն ի, սա. Զէ, Տ'ասեն ապա քիւ թժուն իւ Տիւ սա. Զէ, Տը սին. Ապա ինչի՞ կըլաս: Սա. Ես Փըխարայ իմ (աղքատ), փարայ չկայ ձի, եմ կուժ կոտրաւ, եմ լաց վէր եմ կըժին կըզեայ:

Պառաւ էլաւ կնաց վըր հաղպրին, կուժ էլից, դարձաւ, ոտ ասկացաւ քեար, ընդեաւ գէյտին, կուժ կոտրաւ, նստաւ կժի կտուրքիյր էտու յիրար, ուր ազին իշկաց (նայեց), էլաց:

Հարաղօլ էկաւ պանից զէն, սաց. նէա քիւ լաճն ի:

Սաց. Զէ,

Սաց. Հապա քիւ թժուն ի:

Սաց. Զէ,

Սաց. Հապա ինչի՞ կըլաս:

Սաց. Ես Փըխարայ եմ, փարէմ չկայ ձի, եմ կուժ կոտրաւ՝ լաց վըր եմ կըժին կըզեայ:

Պոնեցին տարան մօ վալին:

Վալին սաց. Պառաւ, ինչի՞ կըլէր, նէա քիւ լաճն էր:

Սաց. Զէ,

Սաց. Հապա քիւ թժուն էր:

Սաց. Զէ,

Սաց. Հապա ինչի՞ կըլէր:

Սաց. Ես էկայ վըր հաղպրին, եմ կուժ լըցուցի, վախէցայ, եմ ոտ ասկացաւ քեար, ընդեայ, իմ կուժ կոտրաւ, եմ լաց վըր եմ կըժին կըկեէր:

Վալին սաց. Առաքեյ մէկ մաջիթի, տար տու, քեյ խամար կուժ տու:

Պառաւ առից կնաց:

Եերուվինենց ամբէն (Եիրվան, Սղէրդի մի գաւառի ամիրա), յօրօխէց մօ Մուսլա վալին, սաց էանու. Զըկե՛իր (Հըկարողացմբ) էան կեռող պռնի յօրօխի գեա անու վիզ կտրիմ:

Սաց. Տնաւեր, էտա Բնչ խօսքի. որ ես եմ գեռող պռնիմ, շըմ կմնայ էանու վիզ կտրի:

Սաց. Էան տարէյք, քեաղքէյց տիւս դըրէյք, շատ մարդ կըկեան կէրթան, էան լէշ վար մարդուն էլնի, էանու սիրտ կիրեցի, տի լայ, ինչ որ լաց՝ ձը խամար պռնեյք պերէյք:

Լէշ տարան քեաղքէյց տիւս դրին: Ալօն էլաւ վեր. արէմ (վերարկու) քէաշից վըր ուր, էշ էտու հոչն կնաց, կնաց էնա քեաղքիյ կուղլէն (կողմէն):

Կնաց մաջ գաշտին, զվուաւ (դարձաւ) էկաւ էկաւ Ալօն, խասաւ քեաղայք, էկաւ մօ զարաղոււ:

Ղարաղուլ սաց. Հա դաւրէշ, էրի (արի) մա մի, (մեզ մօտ) մը (մեզ) խամար պան սա չիւր խըլըսուն, մինյք իրեյք խոզի ևնք, տասնըխինք ոսկի կտանյք քի:

Ալօ սաց. Զէ, չիմ իգեայ, որ ես կեամ, ան կեռող ոը կեայ զիմ էշն էլ կեռողնայ:

Սացին. Թիւ իշու հաղն էլ կտանյք:

Սաց. Եմ իշի հաղն Բշկ ի (Բնչ է):

Սին. Տասնիխնք ոսկի էլ քիւ իշու հաղն ի:

Սաց. Աղէկ, կըգեամ:

Ալօն էլաւ կնաց մօ զարաղօլքիյր, անունց խամար պան ման սաց չիւմ կէս զիշեր կոտրաւ, էտա իրեյք մարդեր քյնան: Ալօ էլաւ վեր, ուր ախպօր լէշ իգեր վըր իշու քեամկին՝ տարաւ ուր տուն սաց. Պառաւ, գէ կուշտ լացի:

Ալօ գարձաւ անունց կուշտ, ապէն փաթթից զյլօխ, կող էլու քյնաւ:

Խըլսուն էն մարդեր էլան վե, իշկըցին տիսան, էշն՝ էլ տարած, լէշն էլ տարած, սին. Հըպը ինչ տ'ասինյք զարվըշին:

Դարվէշ էլաւ խըտ լսուն, իշկաց տար-թար (դէս ու դէն) տիսաւ զա չկայ, սաց. Զըլնի եմ էշ տարած ին:

Սին. Խա, վոլահ, քես էշ տարած ին:

Սաց. Հայ, հայ, կուզիմ զիմ էշ:

Սին. Մենյք քիւ բախտ, ձէն մածի, մինք քեռւ իշու զիյն էլ կտանյք:

Էլան եռուսուն ոսկի տվին էանու, Ալօն էլաւ էնդի կնաց:

Դարապօլ կնաց մա վալին, սաց. Վոլահան, լէշն էլ կեղցան տարան:

Ելքուլինինց ամերէն յօրօղից մօ Մուսլայ վալին, սաց. Զըկէրի ուր կեռդ պանի, յօրօղի կեայ անու վիզ կըտրիմ:

Սաց. Սա անակողի պանկտեր (բաներ) շատ ի. որ ևս եմ կեռդ պանիմ, անու վիզ ևս չըմ կմնայ կտրի:

Մուսլայ վալին սաց. Պիրէյք գաւէմ (ուղա) ոսկով դարդարենյք, տանենյք քեաղքից տիւս, չն կեռդ տրկեայ դէափ գեռդութիւն, մինյք չենյք կանայ էն կեռդ պանի:

Էլան գաւէմ պիրէն, գարդըրիցին, տարան քեաղքեյց տիւս, դարագուլ նաստաւ հոչիւ:

Ալօ իլաւ վե, ուր քսիկ էլին (լի) եարթ. (խիստ) թունդ թթուն էլից, կապից վըր ուր, քեաղքեյց էլաւ տիւս, կնաց դաշտի կնարէն (կողմից, եզրից) էկաւ խասաւ մօ զարազուլ. նըստան էնատեղ, անունց մօ, էլաւ չիկարէմ (սիկար) էտու էանուր, շատ որ քեաշիցին, սարխօշցան, պանկան էտո տեղ, թմրան, քյնան:

Ալօն իլաւ վե, գաւէն կեօցցաւ, իսիդ ուր տուն, զինից (մորթեց) ուր խմար վիրուց:

Աը լսուն զարագուլ էլաւ վե, էկաւ մօ վալին սաց. Վոլահան, դաւէն էլ կեռդցան:

Վալին սաց. Վոլահան դօրիս թնչ անենյք:

Ելքուլինինց ամերէն էլ յօրօխկից մօ Մուսլա վալին սաց. Զըկէնի ուր կեռդ պանի, յօրօղի գեայ ուր վիզ կտրիմ:

Սաց. Էնա անավերի խապար շատ ի, որ ևս կեռդ պանիմ, չըմ կէրի էանու վիզ կտրի:

Վալու տիչիկն սաց ուր խօր. Եմ տեղջիւլ (անկողին) քեաղքէն տիւս իսկէյք (ձգեցէք), կիշեր էան կեռդ տըկեայ ձի կեռդութիւն, որ ևս չը պանիմ, տիւ մարդ չըկէնէյք պանէյք:

Էլան վե, աղջկան թախթ տարան քեաղքից տիւս իսկըցին: Հէվարին Ալօ իլաւ վեր, տիկմ ճիւր, էթալ ուր թե, արծըլին (ածելին) պանից ուր ձեռ, չկարէմ (սիկար) էլ կպուց, պրնից ուր ձեռ, մէջ շուկին վե կնաց:

Կնաց մէ եահուտում (հրէի) տիւս, էանու չկարէն ընցաւ, կանչից եահուտուն. Փշուրմ կրակ տու ձիկ:

Եահուտին էլաւ կրակ էտու սաց. Ծնակուլ ձի տիւռ քեօն (ցեխ) էր, քիւ ձեռ պարզից, եմ ձեռ չըխասնի քիւ ձեռ:

Եահուտին որ ձեռ պարզից, տածըլին էթալ եահուտու ձեռ կտրից, եահուտին ընգիւտ տըկեան միռաւ: Ալօն ձեռ առից կնաց:

Կնաց մօ աղջիկ, էլաւ վըր թախթին, ձեռ էթալ զախչիկ, ուր լախրտին (զրոյց) խետ ախչկայ արաց:

Ալօ սաց. Ալոչի, ձի շեռ կըկեայ:

Աղջիկ սաց. Հըմլա շըռի մէջ տեղաց:

Սաց. Խնչի կըշըռիմ մէջ տեղաց, որ քիւ բեաւարին (վստահութիւն) վէր ձի չիգեայ, առա իմ ձեռ պռնի, կիջնեմ տակ կըշըռեմ:

Եահուտու ձեռ իտի մէջ աղջկայ ձեռաց, իջաւ տակ, մախաթ էզարկ տկին, տիկ շուց. Ալօն թողեց կնաց:

Աղջիկ մաց թէ էանու շեռ կտրի շեռ չըկտրաւ, Աղջիկ աջըգաւ, ձեռ քեաշեց, տիսաւ մէկ չլուր (մերկ) ձեռ էկաւ մօտ: Սաց. վմյ, սա պան էլ արաց զինքն էլ փախաւ, Մնաց իսե լըսուն, աղջիկ էլաւ կնաց մօտ խէր, սաց խօր. Զըկարցայ պռնի գեռոդ:

Խէր սաց. Բա ինչիս անենյք:

Էլէյք սէրուբանդ (կախարդ) պառաւմ պիրէյք, իսկենյք մըջ քեազքիյն մահինք վե տուն դաւի միս կայ, մե գեռոդ էան տուն ի:

Էլան սէրուբանդ պառաւմ տեսան, էլան յօրօխսկիցին մըջ քեազքիյն: Պառաւ մըջ քեազքին կան էկաւ (ման եկաւ), կնաց Ալօի տուն. իշկեց, տեսաւ որ գեօ Ալօի մէր միս կիփի, սաց Ալօյի մօր. Աստված տայ քեյ, եմ լաճ խիւանդ ի, քիչմ դաւի միս կուզի, մէ քիչմ դաւի միս տուր տանիմ իմ լաճուն:

Ալօի մէր սաց. Նստի կուշտ կի, քիչմ էլ կտամ կըտանիս քիւ լաճուն:

Էլաւ էլից մըջ քեասին, իտի պառաւու հոչե, էնի կուշտ կէրաւ էլաւ քիչմ էլ էթալ էանու փէշ, առեց կնաց, էլաւ տիւս:

Տէսաւ Ալօն էնդեխէն էկաւ. սաց. էան ինչ ի խե քեյ:

Սաց. Աստված տա քիյ, քիւ մօր, եմ լաճ խիւանդ էր, քիչմ դաւի միս ուզեց. էկայ մօ քեռ մէր, քիչմ դաւի միս էտու ձի, առի գեօ կըհամ (կէրթամ) մեր տուն:

Ալօ սաց. Մա պի (բեր), մահինք (տեսնենք) քեանի մի կտոր ըլաւ Շանց էտու էանու:

Սաց. Էրի հայնք (արի երթանք) իմ մէր քիյ քիչ ի տուեր. և ես քիչմ էլ կտամ քեյ:

Ալօն զպառաւ առից կնաց տուն: Թուրմ էզար վիզ կտրից, սաց ուր մօր. Տիւ չթս կիտէ, որ դաւի միս տանեն վալուն շանց տան, վալին զիմ վիզ կըկտրի:

Աէյրուբանդ պառաւն էլ կորուսաւ:

Դալալ տվին կանչել, սին. Մեր կեռոդ սէյրուբանդ պառաւն էլ կէրաւ:

Վալին սաց. Էն կեռոդ որն ի, թող կեայ իմ ձեռ, ես դիմ աղջիկ կըտամ էանու:

Ալո էլաւ կնաց վալու ձեռ, վալին ուր աղջիկ էտու էանու սաց. Զիւր մկայ տիւ իմ կեռդն իր, մկայ էլար զիմ փէսէն. ձի քեյնէ պտի որ ինչ տիւ արիր իմ գյլոխ, ըսկուն անես Շիրվնենց, ամիրի զյլօխ:

Ալօն սաց. Զիւռմ (այժ) ձի խամար զինի, ամէն բոկից (մազից) զանգեակմ կախի, կինամ:

Վալին էլաւ չիւռմ զինել էտու, հըմէն բոկէն զանգեակմ կախեց: Ալօն էթալ ուր թե, փէղմ պոնից ուր ձեռ, կնաց Շիրվնենց ամիրի տուն:

Հէվարին կնաց էանու օդէն: Կեղական հըմէն ժողվան էկան էանու օդէն շիւմ քյնելու կեախ լախորդի (զրոյց) էրին: Դեացին ուրինց տուն քյնան: Ամիրէն էլ էլաւ ուր տեղ էթալ (անկողին ձզեց) պառկաւ քյնաւ:

Ալօն էլաւ զե, չըսու մորթ էթալ վէ ուր թիւին, փէդ պըռնից ուր ձեռ, էկաւ կայնաւ վէր էանու սրտին, սաց. Հա, ևս խոզի կառամ, խոզի կառնիմ:

Ամիրէն սաց. Մեռնիմ քե, խրիշտակ, մոհլաթ (ժամանակ)-տու ձի շիւմ խըլսուն ևս ևմ զեղական, ևմ տղէքեյր տիւնամ:

Սաց. Քե մօհլաթի, խի լսուն տիս:

Ալօ կնաց պառկաւ ուր տեղ, խըլսուն Շէրվնենց ամիրէն էլաւ զե, կանչից ուր զեղզէլնին. կանչից ուր լամերաց սաց. Ամանաթ ձի մէկ մէկէլ (ձեղ միմեանց ևմ յանձնում): Ծերեկ զիշեր, խոզիաւ խրեշտակ իկեր էր ևմ խոզիյն կառնէր, հեվի արեր ևմ (խնդրել ևմ) որ նոր գաղըներ, էլէ ձի խամար թապուտմ (դագաղ) շինել տուէք:

Էանու տղէրք հէլան թապութմ շինիլ տվին, Շէրվնենց ամիրէն վերուցին դրին ինե, էանու խաց ջուրն էլ դրին մէջ. սաց-Դէ զեացէյք, մարդ հեղարին կըկեայ ստա:

Կիշեր էրկու սրաթ կնաց: Ալօն էլաւ զե. չըսու մորթ խառնաւ, փէտ պանեց ուր ձեռ, էկաւ կայնաւ վըր ամիրի սրտին, Սաց. Հան խոզին կառամ, խոզին կառնիմ:

Սաց. Խոզին քոն ի:

Սաց. Մահեամ (ճիշտ է):

Ալօն փալան իպի, մոտոց թապուտի տակ շըւկից, կնաց թըղ (դէպի) Մուսուլ, տարաւ իտիր Մուսլայ կուշա:

Շէրվնենց ամիրէն սաց. Աստծու դիւան տը (տես) շմար զատն ի:

Սաց. Զէ, վլլահ մօտացայնք:

Սաց. Տիւ կաց ըստա, ևս կէրթամ Աստծու դիւան. քիւ մեղք լատ ի. փշուրմ քիւ մեղք թեթեացուցիմ:

Սաց. Խըլիշտակ, կըխնդրեմ քիյնէ:

Ալօ էլաւ կնաց վալու զիւան, սաց վալուն, թո Շէրութենց ամիրէն գեօ գըհա պիրի. գեողցա պիրի գան, ծո գեօ կըպիրիմ դնիմ ստա, իրեյթ խապար խետ կիտամ, նուր (նոր) ձիծղացէյթ. ձէն չ'տաք:

Էլաւ դարձաւ կնաց, Շիրթենց ամիրէն սաց. Խըլիշտակ, տիւ Հկմբ:

Սաց. Խա, հս իկայ:

Սաց. Տիւ ինչ արիր ձիկ խմար:

Սաց. Թիւ մեղքեյթ թեթևացուցի, բալէ ինչկանեմ՝ եմ խապար արա:

Սաց. Աղէկ:

Սաց. Թեյ տ'սիմ, փիշի փիշի.

Տիւ սա, նամւ, նամւ:

Տըսիմ քեյ կուպրի կուպրի.

Տիւ սա, Հաւ, Հաւ:

Ես քեյ տ'կանչիմ, չշճ, չշճ.

Տիւ սա, լօփ, լօփ, զռա:

Ամիրէն սաց. Աղէկ:

Ամրէն շկից, տարաւ վալու զիւան իղիր: Սաց. Փիշի փիշի:

Սաց. Նամւ նամւ:

Սաց. Ցուրի, յուրի, յուրի.

Սաց. Հաւ, Հաւ, Հաւ:

Սաց. Զշճ չշճ:

Սաց. Լօփ, լօփ, զռաց:

Մըծղացին դիւան հըմէն, վալու մարդիրն էլ ծըծղացին շատ:

Շիրութենց ամրէն թապութից խանեցին, իրիշկաց անունց. շըշկովաւ:

Վալին սաց. Շիրութենց ամրէն, ինչին ի եմ կեօդ. իմ մալ կըզեօդնէր. ապա էն կեօդ էկաւ, քեյ Շէրթուց կեողցաւ, առից իպե դաս:

Սաց. Խա. էանու անուն ինչին ի:

Սաց. Ալօ ի:

Սաց. Ալօ, էրի իմ ձեռ, հս եմ աղջիկ կը տամ քեյ:

Ալօն կնաց էանու ձեռ, աղջիկ էտու էանու. էլաւ եօթն օր էօթ կիշեր խարսնիս արաց, էնոնք խասան ուրենց մուրագ, մեյնք էլ խասնեյնք մեր մուրագ:

Պատմեց 1911թ. Յուլիսի 24-ին, Շատախի Թաղ զիւզում Արմշատցի (Շատախու զաւառի) Թամալի լաճ Խլդաթ, քառասուն

անգրագիտ գիւղացին, որ երկրագործութեամբ է պարապում. բայց ձմեռները քրդերի մէջ բուրթ զգելով է զրազւում և հերեաթներ ասում: Նա այս հէքիաթը սովորել է մի հայից: Այժմ հայերի գիւղերունն էլ հէքիաթները քրտերէն են ասում:

ԲԱՂԴՈ

Կէլնի կէլնի, կէլնի չէլնի, վախտի զամանտա (ժամանակով) կնիկմ ինան (միասին) մէկ խառ լաճ:

Ետո կնկան անուն Ասմար էր. լաճուն էլ Բաղդօ (Բաղդասար): Մէկ օր Ասմար կըկանչի ուր լաճուն կասի, տղա Բաղդօրալամ, արի քեյ գնեմ սանահաթիմ (արհեստի), խէր չունես, ապա մե (մեղ) վաղ պիտի շախու: Խոր ինոր ինոր (արան նրան) խղմաթ անելով քեյ շախոցի պախիցի, էլ չիմ կանայ, գես ես պառվցայր մեր հալ ինչի պիտի էնի, ինենք (ընկնենք) անօթի մեռնեյնք:

Մէր կասի կըպաշլայի (կակսի) ինել վէր քիթ մոթին մասին (մտածմունք) կանի, կուլս կողբայր:

Լաճնի չարէն կըկտրի կասի, ծո մարէ, ես ինչ անեմ, կասի: Ես ինչի եմ նստե ստա, էլնեմ էրթամ տեղմ էրկու, համ մտնեմ էլնեմ, պարքի էստ իմ մօր ձէն իմ ականջից կտրի, էրթամ դէնմ (մի կողմ) աղատվեմ:

Տղէն ի կէլնի կէրթա, կասի. Դեռ էրթամ գեռը չէրթամ, պարէ էրթամ աման ծախողի մօտ աշկերտ:

Կէրթա կասի աման ծախողին. Աման ծախող, քեյ չրադ (աշակերտ) լաղըմ չի:

Աման ծախող թայմին (կընկատի) կանի էտա լաճու վէրազյլօխ ուրնուր (ինքն իրին) կասի վալու էստ լաճ աղէկ ալ-չափուկի (աշքարաց) պարէ առնեմ մօտա:

Աման ծախող կասի. Խա, արի, ամոր (բայց) քեռ անուն ինչ ի:

Բաղդօն կասի. Խմ անուն Ամանկոտրիկ ի:

Ի՞նչ, կասի աման ծախող:

Բաղդօն կասի էլմ էլ ուր անուն.—իմ անուն Ամանկոտրիկ ի:

Մարդն ի կըմտածի, կըմտմտա կասի. Զայի (կարելի է որ) իսոր անուն էն ի:

Տղի հաղի (վարձքի) վէրէն էլ կըբարուշին (կըպայմանաւուշին)

բուրին) քեանի օր որ կը մնա ինոր տիւքեան էն կանդար հաղ պիտի տա.

Մէր որ լսաւ շատ ուրախացաւ

Ամա (բայց) մէ օր ուսթէն կասի. Տղա, Ամանկոտրիկ, ևս պիտի էրթամ Դյրաշէն (Ձռաշէն-գիւղ է) աման պիրելու. տիւ խօրոտ քեռ աչք վէր դիւքնին պախի, խօրօտ շուատ (աշխոյժ) կաց, առ-տուր արա չիւր ես գեյզից դառնամ, խասկըցմբ:

Աման-կոտրիկ կասի. Խա, խա, խասկըցայ, տիւ կնա գեյդ, խետ քեռ գործին, ես կիտեմ ինչ կանեմ:

Ուսթէն կը թողնի կէրթա գեղու Աման-կոտրիկ կասի. «Ուսթէն հագիյ (բանի օր) ձի ասաց՝ Աման-կոտրիկ, սապը արա (համբերի) տես. ես մկա ինչ կիանիմ ամանյուերաց գյուին:

Կառնի մէ խատ զուպա մեծ քեարմ, կինի վէր ամաններաց կը պաշարայի մէյ մէկ սխկոտել (ջարդել), շրփոց գըրըմժոց կը դնի տիւքան, մէկ աման բիլա չ'թողնէ լաւ սաղլամ (ողջ):

Էն մէկէլ օր ուսթէն կուգեայ կը տեսնայ որ ուր տիւքան պիթին էլե տափ-սաղազ, կը թէպու (կը շուարի) կը մնայ. կասի. Տղա, Աման-կոտրիկ, Աման-կոտրիկ:

Աման-կոտրիկ կասի. Ուսթա, էլ աման չկայ որ կոտրեմ:

Հայ, կասի, շուն շան որդի, կորիր կնա, էլ էսա տիւքեան մի կեա, կուշտմ դմբոց կուտա կը ճամբխի կէրթայ:

Աման-կոտրիկն ի կասի. Թէ տիւ ասիր Աման-կոտրի, ևս էլ կոտրեցի: Ուսթէն ի կը լարի յետն. Բաղդօն կը փախի կէրթայ ուր տուն, մօր կասի. Մարէ, քանիմ խատ աման կոտրեցի, ուսթէն ձիկ մլեց (խրկեց) տիւս:

Մէր կասի. Տղա, բարէ կնա կօնդուսաջութիւն (կօշկակարութիւն):

Լաճն ի կէրթայ կօնդուսաջում տիւքեան. կասի. Ուսթա, գեամ էլնեմ քեյ աշկերտ:

Կասի. Խա, արե: Անունդ ինչ ի կը խառցուցի Բաղդօյին:

Բաղդօն էլ կասի. Իմ անունս Կաշի-կտրիկ ի:

Կօնդուսաջին Բաղդօյին կասի. Արե նստի էնա տեղ:

Կը տանի ուր մօտ գետ քիչմ պան կը սովլցուցի, կը մնայ մի քանի օր: Մէկ օր ուսթէն կասի. Տղա, Կաշի-կտրիկ, կաց տիւքան ես մէյ դիպնիմ տուն գեամ. խասկըցար, Կաշի-կտրիկ:

Կաշի-կտրիկ կասի. Խա, Զիւմ ուսթէն կէրթայ տուն՝ Բաղդօն կառնի դանակ էն պիթիւն կաշիք կը կտրտի:

Ուսթէն կուգեա կը տեսնայ, որ զրմէն կաշիք կտրուկ, լցուկ տուն ի: Կը տփի մէջ ուր զյլխուն, տղին կը մլի տիւս. տղէն կասի. Ես ինչ անեմ թէ տիւ ասիր. Կաշի-կտրիկ:

Բաղդօն ի, էնտեղից կէլնի կէրթա ջամ՝ (ապակի) ծախողի մօտ, էլմ կասի. Իմ անուն ջամ կտրող ի. ինոր ջամերն էլ մէ-կէլներաց պէս կըկոտուաի կըթողնի կէրթա: Վաշնասըլ (վերջապէս) դեռ որ կէրթա, զըմէն տեղ մէկ մէկ գէյշ անունմ կըդնի վէր ուր, սկուն որ հըմէն տեղիցն էլ կըմլի տիւա:

Մէր չ'կիտի ինչին անի խետ ուր լաճուն. կասի. Բարէ էրթամ բերզի տկի սուրբ ծառին խառցուցիմ, խեմ սուրբ ծառ ինչ կասի, որ ասի, ես էն կանեմ:

Մէրն ի կէլնի խինգ փարի խունկ, խինգ փարի մոմ կառնի որ էրթա սուրբ ծառի մօտ: Բաղդօն ի գեաղտիկ մօտ ետվից, կարճ ճամբառվ կէրթա կըմանի էն պոտ ծառի մէջ, կըպախվի էնոր մէջ, մէր չ'տեսնայ, կուգեա որ մոմ վառի:

Մոմ կըվառի, խունկ կը ծխի, ազօթք կանի, եօթ ծունդը կըդնի. սորա (վերջ) ձեռնով կըզանի ծառին կասի. Ով սուրբ ծտո, ասու մէ խենյը, իմ լաճ ինչ սանահաթի դնեմ:

Լաճն ի պոտ ծառի մէջից կասի. Դիր ուր քեյուն մօտ, եօթ գեր կըդնեց:

Բաղդօյի քեյոխն էլ, ինչ ասիմ, շատ ջոջ գեռող էր:

Մէրն ի կէրթա ուր ախողօր մօտ կասի. Ախողէր, հալ-հէքաթը ըորսկնայ, ընցած դառցած, արե Բաղդօն առ քեռ մօտ պատի:

Թեռին կայիլ կէլնի . (կընդունի), ամա կասի. Արե քեյ մէյմ տի փորձեմ, տեսնամ թէ տիւ ինչին ես, շրատ (աչքարաց) թէ ոչ:

Էնտեղ, վէր ծառին, եղունկէ (աղաւնիի) բոյն կէր, քեյոխն կասի. Ելի եղունկէ տկէն խաւուձուն պի. ամու սկուն պի, որ եղունիկ չիմանայ, Լաճն ի կէլնի ծառ. սկուն գեաղտիկ կըվէրոցի խաւուձուն, որ եղունիկ չիմնայ. կըդառնայ քեյուն կասի. Թեռի, զէ տիւ էլ խաւուձուն տար դիր եղունկէ բոյն, տեսնայնք ինչին կըտանիս:

Թեռին չիւմ խաւուձուն կը դնի եղունկէ պոնը, Բաղդօն տակից քեյուն շվար կըխանի. քեռին կըմնա տկլող՝ չիմնայ, Թեռին մէկէլ կիրիշեայ կըտեսնայ որ վրէն շալվար չկայ:

Բաղդօն կասի. Թեռի, քեռի, առ քեռ շըլվար կնա, ուսթայ մարդ ճանչցիր:

Թեռին կասի. Տղա, արե քե, քեռ ճակատ պաքեյմ, խիտ քեյ ևս հալա (տակաւին) շատ պան պիտի անեմ:

Մէկ որ Բաղդօն կըտեսնա մէկ պառցուկ ուխտ (ուղտ) ինգեյ փօղան (փողոց) զրէ զրէ կէրթա: Մէկ խատ թազա խաց կըպոնի ձեռ. հա շանյ կուտայ ըդառն, հա կէրթայ տեխ (կողմ) ուրենց տուն, չիւմ (մինչև) կըտանի կըմլի (կըմտցնէ) ուրենց տուն, վերզի պեռներ կըտեղաւորի, կըպախի. ուղտն էլ կըմորթի կըդնի

ամաներաց մէջ, իսկի էլ մօր չասի, թէ ինչ արեց, ինչ չարեց, չէ որ պատ էր:

Ըղտու տէր դաւալ կուտա կանչել ուր ուզտի իւամար, մարդ, մատաթ սալըխ չի տայ. մէնակ մի խատ պառաւ կայ, որ շուփայով (կարծիքով) կասի. աւտա որ թաղդօյենց տուն կէլնի: Ըղտապանն ի կէլնի տյբայքալէն կէրթա թաղդօյի մօր մօտ մախսուս (յատկապէս) կասի. Խաթուն, ևս խիւանդ եմ. խէքիյմ (բըժիշկ) ասե ձիկ մէկ կտոր թաղա ըղտան միս իփի կի կաղէյնառ (կառողջանառ), Ըսկուն ինչ ձեր տան ըղտու թաղա միս կայ, խնդրեմ մէկ էրկու կտոր տուր տանեմ ուտեմ, քեզ լաճ կօրինեմ:

Թաղդօյի մէրն ի, միամիտ, որ չէ կիտե պառվու սատանութեն, կէրթա մառնից խինդ վեց կտոր ըղտու միս կըպիրի կըլցի պառվու վիշ կընամիի. Պառաւ չիւմ կէլնի գռնից տիւս փօղան՝ թաղդօն կուգեա կըտեսնայ, ուրն ուր (ինքն իրեն) կըպարկանայ, ամա ինչ անի, կասի. Պառաւ, պառաւ, արի արի քիչմ էլ տամ տար բէօլ բէօլ (առատ) կե, իմ ջանին տուզա (աղօթք) արա:

Պառաւն ի, թաղդօնի խօսքի վրէն, կըդառնայ կէրթա ինսնց տուն: Թաղդօն ինոր կըտանի մառան, մէկ խատ գհօմրմ (բըռունցը) կուտա մէջ պառւու գյլխուն, կինի տան կըմեռնի: Պառաւն կըտանեն կըթաղեն:

Եսա պանից յետոյ, թաղդօն հա (միշտ) քեյու խետ կէրթայ թագաւուրու խաղինէն (գանձարան) կըկտրի (կողոպտել). Էլ թագաւուրու ճար կըկտրի չիկանա էտա գեողեր պռնե, կըպիրի խաղինի զռան մէջ պիւթին կուզր (ինան (միասին) ծոթ կըլցի: Գիշերյ սհաթ չորսին, թաղդօն կէլնի խետ ուր քեյուն կէրթայ թագաւուրու խաղինէն կտրելու:

Քեյուն կասի. Թեսի, տիւ մտի ներս, ևս կիշնեմ: Քեռին ինչ կըմտնի ներս, չիւմ վիզ մէկ կըխրվի մէջ կողրին կըմնայ. Թաղդօն կըքեաշի, կըքեաշի չիկանա խանե տիւս: Կըխանի ուր կամէն (գաշոյն) քեյու վիզ կըկտրի, կառնի մէնակ ինոր գյլօխ կէրթայ, կըտանի ուր տուն մէկ պուճախմ կըփորի կըփորի:

Են մէկէլ օր, թագաւուրու ասքյըներ կըտանան որ խաղինի մէջ գետ մէկ գեողմ կայ, ամա գյլօխ չկայ:

Թագաւոր կասի. Կայնէք, տիսէյք որ ես ինչի պիտի անեմ որ գեող պռնեմ, հասի. Տարէյք էտա ջանգակ կախէք քեագքիյ ճամբախ ծառի վէրէն, ալպաթ (ի հարկէ) խտոր մէ խատ տէր կայ, կուկեա կիրիշէկի վէրէն, կուլա. Էն ժամտնակ տիւք մուղեաթ (գոյոյշ) կացէք, տեսէյք վմզ կուգեա կուլա ինոր վերէն, գետ էն ի (այն, է):

Թաղդօյի մէր ի, կանի որ կըթա տեսնա ուր ախոզոր ջան-

զակ. Կէրթա էրկու խառ կուժ կտոնի կուտայ մօր, կասի. Մարէ, որ կըխաննես քեյսու ջանդկի մօտ իսկի (ձգիր) կժեր գեյտին, թող կոստի, տիւ էլ նստի տա կուշտմ լաց, թող քեռ սիրտ խովեա:

Մէրն ի կառնի էրկու կուժ, կէրթա ջանդկի մօտ, համան կձգի գեյտին կըկոտրի, կնստի էնտեղ կուլայ, ասքյրներ համան կըխաննեն կըպանեն, կասեն, հայ գեռ էսա ի մեռլի տէր,

Կնիկ կասի. Դէ զէ, քեաշմէյք դէն, ևս իմ կժերաց խամար ի որ կուլամ. ասքյրներ կաւատան ինոր մօր, պաց կըթողնեն էրթայ: Դիշերմ էլ ասքյրներ կըբյնեն, Բաղդօն եավաշմ (հանդարտ) կիշերով կէրթա, քեռու ջանդակ կըգեռդնա, կըթալի քեամակ կըտանի կըխորի. թագաւոր ուր ասքյրով որ կլսի, կշվարին կըմնան:

Էն մէկէլ օրն էլ, թագաւոր կըպիրի ախարի ճամբիսի վէրէն, եռուուն քեառասուն խառ ոսկի կըթալի, կասի. Վով որ կըվերուցի էսա ոսկիյք, պանէյք:

Բաղդօն կըպիրի ուր սօլի տակ կուալը կըքսի, ոս կըչլտի, սօլեր կըխայնի, կուժէր կառնի շալակ շոտ շոտ կէրթա աղպիւր կուզեա ջուր կըկրի, ոսկիյք հա հա կըկպնի սօլի տակ, կըպիրի տուն կըփրթուցի չիւմ պիթիւն ոսկիյքն էլ կըվէրուցի, ինոնյք չեն իմանայ, թագաւորն էլ կըշվարի կըմնայ:

Բաղդագու թագաւոր որ կըլսի էսա գեօղու պաներ, կէլնի մէյ խառ թուղթմ կըճամբի էտա թագաւուրուն; կասի. Ամծի, շատ ամօթ քեյ, որ ջեռ երկրի գեռող չես կանա պանե:

Էտա թագաւոր վէր էսա խապրին շատ շատ կամչնայ, կէլնի դալալ կուտա կանչել, կասի. Որ էսա ուսթայ գեռող վժով ի, թող գետ իմ մօտ, ևս ինոր պան չիմ ասի. հալա փէշըէշ կուտամ (պարզե):

Բաղդօն կէլնի կէրթա մօ թագաւոր կասի. Գեռ ևս եմ էն գեռու թագաւոր շատ կըզպրմանայ, Բաղդագու թագաւուրուն նամակ ինոր շանց (ցոյց) կուտա, կասի. Որ տիւ էն Բաղդագու թագաւոր պաննես պիթիս ըստեղ իմ մօտ, ևս իմ աղչիկ կուտամ քեկնիկ. մէյ խառ ինոր խապարտութեն թող կոտրի, որ չէլնի ըտըսկնայ ոյրի, ինչ կէլնի թող էլնի:

Լաճ կասի. Թագաւոր ապրած կէնայ, էտա իմ ձախ ձեռաց պան ի:

Բաղդօն ի կէլնի մէյ խառ ուր բօյով (հասակով) էրկէն քիւրքմ կառնի, ինոր չորս պիւլոր պիւթիւն զանգակ կըկախի, կըխայնի կէրթա Բաղդագու թագաւուրուն տուն. գիշերով կըմանի էն թագաւուրուն հօտէն. քիւրք կըխայնի մէյ խառ ուր կըզընդգընզացուցի, մէյ քեանիմ տիր ըսըսկնայ ուր թափ կուտայ:

Թագաւոր մէջ ուր եաթղին (անկողնին) կըզարզընտի կըվախենայ կասի. Տիւ վազ ես. Բաղդօն կասի. Ես Գաբրիէլ խրիշտակն եմ. իկերիմ քեռ խոզիյն կառնեմ. Թագաւոր կասի. Աման ես քեյզնէ ըիջա (խոզիր) կանեմ, հալա իմ խոզիյն մ'առնի, ինչ որ կուզես տամ քեյ:

Բաղդօն կասի. Զէ, եան քեռ խոզիյն կուտաս, եան կմտնիս էսս չայմաջէն (արկղիկ):

Թագաւոր վախվընելէն կէրթայ կըմտնի չայմաջէն.

Բաղդօն չայմաջէն կափախ լաւմ կըփակի, կըշկի կըտանի կըդնի էն թագաւորութու տուաչ:

Թագաւոր ինչ կըպանա կըտիսնայ, մունջ ուրախութենէ կըծոի (կըխենդանայ) կասի էն թագաւորուն. Հան ինչին ձիկ վրայ կըծիծղայիր, տիսնամ որ Շմանէն (փորձանքը) մանած ի, պատէն կախած իս, էլ մեղ չըդնես ուրիշներաց:

Թագաւոր ինչին որ ասեր էր, ուր աղջիկ կուտայ Բաղդօյին, մէկ խատ էլ քեօշկ սարա կուտայ ինոր փէզքէյշ (պարզե). ինոյնք խասան ուրենց սրտի մուրազին, մենյյը էլ տիւք էլ խամնէյք մեր սրտի մուրազին: Աստծուց իրեյք ինձոր իջաւ, մէկ ասօղին, մէկ լսողին, մէկ ականջ անողին:

Պատմեց 1910 թ. Օգոստոսի 20-ին Հայոց-ձորի Քերձ գիւղի բնակիչ Մանուկ Սահակեան անգրագէտ գիւղացին:

Այս հերիաթի մի ուրիշ վարիանտն էլ զրի եմ առել Ախալ-քալաքի գաւառում, որ զեռ չեմ հրատարակել: Յոյս ունիմ, որ ուրիշ վարիանտներ էլ պիտի կարողանամ գտնել և այն ժամանակ կըտամ սրա վերլուծութիւնը, որ եգիպտական է և հերոդոտը եգիպտական թագաւորի պատմութիւն է զարձրել:

ԿԱՏԻՈՒ ԿՐԻՒ

Միբացուկ մարդը մ կիէր։ Էանու իրիք լաճ կիէր։ Սաց ուր լաճիրուն, ըիկէք եմ դավլաթթ (հարստութիւն) վար ձի տի պատմիմ, իս աը մեռնիմ, չընի կովէք։ Էանու դաւլաթն էլ էրկանքմ էր, (երկանաքար) դում էր, կատում էր։

Էլաւ էրկանք ըտուր ջուչ ախաղոր. դուռ ըտուր միջնիկ ախաղօր, կատուն ըտուր պղտիկ ախաղօր, փայ (բաժին) էրաւ, էանոնց խէր մեռաւ։

Ջուչ ախաղէր էլաւ ըզուր էրկանք տափց, գնաց երկիր վէր։ Օրմ գնաց, էրկու գնաց, գիշիրը մաղաքը մայայա էլաւ (իջևանեց)։

Ան քաղաք ջաղաց չըկեէր, ցորնի խատ կը տընէն վար քարին. քարով կըկոտրէն, ծէթիր կէնին խաց-խմոր. բէտէր կէնէն ապուր, էրկնքի տէր ըզուր էրկանք ըպիք խտիր գէտին, համան կցով կցով ցուրեն իլից մէջ զըմբացըցուց (պատացըեց), աղաց ծէթիր, արին խաց, բէտէր արին ապուր։

Ապա քարով խատ խատ ցուրեն կուրել տուր. էրկնքով կուց կուց աղալ շնոր պան էր։

Էան քաղքի մարդեր էանու սըցին. Նարա թշ կըսին։

Էրկնքի տէր սաց. կըսին քարխանայ։

Սըցին տիւ չըս ծմխի ըզնա։

Սաց. Բալէ (այս) կտամ խինկ քիս։

Էլան էանու փարէն գեղի մէջ ժողվուցըցին, տվին զէն։ Առից խտի ուր տուն. խտու խացի, խպի ուր ճըժերուն. շնատ շիւարն էր (ողորմելի)։

Էանու ախաղօր աղէտիրն էլ շատ շիւար էն։ Միջնիկ ախաղօր տղէնիր էլան գեացին էանու տուն սըցին. Փշում (քիչ) խաց տվէք մընք ուտինք։

Սըցին. Ռլա (Աստուած գիտենայ), մինք չընք ըտայ, թըզ ձիր խէր ըզուր տուռ տանի ծախի, պիքի տա ձը խացի։

Էանոնց խէրն էլ ըլաւ ըզուր դուռ շլից, գնաց, տանի ծախի Դիշեր թու (ոչ մի) գեղը չըխասաւ. թըթիմ ծառի մօտ պայա էլաւ, (հանգիստ արեց) ըզուր դուռ խտիր վար թըթը ծառին, յինքն էլ էլաւ վէրէն, նստաւ վըրէն։

Տիսաւ գետ իրիք գեռոյ ճամօրըմ (հարուստի) տընէն, աշխընի մալ շատ պիրին, իկին էան ծառը տակ պաժնըցին:

Մէկ սաց մէկէլին. Մըլի աչկի ճամիընէր, մէկ չըգեայ մը տընայ, ըզմի պոնին:

Դուան տէր պանցր լսաւ, մա ուր մտաց սաց. ոլլա նէա մարդեր գեղոյ ին, կըվախանան. փէտըմ էջար վար դռան, ձէն էլաւ, գեռդեր ինչ կէր թըղին դա, հայ փախինք ոըցին, ոլլա էակախած (արթնցած) վար միկ. դըհով զընօվ ընկեած յըտըվ միկ, միկ տը պոնին. ոըցին փախան:

Դուան տէր էլաւ ըզան կաս (այնքան) մալեր ժողվեց, շկեց իրի ուր տուն, խոռո խացի. տարաւ ըզուր ճըժերուն կէրան:

Կատուն տէր պզտիկ ախպէր ըզուր ճըժեր յօրապկից միշնիկ ախպօր տուն:

— Սաց. Գեացէյք քիչըմ խաց պիրէյք կէրէյք:

Էանու ախպօր տուն չըտվին, ոըցին. Գեացէյք տիւ էլ ձըր կատուն տարեյք ծախէյք, մինք ոլլա ձը խաց չընք ըտայ:

Էլաւ վէր, էան էլ ըզուր կատուն իդիր ըզուր չանթէն, պէրան կապեց, էթալ ուր թե. զյնաց նէրվառուց երկիր: Գյնաց ամբին (ամիրային) էլաւ մէհվան (հիւր): Ուր չանթէն կախից պատէն, նըստաւ յօդէն: Հէվարին (երեկոյ) ընթրիս, ձաւար (ձաւարով փելաւ) պիրին էանու, իրիք մարդ խոլամքիր (ծառանիր) փէտեր պանըցին ուրենց ձեռ, կայնան վար էանու զյլխուն: Կատուն տէր չը զյշըթաւ (չվստահեց) խաց կէրէր էր:

Սըցին. Մէհվան, խաց կի:

Սաց. Ըս չըմ զյղչի (վատահանայ) խաց ուտի. վախանամ տիւք ձի տըփէյք:

Խոլամքեյք ոըցին. Զէ, մը վախինայ, մինք ըզքիյ չընք տիի, ասդայ (այստեղ) ջանավարըմ կայ, պուչ քեանձ մաս մի պարակ, ականջքեյք պզտիկ, կըթափին վար կարակուրին կը խարտմին, չըն թողնի որ մարդ ուտի, մինյք էլ կը կայնինյք չընք թըղնի էանոնք գեան, որ մեր մէհվան ըընաթ ըզուր խացն ուտի:

Մէհվան խէասկէացաւ, որ էանունց ըստած մուկն էր, սաց. Տիւք զադացէյք ըստիոց, որ իս խաց ուտիմ, որ չը զատանէյք, իս խաց չըմ ուտի:

Էանունք զատացան, ձաւարի վէրէն ասկոմ (այնքան) մուկ իրի ալ ձաւար մինից չար արավար:

Կատուն տէր ըլաւ ըզուր չանթէն իպի տակ. շուտ շուտ դանկով պէրան քեակից, կատուն ըթող մա միներուն: Կատուն էլ անթի էր, տիսաւ, դէ դէն մկներ խարիր, խաղար ին. վէար կէ-

բուր, վէար խեղտեց, մակալոնյք փախան, ալ տարիմ տիւ ճրագյով կանդէյս (ման գայիր) մուկըմ չըս կէնի տիսնի:

Ամրի խոլաքեյր խարցընցին էանու. Նարա անուն թնչ իւ Սաց. Նարա անուն նռնօ իւ:

Խոլաքեյր ջուղապ տարան ամրին, ըսըցին. Ամսա պանմ՝ կոյ մա մըր մէհվան, մարդ չը կիտի, շէր Բ (առիւծ) պըլընդ (ինձ) ի, թը թնչ իւ. Ըզմիր տան չափալ ջանավըրքիյր, վար ըս-պանից զըմէն, վար (որը) կէրաւ. վարն էլ ջօրով էանու մօտէն փախան:

Ամրէն կանչից մէհվան տարաւ ուր մօտ սաց. Զը խըմար սա, նէմ ջանավըրի անուն թնչ իւ:

Մէհվան սաց. Ինա ջանավըրի անուն նռնօ իւ:

Ամրէն սաց. Զը ծամիսի:

Մէհվան սաց. Բալէ (այս) կըծախիմ:

Ամրէն սաց. Դէ գիյն էրաւ:

Մէհվան սաց. Նարա գիյն խարիր քիս իւ. Զէ տիւ Շէր-դուց ջոջ իւ ամր էնիս, քեյ խաթըլը կանիմ քեասուն քիս տուր: Էլան զեղացիք քեասուն քիս թէշ էրին (բաժանեցին), ժող-վըցին, քեասուն քիս տըլին մէհվընին, առին դկասուն:

Հէվար էր, մէհվան կըսի. Եա Ասաված, չընի վըշվընին, ուրանց փարէն առնին, էլմ էլ կատուն տան ձիկ. ըս կատուն թնչ տը էնիմ:

Էանոնյք էլ ուրենց ամրին կըսին. Եա Ասաված մէհվան չը-փըշմընի, կատուն տանի:

Մէհվան առաւտուն շուտ ուր փարէն վիրուց, Եալան (եա Աստուած) իրի ուր տուն. իտու խացի, իպի ուր ճըժերաց: Էա-նոնյք մնացին խառ ուրենց հալին, մընք դառնանյք կատու կասին (պատմութեան):

Կատուն մաց Շերկընուց գեյդին. արին դէօր (կարգ ձգին), աւուր գըյլօին մէկ ուսկի կատան ամրին բաշխիշ (պարգև), յօր մէկի տուն կըսանին, Բրինձ, միս կը կըցցցին, կատուն ասկու (այնպէս) կըլաւցաւ (պարարտացաւ), էլաւ քեանձ առջըմ: Դէօր կնաց պառվուն: Պառաւ, ճըզկարայ պառաւըմ էր, մէկ էծ կէր էա-նու: Էծ զինից, արաւ կատուն ճաշ: Պառաւ էծու միս կէփէր կա-նէր կայլի կատուու խըմար:

Պառուն էրկու տարիկան աղէմ կէր, Պառաւ ուսկոռըմ էն կալուց իտեր տղի ձեռ: Սաց. Կատուն տայք խարնից (կերակրից) հազ չէնի, էրթամ ճիւրմ պիրիմ, պաղի, նուր տամ կատուն ուտի, ուսկուռմ իտի ուր տղի ձիռ, ջաէն առից դյնաց ճրու:

Կատուն էլ անըթի էր, ուր բամփ էթալ, տղի ձիռնէն միս

առից ուտի: Էանու ճանկվիր տղի ձեռ ճանկըթեց՝ տղի ձեռ էրընուտաւ, տղէն ըլաց, ըզուր ձեռքեր ասկում քսից ըզուր յիրես, խալաւքեյր, զմէն էլաւ էրուն:

Պառաւ ճըռուց իրի, ըզուր տղէն ասկու էրընուտ որ տիսաւ, էլաւ տանիս հաւար էրաւ «նայ հաւար էսա ջանաւար նըռնօ իմ տղէն կըրաւ»:

Դեղական գմէն ժողվան էանու տան բիւլոր, յուրատըսից (երդիկից) ըրըշկըցին, դռնից ըրըշկըցին, պատխընից ըրըշկըցին, չըգյիշըցան (չնամարձակեցան) դարպըմ զարկէրէն կատուն, ասըցին նէա նոն որ փրթընի մա միկ մէկ չըթղնի: Միկ չընք զյիշընայ դարպըմ տայ նէա ջանաւարին: Պոնինք պառուն լաճ Ասսված չըտըլի, միկ տուն վառինք, կատուն էլ մէջ վառուի, զըմէնս էլ փրթնինք էանու մօտէն:

Էլան վէր, կրակ թըղըցին պառու տուն կըպուցին: Կատուն բնչըն ծխու մէջ կըմնայ, յուրատըսից կատուն փախաւ տիւս, պառու լաճ տան մէջ վառվաւ:

Կատուն կնաց, կան իրի, կան իրի, հէվարին կնաց շէխ ամըրի տուն:

Շէխ ամիր Շէրմնուց անպրէն էր (ամիրայ): Կնաց շըխ ամըրու յօդէն: Շըխ ամիր չլուս էր (մերկ). շըխ ամիրու սանկվիր (ամորձիք) մաջ վուքիյրուն յիրար կառնէր. կատուն կիցաւ թէ մուկն էր. էղար խըմնէ (արմատից) կարից տարաւ:

Ամրէն ըսաց ըզուր կնկան. Կնիկ, դէս արի, նէա նոնօն իմ չուր ուսկորմ էր տարաւ, քուն չիօ (արդէն) կակուդ կաշիմ ի ար տանի, տըմնաս շիւարի:

Այս տեղ՝ քրդերէն ոտանաւոր են ասում.

«Փըսիկէ պալա գորի, հարամէ պալա կորի.

«Զօ նաւ չար, տորեան էվարի,

«Զօթէ հաֆթ կոնդան պատալ կըրի:

«Փսիկէ պալա գորի, հարամօ պալա գորի,

«Զօ ըլտար թըվկայ շէյխ ամիր էվարի,

«Լէտա կոնկէ շէխ ամիր պրաւ պնվա բրի,

«Շէխ ամիր կօ ժընա խո պըտօ որա պը հաւա,

«Եամըն պստըկ րութ պու պըր,

Եա տա ֆարմակ բաւատ խաւաւ:

«Փսիկէ յինա մինա, ար տարըկըտ պիստ փէնջ,

«Ճէժըկ պըհաւ ուստինա.

«Եա պըչուկ պըդաստակայ պըճաւակայ,

«Տըրէժիտ ջըհէ Շէրվան, Նամրան, Հիզան,

«Թէրա մըն նինաւ»:

Թարգմանութիւն.

Դէլու նմանող կատուն, պստի սրանկանջ կատուն,
Կնաց մէջ չորս ճամբխին դատրաւ.

Եօթ գեյզի վար ու ցան պաթալ էրաւ (ոչնչացրեց):

Դէլու նմանող կատուն, դէշ սրականջ կատուն,

Կնաց շէյխ ամիրի օջախի մօտ դատրաւ,

Էդար շէյխ ամրի սանկվեր քօքէն տարաւ.

Շէյխ ամրէն սաց կնկան, աղջիկ, փախին,

Իմ չոր ուսկիւռս էր տարաւ,

Թոն ըշխայ կակուղ կաշի մի:

Կատու չը մնացած կըպատուի,

Քառն հինգ ձագ մէկ տիրու կը պերի.

Պղտիկ մէկ ձեռնոտ մէկ աշկով.

Կըսի Շէրվանց, Նամրանց, Ալզան,

Ջիկ չը բասայ (չի բաւականանայ):

Կէնին վեր, ամրի եօթ գեղրանք յըրչվէ էան ջանաւըը
Նանօին կըթընին գեղեր, ուրենց աներ, կըփախին, կէր-
թան զատու գեղմ կըպահնըաւին (կը ժողովին) կըսին.

«Էկէք խարիր մարդըմ կտրիճ ժողովընք, հանք տեսնինք
նէա նանօ մըր գիղեր աւրից, վառից, ինչ էրաւ:

Կէնին էրկու խարիր խողի Փէրըսքի կըգեան գէյդի քամակ
սարըմ կայ. կըգեան հանդի, չըն կախշի (համարձակի) գեա մօտ.
կըփախնան, նանօ էանունց ուտի. էան սարի զյլիուց կա-
րըշկին գեյդ. ինչ աը տեսնին.

Կատուն էլ ընկերի տնիր. կուշտ կալի (կեր) կիրեր, իլիր
յըրջն պատիր նստիր արիւ. ուր փամփ կըլիզի կըտա ուր զյլօխ:

Ապա կատուն որ հար (միշտ) ու փամփ կըլիզի, էանունք
կըսին. Ոլլա, գեօ կատուն կը յէրդընայ (երդուոմ է) կըսի ձի
զըմէն տուտիմ, չիւմ ձիր կըտայ ուր զյլօխ, ուր զյլօխն էլ կը
հարդինայ կըսի, ըզձի մէկ չըմ թողնի, զըմէն աըսպանիմ, տու-
տիմ:

Հէան տեղէն զըմէն թողին փախան գեացին վար ուրենց
տնիրուն, էրին հաւար սըցին. էլէյք, էլէյք, փախինյը, կատուն
հէրտըզիր ի մէկը մընէ չըթողնի. էլէյք էրթանք չիւր Պոխտանից
(Պօհտան զաւառ) կաղէն:

Դեացին գեացին խասան Փըրա Միր կարմունջ, ընցան
կըխտանից տեղ:

Էլան վե ժողով դըին, քեասառուն վաթսուն գեյդէն սըցին.

իսա չըլաւ. մինք տըէրթանյը եան ըզմի զըմէն թալֆացըինյը (ոչնչացնենք) եան տի նոնօն տը սպանինք,

Ժողվըլան հըմէն գերդից իրեք չորս մարդ, շէյխ ամրու լաճ խէծաւ ըզուր ձին, ընցաւ յըրջնքիր:

Զուրին զէնքեր, թըփկտիր (հրացաններ), թրեր առին, կասա ուրենց գերդին էրին որ հան կատուն ըսպանին: Կըլնին իրեյք խարիր մարդ, զէնքով գացին գեղի մօտ. չըմտան գեղ. կըվախէնին նոնօից:

Սըցին. Մենք չընք զյխշի քօմ էրթայ: Մըր մէջ կտրիճ շէյխ ամրու լաճն ի. թըզ էն էոթայ յառաջ: Շէյխ ամրու լաճ ըզուր ձին խէծաւ, ըզուր մատալ (վահան) առից, ուր թըփակ (հրացան) էթալ թեն, կնաց մօտացաւ: Ապա կատուն ինչ տը ըսէր: Ընսընից չէր փախի: Մօտացաւ շըխ ամրի լաճ, Տէր Աստուած ես թըփկով զարկիմ վախէնամ մէկ դրա չըսպանվի նոնօն. դառնայ զմի զըմէն տը սպանի, ուտի: Թուրբոմ զարկիմ, վախանամ մէկ դըրա չսպանի, էլմը տը դառնայ զմիկ զմէն սպանի ուտայ: Մօտացաւ զուր արէն (վերարկուն) էթալ վար կատուն, կատուն մնաց տակ:

Զիուց էջաւ, նոնօն փաթըթից մաջ արին: Էլաւ խէծաւ ձին, խտեր յուր յըոջե՝ մաչ թամբեյն (թամբ) արի մէջ փաթըթուկ, էլաւ քշից էկաւ մատ ուր մարդեր:

Զըմէն մէկ տեղ էկան կաստ (գէմ) իրենց աներուն էրին: կանունց կաւլ (պայման) որ շէյխ ամրու լաճ նոնօն պիրէր վար կարմնջին, թալին գեյտ, էնու խըմար տըներաց մարդ էն արիր կարմնջի յըոջեն, մախենյը (նայենք) շըխ ամրու լաճ կարիճ ի թէ կատուն:

Շէյխ ամրու լաճ իրի կայնաւ կարմնջի կէս տեղ: Կարմունջն էլ բարդի ծասիմ քօյ պարձր ի. չը գըյխցաւ ձեռ տէր ըզկատուն: Կէս կարմնջին արօվ (վերարկուով) զկատուն թափ իտուր մէջ ջրուն:

Կատուն փահլըվան էր. զինք ըթալ օլխու (ձիու) զյլօխ պռնից: Զէ որ կատուն կախվաւ էանու աշկվհիրեսից, օլախ վի թըռաւ, օլախ ըզէյխ ամրի լաճ կատուն խնդրաց (միասին) կեացին մաչ գեյտին:

Օլախ, կատուն ընդեան տիւս գեյտից, շէյխ ամրու լաճ ջուր տարաւ խնդրեց:

Կատուն թռաւ նստաւ մաջ օլխու թամբին, օլախ վաղից մաջ տնիրուն:

Կարմնջի վերև մարդեր փախան թախ տընիր. սըցին. Հայհաւար. փախէյք, փախէյք, նոնօն շէյխ ամիրու լաճ էթալ ջուր.

խնդախց, թըստ ձիու քեամակ կառաւ տնիբուն էրաւ Զուր (մինչ) մըկա վուտաւուր էր, մկայ ըլաւ ձիեաւուր, ոնչ էք տըթողնի մըր մօտէն, ոնչ որձ, փախէյք:

Էան կեաս տըներ, ուրն տուն, տաւար ուչխար թըղին ժամանաւ:

Էան դիմին կարգանմ իրի, քօչար էն (վաչկաններ), կատու տէսէրէն էանունք: Թօչար որ տիսաւ յարջն կատուն կըփախին, սաց. Ընչին կըփախէյք: — Սըցին յըրջն նէա ջանաւրին կըփախինք, ըզմէկ ար ուտի: Թօչար դարձաւ փէշըմ ըզար ըզկատուն սպանեց, էն կրտար խարիր գեյզի մարդեր ազատվան: Նամուս (պատիւ) խասաւ քօչին:

Նէա հաքայաթ Շէրմնուց երկիր ըլիր. մըկայ էլ էան կաղէք (զաւասներ) մարդ չը կախչի նէա կասէք էնի, վավ էն կասէք էնի, զին կսպանին:

Պատմեց 1911 թուի յուլիսի 14-ին Արմշատցի Յուսէփի լաճ Խըղղաթը, անզրագէտ երկրագործ, որ ձմեռները քրդերի դիւզերում բուրթ է զգում: Այս հէքիաթը սովորել է քրդերից:

ՅՈՒՍԵՓ

Մարդը կէր, էանուր քուրմ կէր, էն մարդ նէճըվան (որուրդ) էր: Կըհէր սարեր կըպաըտէր, նէճիր կանէր, պիրեր ինք ուր քուր կուտէր:

Օրմ էքա մարդ կնաց մեաց սար. հէրմ (այր) դէմ ասից էանու. մէջ էան հէրին կրակ կէր վառած, իրեյք շիշ էլ գեօ մաջ կրակին էր. իրեյք մարդու ջանդակ էլ էան տեղ կէր:

Էան տեղ իրեյք դև քնած ին, էան մարդն էլ հա մտիկ կէնէր, հա կըսէր. Ես նէա զեմեր թըղնեմ, էան ըսպաննմ, ձի օգուտ չէնի. նարանք իրեյք մարդ ըսպանած, ուրենց ընթրիսի քար արած կուտեն:

Էան մարդ կըմտածի, կէլնի կարմիր շիշըմ կրակից կըքէյշի կըպարկի մն մէկ ականջ, ան մէկէլ ականջից կըթանի տիւս. Թիզմ կըմտանի զեյտին. կըդառնայ շիշմ էլ կըքէյշի կրակից, կըդարկի միջնկին, էանու շիւր մա զլիսու կօտին (զագաթին) կպանի, տիւս շընկնի:

Նէա էրկու դև էանէա սպանեց:

Մնաց յէտին. շիշմ էլ կրակից քէշեց իզարկ ակընջին, ա-

մենակին չտպանաւ, դարցաւ քեարով փէտով սպանից, իրիքիյ ջանդակներ էլ քէշից էթալ մէկէ գեխու

Նստաւ յըրջն կրազին շատ մէզեց, մէզեց (մտածեց), նէա յըրջին զարկըցի մտաւ ականջ, մէկէլ ականջ էթալ մտաւ խող. ըսել ի. նէա շատ անխելք մարդ էր. խապար մէկ ակնջից կը-մտնէր, մէկէլ ակնջից տիւս կենէր. Մէկէլ կիսուն որ շիշ զար-կըցի մաջ ակնջին, կէս գյլիսուն դատրաւ, սաց նէա մարդ շատ խելացի ի իլնը, որ պան լսիր ա:

Մնաց յիտին ինչ շիշ մէջ չըպանաւ, սաց, նէա չորազյլօխ մարդ ի. կասաւ, էանու գյլօխ չըմտնի, խապար չըկէնայ վըրցի, էն էրկումն էլ էթալ դէն:

Կիսումու գյլօխ կտրից, էանու մաժու (ուղեղի) մէջ ըրըշ-կից, ուլնիկըմ տիսաւ:

Ուլնիկ ինչին ի էանու ձեռաց մէջ չը դադրի. էան էլ ուլ-նիկ իտի ուր դասմըլի (թաշինակի) ճոթ կապից, լուսցաւ հան-տեղէն էլաւ կնաց ուր տուն. սաց. Թորիկ, իմ անձնի խալաւ կեղտառվեր ի. վըրայ, Խալաւ կըխանի կըթալի հան տեղ, քեոր կըտանի վար ջրուն որ վլայ:

Կըրէշէկի էանու ճոթ կապուկ, կարցըկը. կըտիսնայ ուլնիկմ գեօ էանու մաջ. Ուլնիկ կըլողողայ, չդատրի մաջ էանու ձեռաց. կան էլ կենի վէր ըզատ ուլնիկ կըթալայ ուր պէրան: Ուլնիկ կըխաղայ մաշ պէրուն, կըթէշվի կըմտնի էանու փոր:

Օրըս օր, աղջիկն վար ուր կակախի, աղջկայ փոր կը ջոջանայ, արկեցքեյր (զըրացիք) կակախին, որ աղջկայ փոր ջոջա-ցիր ա: Ախալօր յիմաց արվին. ըսին. Պալէ շատ մարդ աղէկ աւեր քըյ քեոր ուղին, տըվող չէլար, մկայ նէա ինչ տէարք (ցաւ) էկաւ վար աղջկան:

Էանու ախպէրն շատ տրտմաւ, սաց. Շատ մարդ իմ քեոր ուղեց, չըտվի, նէա տէարք էկաւ միր յիրես:

Միտք կէնի կըսի. Եմ քեոր տանեմ սար ըսպանեմ: Կըտառ-նայ էլմ էլ միտք կէնի կըսի ուր քրոջ. Թուրիկ, էլի, իրեյք վե-րու ոխչար սպանիր իմ, հանք սար, մեր պղինձ տանինյք հան տեղ, իփենյք, չըմ կէնա պիրի, խալկ (ժողովուրդ) տի տիսնան, աշկ ա' տանեն, աշկով տը տան մի:

Քեոր ըսաց. Հայ ախպէր. խարիբ ոխչար սպանիր իս, ձի չըս ըսեր, էրի հանք սար. հասօր (այսօր). իրեյք ոխչար հապով (համար) կըսիս արի հանք սմբ: Պանմ մա քիւ սրտին ունիս տիւ. իմ փոր հապով, կուզես ձիկ սպանեմ:

Հայ ախպէր, ես քիյ ըսիմ որ, ես հանա պանից անարատ իմ, Աստված գիյտի, ես ակախ չունիմ թու մարդուց (ոչ ոքից):

— Պանմ ես վար ձիկ ակախեր եմ, ուշնիկմ կէր, գեօ քիւ խավլի ճոթն էր, անի թալեր եմ իմ պէրան, տարիմ կայ որ էան ուշնիկ դեօ վար ձիկ, մաջ իմ փուրուն:

Ախաղէր միաք կէնի կըսի, դողրի (ուղիղ) կըսի իմ քեռը. ուշնիկմ կէր իմ ճոթ, կէնի վար հանդուց իլեր ի:

Ախաղէր խէլացի էր, ընգեաւ էանու խելք, էլ ձէն չխան քյրոջ, պէլմ (ժամանակ) մնաց:

Օրիր էկան լցվան. աղջիկն ընկաւ յիրջն ցաւուն, ցաւ քէաշեց. ախաղէր միաք էրեց, սաց. Ես համ (գնամ) աստպածավախ կնիկըմ զրկեմ մա իմ քեռը: Կէնի կընա (կէրթայ) մէկ կնիկըմ կըյազօրկի կըգեայ մատ քեռը: Կըսի էան կնկան. Տիւ քեռ Աստված սիրես, ինչ տէարք որ կըգեայ վար եմ քյրոջ, տիւ ձիկ սաղն սիս:

Էն կնիկն էլ կէրթայ մա մարդու քեռն. հար փորն կըխիծա կը թալթալիի, թը սընաթըմ թի էրկու, կը որձկայ կը խաղայ. զատըմ էանու պէնից կըթունի տիւս, կըրըշկեն որ ոնձընի (ողնի) ի:

Ոնձնին կըպոռայ, մարէ ձի գէյտնից վըրցէյք, ձի ծածկէյք: Մէրն յիրես չարաւ յինի. սաց՝ Զոջ մէր, ձի վրցու, ես ափսս իմ:

Զոջ մէր կառնի զէնի կը փաթըմի մա լաթերուն. կըթալի փանջարէն: Կընստին մէրն ու պառաւ կըսին. նէա լինչ զարմանք պան էր:

Ոնձնու (ողնիի) քեռին դռնէն կըգեայ, աղջկան ախաղէրն ի. ոնձնին կըպոռայ, կըսի. Քեռի. էրի տիւ բարով էկար. ես քըքեամկի թուրն եմ. կասափաթ մանի. ես քեյ խասուկ եմ (կը հասնիմ):

Քեռին կըգեայ կընստի, ոնձնին կըսի. Ձի դիր իմ քեռու գեռք:

Զոջ մէր կինի ոնձնին կըվերցու կըդնի էանու քեռու գեռք: Աղջկան ախաղէր կըսի ջոջ մօր. Հայ եմ մէր, տիւ Աստծուն սա. մարինք եմ քեռը ինչ օրէնքյով նէա ոնձնին իսի:

Զոջ մէրն կըսի. Հայ ախաղէր, ես ինչ տիսիր եմ, էն էլ կըսեմ:

Աղջիկ կըդտունայ կըսի ուր ախաղօր. Հայ ախաղէր, չէ որ ես քիյ սըցի, ես անարատ եմ, իմ պէրան վեր ուշնիկ կնաց, պէրան վեր էկաւ տակ: Շամպախ տուր ընի մարդ հա. ան ճամպիսով կըգեայ, ճամբախ եմ պէրան էր. ես յըրջն Աստծուն անարատ իմ:

Ախաղէր շնտ խնդացաւ, սաց. Օրջնեալ Աստված, զադ տէարք գէյշըմին չըտեսանյք:

Թեանիմ օր կը մինայ. օրմ էտոտ ոնձնին կըսի. Թեոփ, իլի պահմ ի ուրտեր (պատահել). Թագաւորն էրազմ ի տիսեր, դրեր վար վազրի վրգին իմ էրազ պատմես ըսեր. որ չպատմես պյօխդ կըդարկեմ. Վազիր կընի շատ կըմաթի (կըսրտմի). քեաղայք կը-պըտըի, վար (որ) մարդ տիսնայ էրազ պատմի:

Կըսի, իլի ձի դի քը ծոց, տար վոզրի տուն ես, տիւ վո-զիր կէհանք թագաւորի տուն, էանու էրազ կըպատմեմ. Թեոփին էլ կինի դընի ուր ցոց, կասա վոզրի տան կանեն.

Պարն կըտայ վոզրիր, պարև կառնի, կըսի. Տիւ թշ մարդ ես: Կըսի. Թագաւոր էրազմ ի տիսեր ի, իկեր եմ պատմելու:

Վոզիրն էլ շատ կուրախնայ կըսի. Որ էանու էրազ պատ-մես, խարիր ոսկի ես տամ քեյկ, տար քեյ խամար:

Վոզիր առից զմարդ կնաց թագաւորին տես, սաց. Վոզիր, թնչ ի, պիրթը:

— Սաց. Պիրի, թեագաւոր ապրած կէնա:

Էան ոնձնին կըսի. Թեյոփ, ձի դի վար, թագաւորի աթո-սին, ես էանու էրազ պատմեմ:

Թեոփին ըզոնձնին ուր ծոցից էխան իդի վար աթոսին:

Ոնձնին սաց. Թագեաւոր ապրած կէնայ. ամ էրա (հրաման) ձմերուկըմ պի, ես քրտուկ իմ, ուտեմ, քիւ էրազ պատմեմ:

Թագաւոր կըյդրի ձմերուկմ կըզիրի:

Ոնձնին կըսի ուր քեյուն. Դանակ տու:

Թեոփին իտու դանակ. զըսայ զընայ դանակ վար քեյուն պախից, սաց. Թեյոփ եմ դանակ տի՛ւ գողցար:

Թեյոփին իէմին (երդում) ըըաց, սաց. Ես քեռ դանակ չըմ գեոզեր:

— Սաց. Կապուլ չէլնի, իմ դանակ տիւ ես գեոզեր:

Թագեաւոր կըսի. Ա՛ռ քիյ դանակմ էլ:

Կըսի. Զիլնի, թագեաւորու դիւան դանակ գեոզնան, չիլնի որ չիլնի:

Ոնձնին սաց ուր քեյուն. Զընի պէտք ի քեռ խալաւ խանես, տըկլոզնաս:

Թեյոփին, չար, նա չար էլաւ տկլոզցաւ, էլաւ մատի պէս:

Սաց. Տիւ ճնս. Թագեաւորն ի եմ գեոզ:

Թագեաւոր դարմացաւ սաց. Նէա ինչ զարթնալի պան ի. մեր աշկով տիսանք:

Սաց. Թագեաւոր, թնչ կըմէզիս (կը մտածես), իմ գեոզ տիւ ես, ըմքեան չկայ (անկարելի է) տիւ էլ տը տըկլոզնաս:

Թագեաւոր՝ չար նա չար տըկլոզցաւ, էրազ արիսեր էր, չէր կէնայ վար չըտըկլոզնէր. Թագեաւոր տըկլոզցաւ

Թագեաւորին սաց. Եմ գեղող տիւ չես, վոզիրն ի եմ գեղող։
Վոզիրն էլ ասնա տըկողցըցուց, սաց. Էլի չեղաւ, տիւ էլ
իմ գեղող չես։

Ոնձընին ուր քեյռուն, վոզիրն սաց. Էլէյք դուռ էանունց
խամնեց դիւռ։

Թագօխին սաց. Տիւ ես եմ գեղող, պըտի տիւ էլ տըկողնաստ
Թագօխին սաց. Ես չըմ քեռ գեղող։

— Սաց. Տիւ ես եմ գեղող, ճար չըկայ տըտկլողնաս, որ ես
աւտամ (հաւատամ)։

Ճար նա չար, թագօխին էլ տըկողցաւ։

Սաց. Եմ գեղող տիւ էլ չես։

Խըտամին (ծառային կամ աղախինին) սաց. Տիւ ես եմ գեղող-
Տիւ էլ մա տըկողցի, տիմնամ։ Խըտամ շատ էլ ուր վիզ գան-
կին էջար—չըմ տըկողնա՝ ըսաց. Թագեաւորի հէքիմներ էանու
էլ տըկողցըցին, ըրըշկացին տեսան որ մարդ էր խտամ։

Հասց. Հայ թագեաւոր, տիւ էրաղ տիսեր ես, քեռ էրաղ
պատմեմ, Տիւ տիսերես ձուկըն մաջ ծովուն թըրթըրփացիր, ջուրն
թուիր թախ քյե, (քո վրայ) տիւ չափալիլիբեր իր (ապականուել
ես), քիւ էրաղ նէս իւ նէս (ծառան) կնիկ չի, մարդ ի, կէնա քը
կնկան ծոց կըմտնի, քը կնիկ կըչափալվի. տիւ էլ կըմտնիս քը
կնկան ծոց, տիւ էլ կըչափալվիս։

Թագեաւոր, կընիք ըզուր կնիկ, ըզուր խըտամ կըքէյշի, ոուր
կը փրտի։

Ին թագեաւորին խօրօտ աղջիկըմ կէր, ոնձընու էաշկ ըն-
գեաւ ըզէն։

Թագեաւոր էրկու խարիր ոսկի էտու ոնձընու քեյռուն, էկան
վոզիր տուն. խարիր ոսկի էլ վոզիր էտու, էկան վեացին ուրենց
տուն։

Թեանիմ օր վըրէն ընցաւ, ոնձընին կանչից ուր քեյռուն
սաց. Ի՞նչ կըսիս ոնձընի։

Սաց. Թեյռի, տիւ տը հաս թագեաւորի աղջիկ ձը խամար
ուզիս։

Թեոին կըսի. Հայ ոնձնի, տիւ ոնձընի ես, տիւ մարդ չես,
թագեաւոր մեր ոյլօխ կը զարկի, մեղիկ աղջիկ չիտայ, քյյ աղջիկ
չիտայ։

Ոնձընին ուր քեյռուն շատ զօռ էրաւ. Թեոին չար նա չար
զյնաց. Թագեաւորի սարէն աթոռ զրուկ էր, զընջիլ կախուկ էր,
ըսին. Օրէնքըն իշկ ի, վավ վար էման աթոռին նստի, զընջիլ շաժի,
էանու պարեկամըթեն կուզի թագեաւորից։

Թագեաւոր կօղօրկի էան մարդ կըսանի ուր դիմաց, կըսի

էանու. Տիւ ջոջ դըռներ մտար, և քեյ պան չըմ ըսի, պանմ կայ քը պիւլոր, որ տիւ իկիր եմ դուռ.

Ես եմ տուրք առ քի սեմ:

Թագեաւոր կըսի. Կուզեմ ասս ըզտա պեռ դրամ, յըրջվուն ոսկէ տիկմ վար պէռան, յետվուն ոսկի կաքեւըմ վար պեռան: Կուզիմ քեյնէ իրեյք խարիր խէծած խարսընուր (հարսնահիւր), խարիր էանունց խալաւ սիվ, անունց ճակեր (զէնքեր) սիվ, անունց ըըմիր (նիղակ) սիվ, էանունց ջրեր սըվտակ, անունց զէնքիր սըվտակ, անունց ձիանքն էլ սըվտակ: Խարիր էլ էանունց խալըգքեր, ճակեր (զէնքեր) կարմիր, ոլըխեր կարմիր, ըըմիր կարմիր: Թիւ քօշկ ու սահրէն (պալատ) քեանց եմ պարցը խորոտ ընի, քը յէգիյն (այգին) քեանձ իմ մեծ իլնի, հաւուզ (աւազան) մաշն իլնի, նէա ի իմ տուրք, քեյնէ կըսեայ, էրի դիմաց, քեյնէ չիգեայ, նստի քը տուն:

Էան էլ (քեոփն) կըտրտմիր, կէնի կընա ուր տուն:

Ոնձընին կըսի. Թեյոփի, տիւ թնչ արիիր:

Թեյոփին կըդառնայ կըսի. Ես մոխիր տվի վար քեռ կօտին:

Նոր էլմ ուր քեյուն որ հէջըզուց, սաց. Թեագաւոր թնչ սաց:

Թեյոփին էանու պատմեց, սաց. Թագեաւոր նէա ուզից:

Ոնձընի սաց. Թեագաւոր պանմ չուզեր Թեյոփի, հելի կնա դէմացի քար, հէրըմ (այր) կայ հանտեղ, էրկու մարդ կայ հան տեղ, մէկը Պուզոս, մէկը Պիտրոս, անոնց սա. Պիզոս, Պիտրոս, Յուէփի ըսիր դըդումըմ ձի խմար յօրօխկին:

Թեյոփին կնաց սար—հէրն մէջ, անունց կնտաւ (գտաւ) ասկուն էլ սաց անունց: Դըդումըմ տվին էանու, առից էկաւ մա ոնձընին: Ոնձընի ձեռ իտու ուր հընթի տակ, տակըմ փէտ էխան, էղար վար դըդմին, սաց. Զի քեյնէ կըվտի ասկում ուսթա, ասկում սարակ (մշակ) զեա մէկ շաբթու մէջ քեօշկ ու սարէմ շինին: Ճը խամար, որ քեանձ թեագաւորու սարէն աղէկ յառաւել ընի: Եմ յըգիյն քեանձ թեագաւորին անուշ ընի. յըրջն տան իլնի: Եմ հաւուզ քեանց թեագաւորու հաւուզն աղէկ, անուշ իլնի մէջ էանու սարին: Տասն ըդտարեն դրամ թեագաւորու աղջկայ խըմար նազտ իլնի: Իրեյք խարիր խէծած, խարիր էանոնց խալաւքիր սիվ, զէնքեր սիվ, ըըմիր սիվ; ձիանք սիվ իլնի: Խարիր էանունց խալաւ սիվտակ, անոնց զէնքեր սըվտակ, ըըմիր սըվտակ, ձիանք էլ կարմիր, զէնքեր էլ կարմիր, ըըմիր կարմիր իլնի:

էան տիսաւ, որ մաջ մէկ շաբթու էանու քեօշկ ու սարէն քեանձ թագեաւորին էլ հաւել շընըցին բարձրացըցին, յըզին յոջն տան յառէջ քեանձ թագաւորին էլ անոց. հաւուզ մէջ քեանձ թագեաւորին էլ խօրոտ, ձիանքեր ուզածի պէս հազըր, տաս ըղ-տարեռ դրամ, ոսկի այլօր (աքաղաղ), ոսկի կաքեաւ էանու վրէն հազըր ու պատրաստ:

Էանսա փառքով յօզրկեցին թը թագեաւորի աղջիկ: Թեա-գեաւոր որ ըրըշկաց, տեսաւ որ փառք շատ փառաւոր. թագաւո-րին լայեղ կըգեայ, աղջիկ իտու էանոնց:

Թագեաւորի աղջիկ խանըցին տիւս, խէժըցին, առին, պի-րին ոնձձու տունն: Եօթն որ եօթ գիշեր խաղ խարսնիս ըրըցին, փըսակըցին վար ոնձընուն:

Անու խատամ (աղախին) էանոնց տեղ—ջուլ (անկողին) իտի յօդէն: Էն ու աղջիկ նստան վրէն: Մտածըցին մըկայ իրիկ կը-գեայ. խըտամ կիլնի կէրթայ ուր յօդէն:

Թագեաւորի աղջիկ կըտիմսայ ձէնըմ փանչարից կըգեայ, էան էլ կըզարմեայ, մարդ մաղաթ չըտիմսայ, ամա ձէն կը-գեայ:

Մէկէլ ըըշէկից փէնչարից ձէն կըգեա, կըսի. Հայ, թագեա-ւորի աղջիկ, ողըրքեյր, ոըջալ քըպարքեյր (աւագանին) քեյկ ու-ղըցին, տիւ մարդ չառիր, իկեր ձիկ նէա ոնձընթն առիր:

Կնիկ սաց. Տիւ մա ձիկ մաղբուլ ես (ընդունելի), թանկ ես քեանձ զըմէն ոըջալ քիպարքիր:

Մէկէլ կանչեց սաց. Թագեաւորի աղջիկ, զարմալու պան էր, ասնէմ (այսքան) սէրսուփ (մաշուր) ջըհէլքեր, սատրազամ-քեյրու տղէյստիր քիյկ ուզըցին, տիւ մարդ չառիր, էկար ձիկ, նէա ոնձընթն առիր քեյ. իսամար:

Թագեաւորի աղջիկ սաց. Ես շատ սէրով քիյկ կուզիմ, Աստ-ված ձիկ քիյ խըմար էր արիր, որ քիյկ առնի ձիկ խմար:

Ոնձընին ձեռ իտուր ուր պողպատ (օձիք), ուր կաշին էխան էթալ, էլաւ աննման մի սպահի ջէկէ, էկաւ նստաւ թագեաւորի աղջիկ մօտ:

Չեռ թալըցին մէկզմէկու վիզ, մէկզմէկէլ պաքնըցին (համ-բուրեցին), քէի ուրախութեն էրին չհուր ի-լոս բացվաւ:

Ջըհէլ—ոնձընին—ուր կնկան սաց. Ես խնդիրք կէնիմ քեյ-նէ, որ տիւ մարդու չըսես, թէ իմ էրիկ մարդ ի, ուա, նէա ոնձ-նի ի, որ սիցիր՝ մարդ ի, ես քիյ ձեռնէն էլայ, տիւ իմ ձեռնէն: Իմ անունն էլ Յոււէկի ի:

Մարդն համէն օր ուր նետ անեղ կառնի կէհա սար նէճիր (որսի), կան կըգեայ:

Տարիմ էրկու ամսա (այսպէս) անցուցին: Կընքթիր (կանայք) հար (միշտ) կըժողվին, թագեաւուրու աղջկան պիւլոր կըսին. Վույ միր աշքեր քը խրմար քօնայ, որ տիւ իկար նէս ոնձընին առիր. Թնացիր ոնձընու ումուտին:

Թագեաւորի աղջիկն էլ շատ նաչար կըմայ կըսի. Թեև սէվավորներ, մա ևմ իրիկ ոնձընիր ի, իմ իրիկ մարդ ի, ջըհէմ ի, որ չուտէն շըխմէն յինի իրիշկէն, Խարիք ձիկ բէզըրշըցիք, ասիյք ու ասիյք:

Կըմայ յըրկուն (երեկոյ), էլ աւուր գալու ժամանակ էանու իրիկ տուն չէկաւ: Մնաց քնելու կեախ՝ չէկաւ Մէկէլ որն էլ չէկաւ, տաս օր էլ աշկից, էլմէլ չէկաւ, սաց. էյ վախ, ևմ էրիկ. սաց, որ մարդու չըսիս իմ իրիկ մարդ ի. ևս սեցի, իմ իրիկ իմ ձեռնէն էլաւ, հէյ վախ:

Առաւտուն թագեաւորի աղջիկ էլաւ գյնաց շուկէն, պօդպտէ սօլմ էտու շինել, պօդպտէ փէտըմ պրնից ուր ձեռ, էլաւ ընզեաւ երկիր պտըրտից ուր իրկան սօրօն (տեղեկութիւն) չասից:

Դարձաւ էկաւ մատ, ուր խէր, սաց. ևս քեյնէ կուզիմ, որ տիւ իրեք ճամփին մէկ մէկ խանմ (պանդոկ) շինես. ևս նստիմ էան տեղ, էանու մէջ, էրթըցող գեացողից խարցում անիմ, խենք ևմ իրկան սալըզ շըմ առնի:

Խէրն էլաւ խանըմ շինից իրեյք ճամփու մէջ. Աստվորի մալ-մուլը հիլից հան տեղ: Աղջիկ նստաւ մէջ, հացող գեացող, երկիր և երկիր իկին գեացին, զէատ խարբարըմ չասից ուր իրկան մօտէն:

Սաց. նա չէլաւ Դալալ իտու կանչել սաց. Վավ հաքայէթ կիտի, գեա ձիկ սի, Թեանի խատ որ հաքայէթ սի, ասկում (այնքան) չարիի (5 զրուշ) տամ էանու:

Մէկ կորըմ (կոյր) գեղըմ հէր, էանու քուրոշ լաճըմ կէր, պղտիկ էր, սաց. իլի խա ձիկ էրթանք թագեաւորի աղջկան խան, ևս խարիր կըսայ (հէրիաթ) կիտիմ, խարիրն էլ կըսեմ, խարիր չարիի կառնեմ, անէլ ապրըլիս մէ միկ:

Էանու խարզէն էլ (քեռորդին) կըսի. Թեսի, ոլլա էրկու իրիքմ էլ ևս կիդիմ, էանքը:

Կէլնին էրկուս կըտան ճամբախ, կըգեան դաշտիմ մէջ, չընարի ծառի տակ, էան տիղ յաղպիւրմ կայ, կընեղանան, կընստին վոր ան յաղպրին, խացըմ կուտին կէլնին կըքյնին հանտեղ:

Կորն (կոյր) կըքյնի, խորզէն (քրոշ տղէն) յըշար (արթուն) կը գատրի, Խորզէն խատ յաղպրին կըխաղայ, կիրըշկի, կըտիսնայ որ հան դըտումըմ կտյ մաջ յաղպրին, կանի չանե, չիգեայ ուր ձեռ:

Տղէն կըսի դըտմին. Որ տիւ չորսաս, խառնիս, մկայ ջուր քէնով աը խմիմ:

Տղէն մէկէլ տիսաւ որ, գըտում էլաւ եղվընիկըմ (եղինըու) կըթոնի, կէհա տըմաց մա պանցը քեարիմ վըրէն կընստի: Տղէն զուր քեռին էթող մաջ քնին. եւղնկան յիտև կնաց, կնաց չիմ հան քեար ինչ եղվընիկ մէջ:

Տղէն կաշկի կըտիսայ, որ իրեյք գեղեցիկ մարդ կէր յանտեղի էանտնց տակ պպտիկ տեղմ սօլերու տեղ կըտընայ. յինք կըմտնայ յանտեղ, վէրէն կըմթնի, կըտընայ պառաւրմ անդիխէն կըգեայ, էրկու ջաղցըքեար խակեյր ոտքեյր, աջ ծիծըն թալեր վար ճապ թիւին, ճապ ծիծ թալեր վար աջ թիւին: Եանու ատամքեր մէ մէկ չարէյքմ յէրէէն ի, իրէյք աման կերակուլ գեօ էանու խետ, մէկը մէկ ձեռ, մէկը մէկ ձեռ, մէկն էլ վար գյըլ-խում:

Տղէն որ ըզպառաւ տիսաւ, զարզընդաւ (զարհուրեց), զինքը կծից ետ:

Պառաւ զէն չըտիսաւ, կերակուլիկեյր էտու մէկը Պըզուման, մէկը Պըտըբսուն, մէկն էլ Յուսէփի յըրջնւ:

Պուղումն ու Պիտրոս ուրենց հմակ (կէր) կիրան, Յուսէփ դուր իտիր սօներու տեղի Պառաւ կնաց:

Տղէն զան կերակուր քէյըը ուր յըջն ու կուշտ կէրսւ մնաց հանտեղ չուր ի ինը լըսուն:

Խը լըսուն պառաւ իրի. էլմ էլ իրեյք աման կերակուլ իպե, մէկը իտիր յըրջն Պըզուման, մէկը յըրջն Պըտըբսուն, մէկը յըրջն Յուսէփին: Պուղումն ու Պըտրոս ուրենց կերակուլ կիրան, Յուսէփ ուր աման կերակուլն իտեր ան սօներու տեղի:

Պառաւ սաց Յուսէփին. Յուսէփի, էն ինչ տիւ ասնէմ (այսքան) մառախ կէնիս, (կըմտածես) խոդէ (երանի էր) ևս գիտնէ քեռ դէլ (քած) կնիկ դմր էր, ևս զէն ճըղճըղէ. իմ ատմքերով զէն կարտէ, փշուրմ եմ շունչ էնչէր, տիւ ըսնէմ մառախից քիյկ փընցըցիր:

Պառաւ անտեղից էլաւ կնաց. լաճ պառվու ըսածներ զըմէն լսաւ, Յուսէփի, Պիտրուսի ու Պուղուսի էղէլութին էլ լսաւ, անոնք քյնան, յինքն էլ ուր եմակը (կէր) կէրաւ, գեախտիկ իջաւ կնաց մա ուր կոր քեռին, նէա որ ինչ քյնէր էր ան չինարի ծառի տառի:

Քեռին էխան վեր, սաց. Քեռի, իլիր վեր, յանակեան ի, (ուշ է) իլի հանք:

Քեռին իլաւ վեր սաց. Զըս թողնի որ ևս կուշտմ քյնեմ, չնարի խով գեօ վար ձիկ:

Տղէն կըսի. Թեսի, նէա էրկու օր էլաւ, դալ տիւ մաջ քյնուն իս, իլե հանք:

Թեոքն ու խորդէն իւան վեր, կաստ թագեաւորի աղջկայ խանին էրին ու կեացին:

Էկան էանու խան նստան, ուրենց խաց կէրան, գեացին մա թագեաւորի աղջիկ:

Թագեաւորի աղջիկ սաց. Դէ, սա կոր ի՞նչ կիյտիս, ի՞նչ լսար, ի՞նչ չըլսար:

Կոր ուր խարիր կուն (հէքիաթ) սաց, ուր խարիր չարխին (հինգնց) առից:

Թագեաւորի աղջիկ սաց. Հայ տղիկ, գօրիս տիւ սա:

Կոր կըսի. Հայ խանըմ, տղէն պանըմ չկիտի, հալա տղա ի: Տղէն յըրջն էկաւ սաց. Զէ, ոլլա, ես կիտեմ, տըսիմ եմ հէքաթ:

Աղջիկ սաց. Դէ սա տիւ էլ:

Սաց. Թագեաւորին աղջիկմ կէր, էանու իրիկ կուրսիր էր, վար ճամբաներուն խանըմ շիներ էր. էկոզ գեացող կըպիրէր հան տեղ խաց կըկըրընէր կըխմըցնէր, փարայ կտէր, որ ուր ըրկընից պանս խասկընէր. Գեղըմ կորըմ կէր, սաց ուր քուրոջ լաճուն. իլի հանք, թագեաւորի աղջիկ խանըմ ի շիներ, ես խարիր եւքաթ կիտիմ, տըսիմ, խարիր չարխի տը տա միկ. Էան էլ ա պըըլսամի: Տղիկ կըսի քեռուն. խարիր տիւ կիտես, մէկ էրկու իրեքն էլ ես կիտեմ, իհանք, էլան ինգեան ճամբախ, էկան մաջ չոջ գաշտիմ յշնարի ծառըմ տիսան, կընան էան ծառի տակ խով կէնին կընսատին: Էան ծառի տակ յաղպիւրմ էլ կայ, կընսատին վար յաղպիրն խաս ջրուն կըխաղայ. կըխի (տեսնում է) գեօ գըդըտումըմ մա ջրուն: Ինչիս որ կէնի, գըտում չիկեայ ուր ձեռ: Կըսի գդմին. Տիւ մեռնիս չորնաս, քէնով ջուր տըմիմի: Տղէն տիսաւ որ գգում էլաւ եւղընըկմ, թաւ կնաց քեարիմ մէջ մտաւ. Տղէն ընդեւա յետն էանու, կնաց գեաղտիկ կաշկի կըտիսնա էանտեղ, իրեյք սարսուփ (մաքուր) սպահի ջնէլմ գեօ հան տեղ: Տղէն զէանոնք տիսաւ, էանոնք ըգտղին չըտիսան, տղէն մտաւ էանոնց ուրիշու տակ քեարիմ ծակ պախկուաւ, էանոնց սօլիրու մէջ տեղ: Յըրըկուն էր. մթնաւ, տղէն մեաց յանտեղ: Տղէն տիսաւ զարմնալի պանմ գեօ գաշտից կգեա էանտեղ: Իրի, կըտիսնայ կիրիշկի պառաւմ գեօ էրկու ջաղցի քեար խակեյր, թօզ գուման կինք էրկինք. աջ ծիծ թալեր ձախ թէփ վրէն, ձախ ծիծ թալեր աջ թիւի վրէն, էանու ատըմքեր չարէքմ յէրկընցիր տիսաւ:

Կորը կըսի քուրոջ լաճուն. հայվան, էտա թնչ կըսայ ի կըսիս:

Թեագաւորություն աղջիկ կըսի. Դէ, կծր, տիւ մնջի (լոի). էան քեանձ քեյկ խօրօս կըսի. Տղա, սա, սա քիւ կըսէն:

Տղէն կըսի. Պառաւ էկաւ, իրեք աման կերակուլ խետ ուր. մէկ վար մէկ ձեռաց, մէկ վար մէկ ձեռաց, մէկ աման էլ վար ուր մէկ պյլիուն դրած, Մէկ աման կերակուլ իտի յըրջն Պուղուսուն, մէկը յըրջն Պըտրըսուն, մէկն էլ յըրջն Յուսէփին Պուղոս, Պիտրուս իրանց կերակուլքեյը կերան. ամա Յուսէփ ուր կերակուլ շըկէրաւ, իտի ուրենց տակ քեարի ճեղք, Տղէն գեաղտիկ քէյից յըրջն ուր, կուշտ կուշտ կերաւ էան կերակուլ, Դիշեր էր, Տղէն մնաց յանտեղ չիւմ խըլըսուն. տիսաւ որ պառաւ էլըմ էկաւ, էլմ իրեյք աման եմակ խըմ մէկ տեղ, իտի յըրջն Պըդուսուն, մէկ յըրջն Պըտրըսուն, մէկ յըրջն Յուսէփին Պուղուսուն Պիտրուս ուրենցը կերան, Յուսէփ էլմ էլ ուր աման իդիր ցածր, քեարի ծակ. յուր կուրի քրոջ լաճ պախկվեր էր. Ոչ պառաւ, ոչ Պուղոս, ոչ Պիտրուս էրկու օր էր, որ տղից խապար չէն, որ նէա յանտեղ քեարի տակ յանտեղ պախկվեր էր, Պառաւ սաց. Յուսէփ, խոզէ (երանի էր) ես գիտնէ քը էան դէլ (քած) կնիկ, ես էանու ճըղճըդէ, իմ ատըմքերով էանի կտրտէ, որ տիւ էամնէմ (այսքան) մառախ չանէր (չմտածէիր), որ դայիմ (միշտ) զքեյ խացից կերից, Ջրից չպրէր, Սաց պառաւ ու գյնաց. Տղէն գեախտիւ ուր կերը քէյից ուր յըրջն կերաւ. Էանոնք քյնան, տղէն էլաւ կնաց մօտ ուր կոր քեռին, ձէն տվից էանու էխան վիր, կոր կըսի, հայ տղիկ, ինչի՞ ձիկ կը խանիս վիր. ես հալա կուշտ չեմ քներ, Տղէն կըսի. Քեռի, նէա էրկու օր ի, որ տիւ քյներ ես, գալ (գեռ) կուշտ չի՞ս քներ:

Կոր պան չտիսնայ, ձեռ կտայ արեկան (արեգական) խով կըսի, թնչ ես քնայ գալ նէա ծառի խով վար ձիկ էր, մկայ էլ էն ի:

Տղէն կըսի. Քեռի, էլի հանք ըստուց, հանաքեան ի (ուշ է) շընք խասնի տուն:

Կէլինին կըգեան թագեաւորու աղջկայ խան կըխասնին. կը նստին դան. Կորը էլմ էլ ուր խարիր կըսէք սաց. դօր (կարգ) էկաւ տղին:

Տղէն գես ուր կասէն կըսի:

Թագեաւորի աղջիկ կըսի. Հայ տղիկ, նէա կըսէն վար ձիկ կըգեայ, կըսի. Թագեաւորի աղջիկ ես իմ. Հայ տղա, նէա խան իմն ի, անու մաջ էլած չէլած, ուկով արծըթով զըմէն քեյկ կտամ, յանտեղ ձիկ շանք տու:

Տղիկ յիրջն թագեաւորի աղջկան կընկնի, կաստ էան քեարին կէնի, կըտանի էան մարզերն էանու շանք կըտայ, որ իրեքն էլ դհան քյնած:

Թագեաւորի աղջիկ ուր գէրիկն կընանչնայ, կըսի. Տղիկ, տիւ գյնա վար քը խանին:

Տղին կէնայ ուր խանին կըտիրանայ:

Պուղուս, Պիտրոսն, Յուսէփ քյնուկ կենին:

Թագեաւորի աղջիկ ուր ոտ կըտայ Յուսէփի ոտ, էակախըցնի, Յուսէփ կըտիսնայ զիւր կնիկ, կընի վեր, կնկան կըսի. Կնիկ, տիւ էկար իշ մկայ իմ մէր կըգեայ ըզբիյկ կը բրտի, դայ կէնի (կոչնչացնի):

Յուսէփ չար նաչար, կինի տոնի զուր կընիկ, կէնա:

Պառաւ մէր կըգեայ, կըըշէփ, կը տիսնայ որ Յուսէփ յան տեղ չի: Ուր ջաղցի քեաբերն քէյշից ոտ, ընգեաւ յիտև Յուսէփին կան գալ:

Էանունք շատ կէնան, քիչ կէնան, Յուսէփի կնիկ կիրիշի յէտևանց դումանըմ: Կը կայնի կըսի. Յուսէփ, նէա թշ դուման ի: Յուսէփ կըսի. Իմ մէրն ի, խասաւ միկ:

Յէզիյմ (այգի) յանտեղ ուստ կըգեայ, Յիգեպան (այգեպան) կայներ տուռ. կըսի. Յիգեպան, Աստված սիրես, նէա պառաւ իրի դեխ մե. ձի պախի էանու մտուն, փրկի մի, առ քեյ ոսկիմ: Յիգեպան էանունց կըտանի մտուցի խաղողի թփան տակ, թափեր կըբէյշի վիրինքտիր կըծածկի, կըգեայ յէզու տուռ կայնի:

Պառաւ կըգեա, էանու կըխարցնի, կըսի. Յիգեպան, տիւ ըստեղ մարդ չըս տիմի ընցեր:

Յիգեպան կըսի. Ի՞ն, ըին, ըին, եմ խաղող հալա (տակաւին) կանաչ ի, չըխասեր, ճուրթ չըկայ:

Պառաւ կըսի. Ես մարդ կը խարցնիմ, էան ձիկ խաղող շանք կըտայ, նէա յիգեպան խուլ ի, զիժ ի: Պառաւ էան տեղից կընցնի, կէնա:

Յուսէփ ուր կնիկ կըըշէկն որ պառաւ ուր դուման կուրսաւ, կէնին ճամիսով մէ կէնան:

Տիրմ էլ շատ քիչ կէնան, էլմ էլ կըտիսնան ուրենց յէտէվից դուման կըգեայ, էան տեղ էլ ջաղացմ ուստ կըգեայ:

Կըսին. Ջաղացպան, պառաւմ յիտև միկ կըգեայ, միք ազատի, քիյկ ոսկիմ տայնք:

Ջաղացպան էանունց կըմմտուցի ջաղաց, դուռ կըշնի էանունց վրէն, կընստի դուռ:

Պառաւ կըգեայ կըսի. Ջաղացպան, մարդ չըս տիմսեր ըստոց ընցեր:

Զաղացպան կըսի. Բըն, ըըն, ըըն, աղուն չկայ, զաղաց կան չիդեայ, պեռ չկայ:

Պառաւ կըսի. Ես լ՛նչ անխելք պառաւ իմ. յիգիպանին կը խարցնիմ. ասկո՞ն ջըղապ կտայ: Նէս ջաղացպընին կըխարցնիմ, էանայ ջըղապ կըտայ, պառաւ կըթողնի յանտի էլ կէնա:

Դուման կըղատանայ:

Յուսէփ ուր կնիկ ջաղցից կելնին տիւս, յուրուշ ճամխոզ կէնան: Շատ կէնան քիչ կէնան, էլրմ էան դուման կըգեայ:

Զարէն կտրաւ, Յուսէփ սէհրի էթալ վար կնկան, արաւ բարդի ծառ, յինքն էլ էլաւ բառեղ խոտ փաթըթվաւ յինի չում ծառի գյլօխու:

Պառաւ էկաւ դէմ ծառին գաղրաւ:

Կըրըշկի ըզծառ, կըսի. Մկայ ասկիմ (աքացի) զարկեմ իլ-նիս խարիր կըտոր:

Յուսէփ ըզսէհրին կըթողնի կըդեայ տակ, սէհրին կընկնի կը վրցի:

Պառաւ որ խարս տիսաւ, էանպէս գեղեցիկ, էանպէս սէր-սուփ, ըզխարս զյրկեց, վար ուր սրտին պաքնեց, ընցաւ յըրչըթ-քեր տարաւ կնաց ուր տուն:

Եփ առաւ զանոնք տարաւ ուր տուն, խաղ խարսնիս շատ ուրախութին էրաւ, պսակեց ու օրջնեց:

Էանոնք խասան ուրենց սրտի մուրազին, տիւք էլ խասնէյք ձեր մըազին:

Պատմեց 1911 թուի յուլիսի 26-ին Շատախի Թաղ գիւղում Շեղչանեցի Քամալի Պիտօն, անգրագէտ երկրագործը, որ յիսուն տարի առաջ Տիարպէթիրում (Տիգրանակերտ) Սիմոն անուն մի հայ հացագործից էր սովորել: Պիտօն այժմ 85 տարեկան է:

ՄՄԲԱՑ ՈՒ ՍԵՆԵԱԿ ԹԱԳԱՀԻՈՐՆԵՐ

Թագաւորմ կէր:

Օրմ նէս թագաւոր էրազըմ տիսաւ, որ մարդըմ կայներ էր ուր դիմաց, իրեք ջէավահըր (ազամանդ) էանու ճակափ մէջ,

Թագաւոր վի թռաւ էրազուց, դի մէլ (մի անգամ էլ) քնաւ, Մէջ երազին տիսաւ էլըմ էան մարդ, գեօ էանու գլխու վերմն իր Դիմ էլ էակխաւ, սաց. Սա էրազ ի, զէն չի. դիմ էլ քիւն տարաւ, էլըմ տիսաւ էան մարդ կայնիր էր էանու գլխուն.

Թագաւոր սաց. Տիւ թշ մարդ իս:

Թագաւոր կըսի. Ես Սենեակ թագաւորն իմ:

Թագաւոր խըլսուն էլաւ վիր, միզից, միզից (մտածեց) սաց-նէս իշ էրազ էր. ևս թագաւոր, էն էլ թագաւոր, էանու անուն Սենեակ, իմ անուն Սմբատ թագաւոր, կըտայ հաշիւ ուր ջըջութեն էանու. կըտիւնայ որ ուր էրկիր եսուն մէկ մհարոն հաւ-ւըլի ի քեանձ Սենեակին:

Վողիրքեր էկան, նստան դիւան, Թագաւոր իրես արաւ ճապ (ձախ) թեւի վողերին; Վողիր գյլօխ կոռեց, Եանի (այսինքն) խատ ձիկ մը զրուցի, պանմ ձէնէ չիկայ:

Թագաւոր էան վողիր տարաւ, էանու վիր կտրից, Նստաւ դիւ-ան, ըրըշէց զիխ աշ թեւի վողիր, Աշ թեւի վողիր էլաւ կայնաւ. Թամըլդա (թէմէննա, բարեի կանգնեց) էլաւ. սօրա սաց. Թագաւ-որ ապրած կէնայ. քեռ դարդ իշկ ի ձի սա:

Թագաւոր սաց. Եմ գէարդ Սենեակ թագաւորն ի. աը հաս (պիտի երթաս) ձը խամար պիրես, թի վար չէկաւ, իմ մէտրոն էանու խսանց տվէք, ան տըրըշի (պիտի նայի) եմ քեանձ էանու ջոջ ի տը կայ (պիտի զայ):

Վողիր բարե իտու զնաց ուր տուն, ուր ձիանց միջից մէկ ընտրից, էայէար (թամբ) էթալ վար ձիու քեամկին, լիքըմ խուր-ջի ոսկի առաւ էթալ ուր թէարք (զաւակ), ինք ուր քոլէն (ծա-ռան) իրես արին ճամբախ, քեամակ տվին թէազ մամլաքաթ (երկիր) գացին:

Շատ գեացին, քիչ գեացին Սենեակ թագաւորի քեաղայք ընգեան տիււ:

Գեացին վոզիրիմ տուն էլան մէհվան (հիւր). վոզիր էանոնց շատ ու շատ կատր պռնեց (պատուեց). այս (գեռ) իրեյք օր էանոնց խել չըզբցուց. քեանի որ էանոնց կանոն կեր, չիւմ իրեյք օր մէկ մէկմից խարցում չին էնի. իրեյք օր որ լըմեցաւ, էան վոզիր խարցում էտու, սաց. Հայ վոզիր, այլ պարով իկիր իս, խաղար պարով, թնչ իկիրհս դեմք աշնաւ:

Սաց. Ես իկիրեմ տ'ասիմ որ եմ թագաւոր ըզքը թագաւոր ուզիր ի:

Սենեակի վոզիր կըսի. Թագաւորմ եմի ի, մէկ քեռն, էանուր տիզ էան ուր տիզ, ըշկի (ինչու) քեռ թագաւոր եմ թագաւորին տը ուզայ կըսի. Սենյք մետրոն (չափս) տը տանյք խըտ մէկ մէկու. վիր որ շատ էղաւ, մէկէլն էանու պստիկ թըդ ինի:

Չափցին. Խոսուն վեց մետրոն էանու աւել էլաւ:

Էանոնք էլան գնացին մօտ Սենեակ թագաւոր. Սենեակ սաց. Վար եմ աչիչ, վար եմ գյլխուն, էան քեանձ ձի ջոջ ի. Ես իս պէտք ի էանու ծառայական ընեմ:

Վոզրին սաց. Ել կըսի. Քիյկ ուզիր ի:

Վոզիր սաց. ձիկ ասքյրով, էլաթեվ (ժողովրդով) ուզիր ի: Մեքայի ի ուզիր, թնչխ ի ուզիր:

Սաց. Քիյկ մէքայ (մենակ) ի ուզիր:

Սենեակ կանչից ուր մէկէլ վոզիրքերուն, որճար քիյզարներուն (ազնւականներ, պալատականներ), սաց էանուն. Մըրատ թագաւոր ձիկ ուզիր ի, մենք թնչխ անենյք. Ես տնով տեղով իհամ (գնամ), որճարքեյրեվ, իմ ամեն ասքյրեվ իհանք, խելքըմ, թատպիրմ տվէյք:

Կէրիյէթ (ժողովականք) սրցին, որ տիւ տնով տիղով իհամ. մենյք կըպլակինյք (կըցրգինք) մէկ մէկուց կըցրվըկինք: Լի վար (եթէ որ) տիւ մէքեա (մենակ) էհաս. ախըր քեռ կիմիկ, քեռ տղէտիր կըման դէսաւ. Մենյք էլ երդում կէնենյք, էանոնց կըտանենյք տրպանինյք, շախինյք մըր երկիր տըկառավարինյք:

Սենեակ թագաւոր էլաւ մէքեա (մենակ) խետ Մըրատ թագաւորի վոզրին. Խէծաւ ուր ձին, էկաւ: Դէօր էկան խասան տուն:

Մըրատ թագաւոր ըըըշկից, տիսաւ ինչխ որ էրազ տիսեր էր, էասկոն (այնպէս) իրեյք ջավահըր զեօ էանու ճակտի մէջ: Ինք շատ մի ազիզ մարդմ իւ նէսա որ տիսաւ՝ էլ դաստուր (հրաման) չէտու էանոււ: Տարիմ էրկու մեաց. Մըրատ թագեաւուր ասկում սիրվաւ վէ էանոււ. Էլաւ յօդիմ էանու խամար էտու շինել: ուր յօդի գիմաց, որ հար (միշտ) ըըըշկի մաջ էանու աշկիրուն:

Օրըմ գիշեր Սենեակ մտաւ տեղ (անկողին), տիսաւ խաւքըմ էկաւ մտաւ ուր յօդէն. ուր փանջարէն դատրաւ. ուր մորթ

ուր մենէն արձիկից. էլաւ էավատ (կոյս) աղջիկըմ գեօ որ ասկուն չկայ վար երկրին:

Էան աղջիկ զնաց վար Սենեակի տեղաց, սաց. Սենեակ, տիւ քըյ ճայտի (ճակատի) ջավահիրքեյրաց մէկ չըս թտա ձիկ:

Սենեակ սաց. թալէ (այս) թէ որ տիւ կընսն ձիկ, ես տը տամ, թէ որ չըս ընի՝ չըմ իտա:

Աղջիկ սաց. Ես քոն իմ:

Սենեակ ճավահիրքմ էխան, էտու անոււ Ուր խաւք, ուր մորթ փաթըթեց զինք, փախաւ կնաց: Խըլսուն ակախաւ (արթնացաւ) կըխի (կընայի) որ էրազ ի:

Թագաւոր կիրիշկի մաջ անու ճայտին, կըտիմնայ որ ջավահիրքմ պակաս ի. շատ մտքի, մտմտանքի մէջ ընդիււ, դժբ չըլմ, կըսի. իմ տան քլփաթ (ընտանիք) կնիկըմ, աղջիկըմ խաներ նէա ջավահիր մենէն առեր ի, նէա ձի խամար ամօթ ի:

Թագաւոր էլմ ձէն չըխան: Մնաց մակալ օր, զիշեր էլլըմ էան խաւք էկաւ, ուր փօսթ ուր մընէն արձէկից. էլաւ աղջիկ, էկաւ վար Սենեակի տեղաց: Սաց. Սենեակ, ջավահիրմ էլ չըս իտա ձիկ:

Սաց. թէ կընիս իմ, կտամ. չէ, չըմ իտա:

Սաց. Ես քեռն իմ:

Էլաւ ջավահիրըմ էտու էանու, խաւք իլմ ուր փօսթ էթալ վար ուր. թռաւ կնաց:

Սմբատ թագաւոր խըլսուն իրիշկից Սենեակի ճակատ. տէսաւ որ էրկու ջավահիր գեացին. մէկ մնաց: Շատ, անչափ տըրտմաւ:

Մնաց մակալ օր, զիշեր էլլըմ էան խաւք իրի. փօսթ իտի վար տեղաց. էլաւ խօրօս ազապ աղջիկմ, սաց. Սենեակ, ջավահիրմ չըս թտա ձիկ:

Սաց. Վար տիւ իմ խաւ կընիս, իմ մալ տըտամ քիյկ:

Սաց. Ես խաս քեռն իմ:

Սաց. Տիւ վիր աղջիկն իս:

Սաց. Ես Շահվարի թագեաւորի աղջիկն իմ:

Խըլսուն Սմբատ թագեաւոր ըրըշկաց ջավահիրքեյր զըմէն նըւըսած ին:

Սաց. Սենեակ, ջավահըրքեր ի՞նչին արիր:

Սաց. Թագեաւոր ապրած կէնայ. Ես տը ըսէ. քալէ (բայց) կամչընէ քը մօրէն. որ ըսէ: Եմ կըսէն, ջավահիրքեյրուն նէա ի. որ խաւքըմ իրեյը զիշեր էկաւ էլէաւ աղջիկ, ձիկ խարեց, իմ գլխից ջավահիրքըը տարաւ:

Թագեաւոր սաց. Անխարցում, անփորձել տիւ ի՞նչին քեռ ջավահըրքեր կտաս էանու կըտանի:

Սաց. Ես խարցում ըրերիմ:

Սաց. Խնչիս, խարցում ըրերես:

Սաց. Զիկ սիրի (ասել է) ես Շահվարի թագեաւորի աղ-
ջիկն եմ:

Դօր Սմբատ թագեաւոր նստաւ դիւան, ուր վոզիրքեյրուն
սաց. Զիկ ձենէ կըվտի, որ տիւք Շահվարի թագաւորի աղջիկ
պիրէյք:

Էլըմ աջ թիւփ վոզիր կէյնի կըխէծնի ուր ձին կըհաս-
նի Շահվարի քեաղայք: Թագեաւորի քեօշկին կըմօտենայ. կըտիս-
նայ որ զնջիլ կախուկ ի տակ. զնջիլ կըշաժի. կըգեան դուռ կը
պահան:

Կըհա մօ փանջարէն, կընի բարձր, ատաթ իշկ ի, վագ որ
թագեաւորի զնջիլ շաժի, կըդնա վար աթոռին կընստի, էանու
բարեկըմըթնի դավին կանի:

Վոզիր նստաւ վար թագաւորի աթոռին, թագաւոր խարցում
էրաւ. խարցում էտու, սաց. Տիւ տորէն ես (որոնցից):

Սաց. Ես Սմբատ թագաւորի վոզիրն իմ:

Սաց. Խնչ պանի խմար իս իկե:

Սաց. Եմ թագաւոր քեա աղջիկ կուզի:

Սաց. Վար իմ աշիչ. Սմբատ թագաւոր քեան ձի ջոջ ի. աղ-
ջիկըմ թշկ ի (Խնչ է) որ ես խնայիմ էանու:

Սաց. Իրիյք օր նստի. ես իմ աղջիկ հազըրիմ (պատրաս-
տեմ) առ տար:

Իրիյք օր վոզիր նստաւ անտեղ, աղջիկ հազըրիցին, վար
իրիյք օրվայ էլաւ ուր աղջիկ իտի մաջ մնաֆին (սնդուկ) իտի
վար ջուրիներուն, իրի իրջն վոզիրներաց:

Վոզիր սաց. թշկ ի, թագաւոր ապրած կէնայ:

Սաց. Վոզիր, ես ըըջէմ (խնդիր) կէնըմ քենէ. տիւ իմ աղ-
ջկան ցերէկ չը քէլըցուցէք. գիշերով տանիս. իմ աղջկան խասմիր
(թշնամիք) շատ ին:

Վոզիր աղջիկ առից ընգեաւ ճամբախ: Գիշեր կըքէյլին, ցե-
րէկ կընստին, չիւմ որ կը մօտենան իրանց քեաղքիյն:

Կէհան կըխասնին էան քեաղքիյ յըգստարու (այդեստա-
նեայց) զյլօխ: Վոզիր մարդմ տիսաւ, սաց. Կնա թագաւորին սա,
որ ուրախութենով կեան մեր պէարուհին (ընդ առաջ) նէա խարս
տանինք:

Վոզիր կըդառնայ ուր քեօլին (ծառային) կըսի. Ախըր նէա
մեր երկիրն ի. դէօր քէֆով էհանք, ցէրէկով էանոշ ի: Դօր (այս
անգամ) կէս սիհաթ ճամբախ քէլըցին, չեկելեցին. ապա ցէրէկ ի:
Վոզիր տիսաւ դահըըմ (թոչուն) խասաւ, վար թռաւ խարսի-

անդըկին, իրեք տիր կտուց էզար էանու վրէն, թռաւ կնաց:

Թագաւոր էլաւ սազով, զումնով, նէաֆիրով (նուագարան),
մարդեր յօղօրիկց որ խարս պիրեն տուն:

Մարդեր գեացին էանոնց դիմաց. խարս պերին տարան
տուն:

Մնդկի պէրան կըպանան կըտիսնան որ խարս չկայ մէջ, Կը
կանչին վողիրն, կըսին. հմէր ի քը խարս:

Կըսի. Գեօ մաչ մնդկին:

Կըսին. Ուր ի. զը էրի (արի) խան տիւս:

Վողիր կընա կիրիշկայ, որ չ'տիսնայ, կըսի, իմ խարս վար
ձիկ պախերիյք. Խըլիսուս (այս առաւուս) էր, ևս իմ խարս խէ-
ծըցերիմ պիրիրիմ չում նէա յէզստերաց դյլօի:

Կըսին. Մարդ խապար չի. քը մնդուկ դատարկ ի չ'խօ (ար-
դէն):

Վողիր կըմէզի (կըմտածի) կըսի. ճամբախ դահրիմ (թոչուն)
իրի, իրիք տիր կտուց էզար վար էանու մնդկին թռաւ զյնաց.
Կայ չկայ նէա պէանմ էաւտոց ի խասիր իմ խարսին:

Թագաւոր նէա պան որ կը տիսնայ հոճըմ (յարձակում)
կանի վար վազիրքերուն կըսի. Զի կպի հա հա էան խարս պի-
րէյք:

Իրեյք վողիրքեյք ընկեան տիւս. գեացին ետև խարսին:

Սինեակ կնաց սաց. Թագաւոր ապրած կինայ. իմ իզին (հրա-
ման) տու, ևս հատ խասնիմ վազիրքեյրուն, թէ չի էան կնիկ չի
գեայ: Սմբատ էանու իզին խուռ, կնաց խասաւ վազիրքեյրուն:

Էան կնկա ջոպ ընկլիզ (անգլիական) մկրատըմ կայ, իշ
տահր զէն կըտանի, էն հէար ուր անթարու (հազուստի) փէշ հա
կըկտրի, կըթալի տակ, որ ինչի նշանակ, տիսնան ետև էանու
հան (գնան):

Վողիրքեյք Սինեակի հետ ճամբախ որ ընկան կէհան, էան
անթարու կտորքեյք կըտիսնան, խուռ կընան չիւմ կէնին սարի
դյլօի:

Էանտի մազարէմ կըտիսնան, ջաղցի քեարմ գեռ զբուկ վար
էանու պէնին:

Դոր Սինեակ կըսի. Հայ վողիրքեյք. մենք չընք կէնայ էան
քեար շուռ տայ, գեօ նէարէա ծակ լէն ի. ախտ (առաջ) ձիկ
մտուցէյք էան ծակվէր, ևս ինամ, բալքի ևս իմ ուզած տիսնամ
հան տեղ, չարէմ էնեմ էանու խետ: Վողիրքեր ջըրիտ (պարան)
կը կապին էանու մէջք, կըկախին տակ:

Սինեակ մոմըմ կըվառի, կընայ կըտիսնայ ուր դիմաց զու-
ռըմ կայ. կընա էան զուռ կըպանայ. կիրիշի կնիկ գեօ հան տեղ

խայոց խաթուն. ասկուն (այնպէս) թամիզ, ասկուն գօղալ (գեղեցիկ) չկայ վար Աստու աստվորին:

Կնիկ կաի. Սենեակ թագաւոր, թագաւորքեյրու պէնի պէալնիս, երկրորդ ջէէլ, իգաստարու ալուկ (նորակոյս ծառ) տիւ. նէա տըզ:

Սենեակ սաց. Աստված զիմ կսմաթ իպի տէակ (այստեղ):

Սաց. Ան ինչ տիւ իտև կան կըգեաս. գըհան, նէա վրէն հօդէն. ատ դուռ պաց, կնա մօտ:

Սենեակ դուռ էպաց տէսաւ ասկուն մէկըմ կէը հան տեղ, որ աշկիր թէալ իւան (չուցին) մնացին:

Աղջիկ սաց. Թագաւորքեյրու պէնի պէալնիս. երկրորդ ջէէլ իգաստարու ալուկ (այդեստանեայց նորահաս) տիւ նէա տար բար (այս տեղեր):

Սաց. Աստված խսմաթ իրի:

Սաց. Էն ինչ տիւ իտև կան. կըգեաս, գեօնան, քեանձ ձիկ ամախվի (վերի):

Սենեակ կնաց դուռ մէկից էպաց, անտեղ կըտիսնայ էանու ուզած, ուր նշանլուն գես գէվ զրիր մաշ հօդին, ուր զյլօխ զրիր վար էանու ծնկան, թահնայ քնիր ի:

Կնիկ կըլայ, արտասունք էրուն կըթափի էանու աջքեյ- րուց:

Կնկեայ աջք ընկեաւ ըզՍենեակ. սաց. Քըյ տուն աւրի, է- կար ըստա իշ: Մկայ դէվս ի որ վի էլաւ, ձիկ էլ կսպանի քիւկ էլ խետ: էանու լէշ նէա կրակով կըրըշի նէա սրով կըկտրվի:

Սենեակ սաց. Ապա ինչին տը ըլնի:

Սաց. Կնա մա իրջին կնիկ, ինչ տիւ տիսար. դէն (այն) թիար պանմ սիր. էանու իսիր թի որ չի, չխու (այլես) դա չի ուզի:

Էն էլ էլաւ կնաց մօտ:

Կնիկ սաց. Խշկի (Բնչ է), Սենեակ.

Սաց. Ախըր ես քը բեախա, քը Աստծուն. ախըր էան գէվ ի. մենյք մարդ ինք, տիւ սա խինք իշ կըպանի մա էանու ջանին: Քիկ կպի, իս քիկ տանիմ ձիկ խամար. քիկ կըպի, քիկ տանիմ քը մամլեացեաթ (հայրենիք): Ուստա ըլնի վար իմ ջանին. ես սվթա (նախ և տռաջ) քիկ խամիմ տիււս Աս տեղ եէմին (երդումն) կանի էանու խամար դօր կըսի. Սենեակ, կնա էանու դէմ. էանու թուր գես պատից կախ ի. թէ որ տիւ կէրցար, էանու թուր քէ- շըշիր տիււս. մէկ գարբով (հարուածով) զարկըշիր էանու վիզ կտրիցիր. չխու քիւ գէաւլէաթն ի. թէ որ չ'կըշիր. չխո տեղնի ձիկ էւ քիւկ էւ, մէկէլնքն էւ զըմէն աըսպանի ուտի, էանու վզի մէջ մէնակ թուր կըպանի. էն էլ ուր թուր:

Սենեակ կնաց, ձեռ էթալ թուր, առեց տակ, կալան (պատեան) իսուու ուր կնկէան ձեռ. բուռ ինքն պանեց. քէյշեց, դէ գէ թուրն կալանից էկաւ տիւս, վիրցուց, ուր կնկան սաց. Քիյկ տար դէն. անու (դէվու) զյլօխ դիր զեյտին,

Կնիկ զյլօխ իտի գեյտին, զատացաւ.

Սենեակ թուրըմ էղար դէվու վիզ կտրից. մէնակ կաշին մնաց. Դէվ ուր ձեռ թափ իտու, դիպէաւ. Սենեակի ատամքեր փըշ-րից, ուր պէրան կապից, առից զէան (այն) իրէյք կնգեր (կանայք) էկաւ. խասաւ, դռան վիրէն. կանչեց վողիրքեյր, շըրիտ կախցին. առաջ իրջին (առաջին) տէսած կնիկ էխան տիւս. իտև, քեանձ էան պէանցրուն (վերմին), մնացին ինյք, ուր նշանլուն մէնակ.

Նշանլուն սաց. Սենեակ:

Սաց. Խ'չկ ի. թագաւորի աղջիկ:

Սաց. Տիւ ձիկ լոնես, յառէջ տիւ իլի տիւս. ես չխու քոնն իմ. ձի էլ տըքէնս: Թէ որ մենյք ինենք տիւս. տէսար որ վո-զիրքերու աշկ (աչք) ընկեաւ ձիկ, իրենյք կնկտիք տարան. մէկ ցիյկ թըզին. նէտ տեղւէր (այս տեղեր) տի մնաս, մեռնես, ընձիկ էլ չտիմնաս:

Սենեակ սաց. Ես ուխտ իմ ըըեր որ քիյկ աըխանեմ տիւս, նոր ես էլնիմ:

Սաց. Զէ. առէջ տիւ իլի. տիւ ձիկ էխանես:

Սենեակ շատ զօնեց. կնիկ շըիտ էթալ ուր մէշկ (մէջը) սաց. Սենեակ, ես զեօ զեացի. զիւնիս ի, որ զմիկ տարան. քիյկ չ'խանեցին տիւս՝ հաս ան հօդէն իջիս ինե, էանու գօշէն (անկիւն) դուռմ կայ. էան դռու կըպանաս. կըհաս իգիյմ (այզի) կայ էան տեղ. էան իգիյն իւշիս (հիանալի է) անմախթնի խոտ (հոտ) մէնէն կը թափի. բլրուլ յինե կըկարդա, ձէն կըհա չիւմ էրկինք. էան տեղ ախպիւրմ էլ կայ. հաղպըի հավուզի, էանու չորս պիւլոր մէտ-մէար քեար ի. կնկտիք վար սալերուն կըհան. տիւ կըսիս. Տէր Աստված, զըմէն մարգարիտ ին: Հաս էան իկուց կըօրըմ (սեխ) պիրիս. նստիս հագուզի սալի վրէն. քեամակ տաս չինարի ծառին. քը կլօր կըկիսիս, արև տաքինայ, էրկու խոյ կըգեան վար ան հազուզին, մէկ սև ի, մէկ սըլտակ, ջուր կըխմէն. զօրիս տիլ-նին քնին. ուրենց պիհն (ուղեղն) կըտիրին ոըհաթին (հանգըս-տանան). մէկ տիլին կոտրտվին, զատանան մէկզմէկուց. զարկին մէկզմէկու գէյտին, տը զարնին, տը կովին: Սև խոյ մաջ սըգտակի քրտնքեյն տը սըգտակի. էլնի ձուն, սկտակն սև խոյի քրտնքեյ մէջ տը սենայ իլնե կըտպր, եալնիշ չիլնիս, քեյկ կըթեալիս վար սիդի քեամկին, որ սվտկու, ան քիյկ կըթալի աստոր: Սենեակ կանչեց

վազիվքեյլուն. սաց. Թէշէք. քէշըցին պանցր: Վազիյրքերու աշն ինկան ըզկնկտիր. սեցին. Հէտ թագաւոր օրմ զմեկ (մեղի) վար Սենեակին տը սպանի. Թող մկայ սպանի. վոլլա մինք զՍենեակ առ թողնենյք նէտ տէզվեր. զկնկտիր տանենք հանք:

Դոր ասին զկնկտիր գեացին. Սենեակ մնաց դէն վեր. Էան էլ էլաւ աղջկայ սածի պէս. կնաց մաջ իգուն, կլօրմ կտրից. իպի, էկաւ չինառի ծառի տակ զուր կլօր կտրից կուտի:

Տիսու անտուց էրկու խոյ էկան: Խոյեր ջուր խման. ոչհաթան, էլան մէկ մէկից զատացան, զարկին մէկ մէկի, ու խոյու մազ սիվտկի քըտնքի մաջ սվտկաւ. սետկու մազ սիվի քըտնքի մէջ սեցաւ:

Սենեակ հալնիշ (սխալ) ընկէաւ զինք էթալ վար սվտկի քեամկին, որ սեցաւ. առեց եօթ դապաղա տարաւ գեյտնի տակ: Նեղ տեղմ ձեռքեր հանց ծոց. դռան ճէակտանոցը ընկաւ ձեռաց տակ: Դուռ էպաց, կէհա կիրիշկի օձերու թագաւոր գես նստիր վար թախտին, օձեր անկոր էլած օղ. թամաննաւ էլաւ. Օձերու թագաւոր սաց. Հայ Սենեակ թագաւոր. թագաւորքերու պէնի պալնիս. աղէկ իգու արուկ (նորահաս ծառ). իրկրոս սիվը գեղեցիկ ջնէլ. դըժըխոց վոր կըսին նէտ տեղն ի. տիւ ըշկի էկար ըստեղ դժոխոց. արբայութեն երկրի վէրէն ի. դէս մութն ի:

Սենեակ սաց. Աստված իմ կսմաթ իսկից դէս, ևս բնչյա էնըմ:

Օձ թագաւոր սաց. ձիկ խարարմ կայ քիյկ պիտ ըսեմ. թէ որ տիւ իմ ահտ պիրիր (խոստում կատարեցիր) տեղ՝ ուխտ ըլնի որ ևս քիյկ (քեզ) տանեմ աստւոր տիւս խանեմ: Սենեակ եմին (երդում) արաւ սաց. Տիւ իշ (ինչ) ամր (հրաման) ընիս, ևս քիյ ամրի տակ իշնիմ:

Սաց. Սենեակ թագաւոր, Բազգատու թագաւորի լաճ, նէտ եօթ տարի կայ, ընգեյր վար իր քիթ պէնին, քեամոտ ի. չըկէնայ իրար առնի: Ռամգարքիյր (կախարդներ) առմ թալած ին, սած ին օձու թագաւորու գյլօխ մինակ էանու դեղն ի. չիս զմտ դեղ չկայ, տը մեռնի. դանէ դան (ժամանակ ժամանակ) կասապ, նէտ եօթ տարի կայ, որ դանակ արեր դատրեր վար իմ դուռ. խէտ իս գյլօխ խանիմ տիւս, իմ գյլօխ տը կտրի. ձիկ աստըւորից տը խանի: Տու Աստծով սրբերով եմին կանիս որ իմ գյլօխ չըտառ էանու ձեռ: Ես գեղմ կըտամ քիյկ, տիւ քիօ (դու ինքդ), դանակ թալես քըյ ձեռնով իմ գյլօխ կտրես, տանիս քսիս վէրէն խոփայ, ժրի, զօրիս էլըմ իմ գյլօխ գնիս տեղ. դեղ քոխս վէրէն, ևս տը ժրիմ, հաս (գնաս) իէտ (հետ) քը պանին:

Սենեակ եմին արաւ, օձ էլաւ փաթըթվաւ զէն. էտու մազ

ուր գեասիրուն (մաղեր) կայնեցըցուց. եօթ տարին էխան տիւս. եօթ դիր իտու հէրդում (երդմցըին), սաց. Զըմոռանաս, պիրես իմ գյլօխ զնես վար եմ լէշին:

Էխան ծակից տիւս. զանօ (նրա) տան կասապ խասաւ դանակ առից թախ գյլօխ ինչ կէրէվայ, Տիսաւ որ գյլօխմ էր իկաւ տիւս. Սենեակի գյլօխն էր:

Սենեակ շոտմ զանակ առից, էթալ թմզ էանու վիզ: Կասապ սաց. Մը կտրի, գյլօխս իմն իւ նէա եօթ տարի կայ որ ես ըստա իմ:

Սաց. Նէա ութ տարի կայ որ ես մութ լուս կըխանիմ. ինչին գյլօխ կտամ քիյկ, կասապ միտք էրաց. սաց. Ել ձենէ պանմ շիգեայ, էհամ ականջկալեմ (աւետիս) տանիմ, բալքի (իցէ թէ) անտի ձիկ պանմ խասնի: Խասաւ ականջկալէն իտու. տաս ոսկի տվին, էան գյնաց ուր տուն: Սենեակ նոր իտև կնաց. կըրըշի որ թագեաւորի լաճ իլեր չոր փետ, համան խոզին ի որ մնացիր մաջ ոսքրներուն: Ճղին կըխանի վէ. խօրօտըմ կըլվայ, օձու գյլուխ կըքսի վրէն, կըհա կընսափ ուր տեղ, կըտիմայ որ տղէն, հէտիկ հէտիկ (կամաց կամաց) զինք յիրար կըտայ. կէլնի կըկայնի կըսաղանայ ասկուն ինչ մօրէն մէկն իւ:

Թագեաւոր խըլսուն զՍենեակ կանչից, սաց. Իմ թագեաւոր րութեն քիյկ (քեզ), տիւ իմ տղէն ժըրըշըշիր (առողջացըիր):

Սենեակ սաց. Պնպարայք (զնորհաւոր) ընի քիյկ քիւ թագաւորութեն:

Սաց. Իմ մամլեաքեաթ քիյկ:

Սաց. Զըմ ուզի:

Սաց. Ազա քիյկ իշ կըվաի (պէտք է):

Սաց. Մէկ օլախ (ձի) կըվաի հս խէծնիմ էհամ իմ տուն:

Էլան օլախմ պիրին, աեար դրին վրէն. Սենեակ խէծաւ: Կնաց տուն. զօձ մոռցաւ. Թագեաւոր շատ ուրախացաւ, էլաւ եօթ օր եօթ գիշեր, եօթ ցերեկ խարսնիս արաւ, զայն իրեյք կինկափիր էլ պասկից վէր էանու: Էան հրկու (հրեկոյ) ինչ տը տանին կընկտիր հօդէն, ուր մէշկապ արձկից. օձու գյլօխս ընկէաւ տակ: Սաց. Օյ է. Աստված, քըյ տուն աւրի ադամ որդի, տիւ իշ բէրախտ իս: Նէա հայվանմ էր ձիկ իկնից վար աշխարին էան գիշ զնդանից իս մոռցայ, անու գյլուխ չտարայ զնէ ուր տեղ:

Սենեակ իլաւ ուր մէշկապ կապից, շուշէմ իպի օձու գյլուխ իտի հինի. ջուր ածաց վէրէն, խէծաւ օլախ, քշեց կնաց վար օձու դռան, կըրըշի կըտիման որ օձ չորցիր, թօոօմիր, մըշմքիր տուած վէրէն, պրծիր պանից: Էկաց իտու, էզար մաջ ուր կօտին (գըլին) էլաւ գյլօխս իտի վար ջանդկին, շուշի ջուր իլից վէրէն, օրմ

էրկու մեաց, ըրըշեց, տիսաւ որ պոչ իրար առից. չէ, չէ, դէ, հա ընկաւ խիստ, հա սաղացաւ, չում ժրաւ:

Սաց. Սենեակ թագաւոր, չիւր տիւ խասար, լէշս խալեր, մարմիս մաշեր, մնացեր չոր սսկոր. տիւ պարով իկար, խաղար պարով, վար իմ աչիչ. չէ ես ժրա կասապի ձեռնից պրծայ: Թըն իմ միս խալի, ոսկոր մնացի, բէսա ի (բաւական է) ես չորս տիդ տըհամ, չորս եղ կըլնիմ, չորս խոյ ուսիմ էլըմ (կրկին) տիլնիմ դաջրվան (առաջվան պէս) վիշապ:

Դոր Սենեակ կաց պարով արից, իրի ուր տուն, խասաւ ուր մուրազին:

Պատմեց 1911 թ. յուլիսի 26-ին Թաղ գիւղում Շատախու Շիխանց գիւղացի Պիտօ Թամահեանը, որ 20 տարի առաջ զնացել էր Զզիր և այնտեղ հալվաճի Մխիթարից սովորել:

ՅԱՆ ԵՒ ԾԻՄԱՐ ՄԱՐԴՈՒ ԿՍԵՆ

Ժամանակից թագաւորը կէր, էրազ տիսաւ որ, էրկնուց աղվէս կըթափէր երկրին վըրէն:

Թագաւոր ժողվից ուր զըմէն թուղթ ըրըշկող, կարդացողքիյր, չորս կողմին, ուր զըմէն գեյտունքտիր, ժողվից էանոնց սաց. Տիւ տը զընանէյր թէ իմ տիսած էրազ թնչ ի, ինչ մահնայ (մեկնութիւն) ի, ձիկ սէյք թէ չէ ձիր ամենու զյլօխ տիկտիմ:

Թագաւոր քառասուն օր էանոնց մօնլաթ (ժամանակ) իտուր: Են էրկրի մէջ թագաւորի քեաղքիյց տիւս գեղըմ շատ աղքատ իրիկ կնիկըմ կէր, էանոնք սկոմ (այնքան) աղքատ ըն, որ օրվան խաց ուրենց ձեռ չէր ընկնի:

Նէս կնիկըն ուր էրկան վլզի վէրէն իտիր, որ էնս թագաւորու էրազ խանի, Պալկօմ (կամ թէ) հանտեղ թագեաւոր զէան (այն) ըսպանի յինք մօտէն պրծնի:

Իրիկ ինչ մահնայ (պատճառ) որ ճարից, չըկերցաւ ուր կնկան մօտէն պէյծընէր: Էլաւ տընէն տիւս ընկաւ կնաց: Ցամբախ ջոջ քեարիմ մօտ խասաւ, ջոջ օձըմ քեարի տակէն տիւս էլաւ, սաց. Հայ Շիւար, տիւ գեմը կէհաս (մւր կերթաս):

Էան շիւար մարթ սաց. Ալլա, ես էլ չըմ գիտի գեօր կէհամ:

Օձ սաց. Հայ Շիւար, տիւ մի վախէնայ, կնայ մա թագաւոր, թագաւորին սա, տիւ էրէզ մի տէսիր իս էրկընուց աղվէս թափէր

վար քիւ երկրին։ Մարդեր մէկ մէկէլ տը խապին, հիլաֆիլա տը անին մէկ մէկու, տիւն էլ էանու գեօրա երկրին, քիւ թափթին մուղաթ (զգոյշ) կաց, չըղարարվես (վասուես): Հալա (բայց) թագաւոր ինչ կըտայ քիյկ, պիրես կէս ձիկ տաս, կէս քիյկ, օձը սաց Շիւարին։

Շիւար էլաւ գողրու (ուղիղ) կնաց մա թագաւոր, սաց. Թագաւոր, ապրած կէնսաս, տիւ էրազըմ տիսերիս, էրկնուց աղջէս թափեր երկրի վերէն։ Էան էլ նշանակիր որ երկրի հիլա ֆիլի մէջ ընկաւ, մէկ մէկէլ տը խարեն։ տիւ էլ արդար թագաւորըմ ես, քոյ երկրին, թաղթին (գահին) մուղեաթ կաց, չըղարարվիս, եան գու, եան քու երկիր։

Թագաւոր սաց. Աֆարըմ. գողրու ի (ուղիղ). ամը ըրաց սաց. Տարէյք իմ խըզինէն (գանձարան) չորս դաւա (ուղար) պիռ փարս բարձէյք, թող Շիւար տանի ուր։

Թագաւոր սաց. Մէկէլ թուղթ ըրըշկող կարդացվորքիյը թողէյք թըղ էհան ուրենց տուն։ Նարով դէն (այսուհետե) իմ բամըլդար նէա մարդն ի, էանու կանչիցէյք։

Շիւար ատից ուր չորս պիռ ոսկին, յուրիշ ճամփիսով կնաց ուր տուն։ Էն առջի էկած ճամբիսով չիկնաց, որ օձ վար ճամբին ուր տիսնէր, ուր բաժնի դաւի ընէր։

Շիւարի կնկայ քէյֆ շատ էկաւ, որ էրկա պիրած ոսկու պիռներ տիսաւ։

Թեանիմ տարիմ ընցաւ վերէն։ մէկէլ թագեաւոր էրազմ տիսաւ, որ էրկնուց էրուն կըթափէր, Էն էրկրի մէջ ինչ կանդար կարդացվոր, թուղթ ըրըշկող կէն զըմէն ժողվից, մարդ չըկրցաւ թագեաւոր ինչ էրազ տիսիր էր, էանու մահնէն ի՞նչ էր ըսեր։

Թագեաւորի միա ընգեաւ ուր յիրջին էրազ խանող Շիւար. ամըր էրաւ (հրամայեց) տը պիրէյք ձիկ խամար։

Թագեաւորի խոլամ (ծառան) էլաւ կնաց էն էրազ խանողի տուն, մարդուն սաց. Թագեաւոր քիյկ կուզի, որ էանու էրազ խանիւ։

Մարդ մեաց շիւար, կըսի. Էլ ես ինչին էնեմ. մէկէլ տրուն (անգամ) օձ խապիրիմ, էանու բաժին չըմ տուիր. Էլ մկայ ես իշ ճար անիմ իմ զյլիսուն, վոլա թագեաւոր զըմ պյուս տը զարկի։

Ալ (այլ ևս) յուրուշ ճար չըկայ, էլմ էլ տըհամ մա իմ օձ ախողէր, ան թըղ ձիկ ըսպանի, ան ձիկ ճարմ կանի։

Էլաւ կնաց էլմ էլ օձու քեարի մօտ խասաւ։

Օձ քեարի տակէն տիւս էլաւ սաց. Այ տիւ պարով էկիր, Շիւար ախողէր. քը քէյֆ, քը հալ ի՞նչին ի, տիւ մէկէլ տրուն ձիկ խափեցիր, թագեաւորու տուած մալից ձիկ պաժին չըխանեցիր,

ալու բան չը կայ նէա քէարատին (անգամին) թեազաւոր էրազ տիսեր որ էրկնուց արուն իկեր, մահնէն էն ի որ նէա ժէամեննակ կովու, արուն թափելու ժէամանեակ ի, էն աղէկ թէազաւորմ ի, թըին էասքար լաշքէար ժողվի, ուր երկրին, թախթին մօղեաթ մնայ, վասարմ չը խէասնի էանու:

Բալէ նէա քէարատին թեազաւոր ինչ տա քիկ՝ բիրես. յիր չին թըին մնայ քիկ, նէա գըրու բերածըն բերես կէս քիկ, կէս զիկ:

Շիւարն սաց. Վար եմ աչիչ, թամըլտեմ (բարեց), էլաւ գընաց մատ թեազաւոր:

Թեազաւորի յիրես խատ իլնիլուն՝ սաց. Թեազաւոր ապրած կէնաս, զու էրազ տիսիր ես՝ էրկնուց արուն թեափեր: Նըշանակ ի որ տարին կըսվու, արուն թափիլու տարի ի. էասքար լաշքէար ժողվի, քու երկրին, քու թախթին մօղեաթ կաց, չը զարարվես, քը տուշման քիկ զարար չըտայ:

Թեազաւոր աֆարըմ իտուր էրազխանին, մէկէլ թուղթ ըրըշ-կող կարդացողերուն ճամբախ իտուր, էհան ուրենց տըներ. Է-րազխան Շիւրին քանձ յիրչին դրին էրկու դիր յաւել տըվէց, էրարձ ուր խըզինից փարայ, ջավահըր բառնալ իտուր, յօրօղկեց ուր տուն:

Էրազխանող Շիւարն նէա քէարատին որ նէա ախազին մալ տէսաւ՝ աշկեր մըթնաւ, օձու նէա զըրու աղէկըթըն մոցցաւ. մէկնց (մտածեց) որ ա՞էհամ օձու մօտ, օձ որ տիւս էլաւ՝ քարըմ դանեմ օձ ըսպանեմ, նէա մալ զըմէն տանեմ ձիկ: Չուր եմ թուան թուուոչ խէրիք ի, օձ թշ տանի աստրվորի մալ. խօ համէն օր էլ թեազաւոր էրազ չը տիսնայ, գէօ նէա էր:

Ուր բարցուկ բեռներ կ'առնի, զընկ զընկ կը գիայ օձու քարի մօտ, օձ տիւս գալուն խեմ՝ մարդ կը կըզուի, գէտնից քարըմ կանին՝ օձուն կըզարկի, օձ կըփախի. քար կըզարկի, օձու պոչին կը տիպնայ, կը կտրի. օձու էրուն կը թափի, օձ անպոչ կը մանի քարը տակ, մարդ իր բեռներով կը գիայ ուր տուն:

Շատ չէ քանիմ տարի էլ վէրէն ընցաւ թի չէ, էն թեազաւոր էլըմ էրազմ տէսաւ. տէսաւ որ էրկնուց ցորեն կը թափէր վար երկրին:

Թեազաւոր էլ կարդացվոր, թուղթ ըրըշկող, բամըլտար մարդ չը կանչեց, տօղրու յօրօղկեց ուր էրազխան Շիւարն բիրեն:

Թեազաւորու մշակ զընաց էանու տուն սաց. Շուտ թեազաւոր քիկ կը կանչի. էրազըմ տիսեր՝ որ սես թնչ ի տիսեր և մահնէն թնչ ի:

Էրազխան Շիւարն յախու կըտրաւ յինի. կընկան սաց.

Կընիկ, էլ տօրիս թնչըին անեմ, որ անեմ, օձն էլ արի ձիկ տռւշ-ման, օձու մօտ էնամ՝ օձ ձի տը կըծի ըսպանի, օձու մօտ չէնամ՝ էրազ չըմ գիտի, թեագաւոր իմ գըլօխ տը զարկի: Մարթ թըրի վէրէն կընէր, չէր գիտի ինչ անէր:

Ախըր իտու առեց մէզեց (մտածեց): Էն օր թեագաւոր իմ գըլօխ աը զարկի՝ օձու աղէկըթեն շատ ի ձիկ, ևս օձուն աւըր-թեն էմ արեր, ա'ենամ, թըզ օձ ձիկ ըսպանի, ևս պրծնեմ, կըսի ուր կընկան:

Կինի տօղրի կէնա օձու քարի մօտ թի չէ՝ օձ տիւս կը գիտեմ, Օ՛ բարով, խազար, խազար բարով, Եհւար, անխնլը ախըէր, դու չը մէզըցիր՝ որ թեագաւոր մէկէլ էրազ կը տիւնայ, դու մէկէլ մըլսթաջ կէնէր ձիկ:

Մարդըն սաց. Օձ ախըէր, ես եմ արած գէշըթեն խե քիկ գիտեմ, իկիրեմ յիրջն եմ կապին. ինչըին կուզես էսակոն արա, կուզես ձիկ ըսպանի, կուզես ազատ արա:

Օձ սաց. Ախըէր, դու գէշըթեն արիր, ալա բան չը կայ, ես ազեկըթեն տ'անեմ, Գընա մա թեագաւոր, սա (սաս) թեագաւ-որին. Տիւ էրազ տիսիրես որ էրկնուց ցորեն թափիր, մանէն էն ի, որ խէր պէարաբէաթ իջեր երկիր, թըզ ուրախ ապրի, ու-րախըթեն, քէֆ անի. ալէանու զատ զաւալ (զնաս) չը կայ չուր մախուն թեագաւոր շատ ասարվորի մալ տը տայ քիկ, անչափ բեռներով. ինչ որ կը տայ քիկ՝ բիրես իմ բաժին տաս, նոր ընցնես:

Մարդն սաց. Վար իմ աչիչ, Աստուած ամօթալից չանիր Գնաց թեագաւորի մօտ. Թեագաւորի յիրես էլաւ չէլաւ, սաց. Թեագաւոր ապրած կէնայ, տիւ էրազ տիսիրես երկնուց ցորեն թափիր երկրի վէրէն. մահնէն էն ի՝ որ խէր պէարաբէաթ թափիր վար քը երկրին, չուր ուր օրն մախուն ալ քիկ զաւալ չը կայ, կիր ու խմի, քը քէփն արա:

Թեագաւոր աֆարըմ իտուր մարդուն, շարբաթ, կահվա իտուր էանու. ամըր արաւ մէկէլ էրկու դըրուն քանիմ մալ փա-րա տըված էանու նա քարէատին էրկու ասկոմ բառնան տանի ուր խամար:

Թեագաւորի ամրի կեօրայ բարձին խըզինից գէաւէք ան-չափ մալ, ոսկի, թասլիմ արին էանու, էնա ուր տուն:

Մարդըն ճամբախ էլաւ թախ ուր տուն, մէզեց ինչ մալ կայ տօղրու տը տանիմ օձուն, տիրմ զէն խարիբեմ, տիրմէլ ըս-պանըցի՝ Աստուած զէն ազատեց, նէա կանտար աղէկըթեն արաւ խա ձիկ, ասարվորի մալ ինչ իլե ձիկ, ձի բաս ի, նէա քարէա-տին ինչ կայ՝ տը տանեմ էանու:

Տօղրու ուր բեռներ տարաւ իջըցուց օձու քարի յիրջն. կանչեց. Օձ ախրէր, էրի քու բաժին, մալ, փարէն ի, նէա տար քը տուն:

Օձ դուս էկաւ, սաց. Ախրէր մարդ, ես աստըվորի մալ թշանհնեմ. ֆարազա ես քիկ կըսէ իմ բաժին ըիր. Էն յիրչին դիրոր գու մալեր առիր, յուրիշ ճամիսով գեացիր, աղվէս էջէրէր յերկնուց, հան օր աղվըսու տարի էր, խարելու ժէամանէակ էր, դուն էլ խարըցիր ձիկ, յուրիշ ճամիսով գացիր, էն մէկ դըրուն (անգամին) որ էկար զարկիր ձիկ, պոչս կըտըրցիր, հան օր էրուն թափէրէր էրկնուց, էրընի տարի էր, դու էլ չարըշկըցիր իմ աղէկըթեն ըիկ. եմ էրուն թափըցիր: Մըկայ էլ ցորեն իկեր յերկնուց, խէր պէարաքէաթ իջեր երկիր, ժէամանէակն ի քիկ բիրեր դէա, խա քը մալիրուն ուզէր չուզէր տիւ տը կէր: Բարձ քը մալեր, տռ գընա քը տուն, տար քը խամար. ես թշանհն աստըվորի մալ. ես էրկնուց խրիշտակըմ եմ, էկայ քիկ յիմցըցիլոււ:

Օձը սաց ու փոխվաւ, էլաւ խըրեշտակըմ. թըռաւ զընաց էրկինք, մարդն ուր բեռներ էրարձ, իբեր ուր տուն, կէրաւ, խըմաւ, քէփ արաւ չուր մեռաւ: Զիկ քիկ զատ չը խասաւ*)



*) Պատմեց 1911 թուի յուլիսի 24-ին Շատախի թաղ գիւղում նոյն դիւղացի Շահէն Ակիրիկեանը:

ԹԱԳԱՎՈՐԸ ԿԵՐ, ԷԱՆՈՒ ԷՐԿՈՆ ՂԱՅ ԿԵՐ. Հոյն Պուղոս կը ըսէն,

Թագաւորը կեր, էանու էրկու լամ կեր. ջոյն Պուղոս կը ըսէն, պստիկ Պիտրոս թագաւոր սաց ողբրքերուն (վազիրներին). Խալկին (ժողովրդին) ակախ արէք (իմացրէք) մենք հէտաօր տ'էնանք (պիտի գնանք) սար կանկալ (ման զա) նէճիր (որսի), Դէալալքիր կանչըցին քաղքի մէջ իշ մարդ կայ՝ ճակէր (զէնքիր) առնեն, մենք տ'ենէանք թագաւորի խետ նէճիր էաս առտուն: Թագաւոր կը խէծնի, էանու էրկու լաճերն էլ խետ կինեն տիւս (կը ճանա-, պարհումն), կենեն սարի մէջ, թագաւոր ձեռ կը տայ ուր ծոց կըսի. Հայ, ես եմ դէանակ չըմ բիրեր, իրես կը զարձըցի թէաղ Պուղոս կըսի. Հայ զաւակս, վազի տուն, եմ զլիսու վիրե կանաչ սընտուկըմ կայ, եմ դէանակ մնաց էանու վերէն, առ րի. մկայ կարաւըմ, լըպստրակըմ (նտպաստակ) վէար մի վէր (մեր վրայ) կէայ նէա միլաթ (ժողովուրդ) տըսն, մեր թագաւոր ոչինչ ի, ուր խետ դէանակմ էլ չունի: Պուղոս խէծաւ օլախ (ձի), իկաւ իրջև տան, տիւս տփեց: Էանու մէր խորթ էր, Պուղոս եփ տիւս տփեց՝ էան էկաւ տիււ էրաց, սաց. Դէ ըի (եկ) պէայեա իլի (իջիր), կըսի. Զէ, կանաչ սնտիկ վերէն եմ խօր դէանակ մնացեր ի, շոտ արա խէտոցըցու եմ ձեռ, ես տանեմ, մկայ նէճիրըմ (որս) վէրէն չը կեայ մնայ հայիր (շիւար), Մէր կը հէայ, կըրըշկի (կը նայէ) դէանակ կառնի, էալէա (բայց) չի տայ տղի ձեռ, տղէն կըսի. Հայ մարէ, շոտ արա: Մէր կըսի. Նէա տեղ դէանակ չկայ, տիւ էրե (եկ) ըրըշկի: Տղէն ճար վէրէն կը կտրի, կիշնի տակ կը հէայ թաղ դէանակ, եփ ինչ կը մտնի տուն՝ մէր կը վազի տիւս վէրէն կը շինի: Կըսի. Հայ տղիկ, նէա եօթ տարի կայ, ես քեկ կուզեմ, տիւ տըկէաս խէտ իմ ձեռաց: Տղէն կըսի. Հայ մարէ, տիւ էադ իշ (ինչ) կըսիս. ախր դու իմ մէրն իս, ինչին էասկոտ բէան կըսիս, միր օրէնք չընդունի էատ բէան, վազ կաց ձէնէ, ես շոտ հէյամ խասնեմ: Բէալէ ինչին որ կտնի մէր վազ չի կեայ մօտէն: Տղի ճար

* Պատմեց 1911 թ. Յուլիսի 25-ին Թաղ գիւղում Շեղճանցի Պետությանամեայ, անզըազէա ծերունին:

կը կորի՝ ասկիմ (աքացի) կը դէարկի, մէր կիսկի (կը ձգէ) մէաչ տան, կառնի զուր դէանակ կը հէայ:

Դէանակ կը տանի կը խասցըշի, կըտա խօր ձեռ. կը մտածի կըսի՞ նէա բան գէշ էլաւ. կը դէանամյ ըզվողիր կըխի (կը տեսնի) կըսի. Ողիր, ևմ արած ևմ մօր նէա ի: Ողիր կըսի. Արտված ք'ի բան (բո երես) սնի, բը խօր սնի, բը մօր սնի, ոլէա մինք զըմէն մէջ կէացինք:

Եվարին (երեկոյեան) կը դէանան, կը կէան, թագաւոր կը հէայ (կերթայ) ուր տան տիւռ՝ կը տիսնայ, որ դէարկէն (մէծ զուռ) զըմէն կապոտացըցած ին, կը մտածի կըսի. Տէր Աստված, ես խլիսուն (տուաւու) կէացի բէամ չըկէր մեր տան մէջ, նէա իշկ իշեր, մկայ որ էասնէա (այսպէս) ևմ տիւռ կէապոտացըցած ին, նէա բէամ կայ եմ տան:

Տիւռ կը բանան, կը հէայ գօ թագօն (թագուհին) տեղ դրեր մտէեր ի մէաչ տեղաց, կը խէծայ, խիւանդ ի, տքոց ընկեր ինի, խետ կր զրուցի, թագօն էանու ջըհապ (պատասխան) չի տայ, կըսի. Թագօ, նէա քիկ թշկ իշեր, ես կէացիրիմ, դու սաղ էր, մկայ քիկ թշկ էլաւ էասնէա: Էնկէախ որ Պուղոս անէն էլեր էր տիւռ, թագօն ուր հիրես լօպկէր էր (պատառտել), ուր խալզփքեր (հանգերձ) ճղճղեր էր, խէազէար օյին խաներ էր ուր գլոխ, նոր էր կող իշեր մէաչ տեղաց, տաշտմ էլ նազըք խաց թիւէր էր, թալէր էր ուր տակ, մինդար թէալէր էր վէրէն:

Թագաւոր եփ կը խէարցնի ախր նէա քիկ թշկ իլեր, կըսի. Վաղ կաց, ես կը մեռնեմ, զինք իրար կտայ, կոճկըռոց կընկնի թէաղ խացեր, կըսի. Եմ կողեր զըմէն կոտրտվեր ի: Կըսի. Աղէկ, գէ թշկ ես արեր:

Կըսի. Թանիծած լաճ որ իրի տուն, ձեռ էթէալ թէաղ ձիկ, ես խէատ ձեռաց չը կէացի, էասնէա արաւ խէատ ձիկ: Ետն էան քիկ լէ սըթին տ'անի, ետն ես քիկ կնկըթին, էասկում իլնի տիւ էան սէատէանէայ լաճ օրօխկես խէատ ձիկ էասնէա բէաներ անի:

Թագաւոր կը բէարկէանայ կըսի ուր ողիրքերուն՝ Զէալէատքեր բէրէք, եմ էրկու լաճերու վիզ կտրէք:

Ողիրքեր ջէալէատքեր կը բիրեն որ տղէքերու գլոխ տը զէարկեն, կը դառնան ողջա (խնդիր) կառնեն կըսեն. Էասնէա մ'անի, թագաւոր ապրած կենայ, քեկէն չըկէն՝ նէա էրկու լաճն են, վազ կաց:

Թագաւոր վազ չի գէայ, նաչար վէրնքտեր կը կորի կըսեն. Աղէկ, տուր տանենք սարի գլոխ, վզքեր կորենք, էրուն (արիւն) քե խէամար բիրենք:

Թագաւոր կըսի. Դէ տարէք, նէա դէարի քէամակ վզքեր

կարէք, էանոնց խէալըվքեր ձը խէամար բէրէք էրնի խետ, որ ես էանոնց էրուն կուշտ խմեմ:

Ողիր էն էր՝ որ տղէն ինչ որ էկէր էր գլօխ՝ պատմեր էր էանու, էլաւ գնաց տուն, խուրդին լիք ոսկի արաւ, էրկու դէաստ խէալաւ տարաւ, էրկու ձի տարաւ, էրկու տղէտեր առեց, դէացին սար, էանոնց խէալըվքեր էխան, թէաժա խալըվքեր խէացցոց, ոսկին կապեց զէար ձիոն, սաց. Կէացէք ձիկ (ձեզ) խաց չկայ նէա էրկիր, մինք թագաւորի ջրհապ տը տանք, էրկու տղէտեր դրին ճամբախ, դարձան էանոնց խին խէալըվքեր ավին իրջն թրի բրդեցին, ոխչարըմ զինըցին, թաթինըցին մէաչ էանու էրնին, տարան դրին իրջն թագաւորին:

Տղէտեր ուրենց օլըխքեր խէծան, խինգ օր, խինգ գիշեր, խինգ ցէրէկ չէջէան տակ, քշըցին չում ուրենց խօր խողից էլան տիւս, քաղըիմ դէմաց ընկէան, ախրիւրըմ տէսան, Պիտրոս սաց. Հայ ախրէր, նէա խինգ օր կայ որ մինք նէա կիրերենք, նէա խմերենք, մեր օլըխքեր էանթի ծարաւ են, իջնենք նէա ախրըի վէրէն, փշում խաց ուտենք որհաթենք, ախր քէաղաք զէօ հէան մեր դէմ, նոր կը էանք, կը խասնենք, Պէայեա կելնին (իշնում են), գեամ օլըխքերու բէնից կը խանեն, խուրդի ոսկին կը զնեն էարջն ուրենց, խաց կը խանեն, կուտեն, Պարսու կիւք (քուն) տարաւ, բնաւ, Պուղոսի սրտին չէխան որ ախրէր խանէր վէր, ինք թիկնաւ վէար կողին, թէամէաչէա կանէր զ'ուր ախրէր ուր կուքն էլ տարաւ՝ բնաւ, բիշմ մեաց էակէախաւ, կըրըշի ախրօր ծոցից սև ջոշ օձըմ ընկէաւ տիւս, տէսաւ որ ախրէր ուռեր, իլեր քեանձ կօֆնիմ (կովի տիկ), կըտայ մէաչ ուր զլխուն, կը պոռայ, խուրդին կը զնի ախրօր զլխուն, կը խէծնի ձին՝ կէաստ (դէպի) քաղքին կանի որ հէքիմըմ բիրի վէար ուր ախրօր. կը խասնի քաղքի մէշ, դոր որ կը պըտըտի՛ խէալորից չում եօթ տարէկան մարդ չը տիւնաւ մէաչ քաղքին. կըլէայ, կը մըռնուայ, եման հէքիմըմ կը կանչի՛, փողանըմ կը մտնի՛ խէալորիմ ուստ կը կէայ, կը խէարցնի կըսի. Հայ մարդ, կնա քաղքի քէամակ, մեր թագաւոր մեսեր ի, էանտեղ դէավլէաթ կուշի կը թէալեն, խենք վէաւ ելնի թէազաւոր, գնա էանտեղ՝ ինչ մարդ որ կուզես՝ տը տիւնաստ:

Պուղոս կնաց խասաւ էանտեղ, տէսաւ որ միլաթ զըմէն գէօ էան տեղն են, իտու մէաչ ուր զլխուն, սաց. Հայ հէավար հէքիմըմ: Տէահը (թոչուն) թալցին, էանկէանդէար խուրեաթի (ժողովուրդ) մէաչէն իրի թառաւ վէար Պուղոսի զլխուն, էն էլ էղէար դէահրին սաց. Մէայ իմ խէամ դէարդ տիւ ես, իկիրես կը թէառս վէար եմ զլխուն, Տէահը կը կախվի մօտէն, չը զէատէանայ:

Մարդեր խասան բռնցին զ'էն, տարան արին թագաւոր, ախրէր մնաց վէար յախրըին, անտէր արտիրական, Պուղոս կը պօռայ, կը կանչի, եման եման կանի, կըսի. Եմ դէարդ կէասաֆէաթ (վիշտ) թագաւորթին չի, եմ ախադէր մնաց անտէր անտիրական, թարպիրըմ (ճար) արէք:

Պիտրոս մնաց ուրահղ, օրըմ բարվանըմ էկաւ, յախրուր տէսաւ, մօտացաւ, տէսաւ որ տեղմ կայ վէար յախրըին, մարդըմ գէօ ինի, խուրջիմ ոսկի տրուկ ի գլխուն, կը տիսնայ կըսի. Էաջէպէա (արդիօք) նէա մարդ որ ակախ (արթուն) էլնէր մեր պօռպօռալուց, տավրիբերու ձէնից ախր տ'էակէախէր (կը զարթնէր). նէա մարդ ասնէմ (այսչափ) ուռեր ի, նէա օձ ի կծեր, Թարվանպաշին մօտացաւ տէսաւ որ շատ կեղեցիկ տղամ էր, խօրօտ էլ խագուն նսփուն, ոսկին էլ գլխուն դրված, սաց. Ոլէա նէա ոսկին դրած են նէարու գլխուն, որ վէաւ որ զէն ժըրըցըցի, (առողջացնի) ոսկին տանի ուր խէամար: Ուր խուրջու (բակեղաթ) բէրան կը բանայ՝ ու դեղեր կը խանի կը դեղի, սըհէաթ կը բռնի, կը տիսնայ որ քիչ քիչ ուռոց կիշնի. թի սըհաթըմ, թի էրկու՝ կը տիսնայ որ տղէն ուր զլօխ կը վրցի, կը պօռայ. Հայ ախրէրս, Թօր քարվանպաշին կըսի. Հայ տղայ, քիկ զէատ ախրէր չկայ էստէա, օձ քի կծեր, տիւ մեռիր ես, գէօ ես քիկ դիղեցի ժըրար, մէայեան (ճիշդ) ք'ախրէր կէացեր քիկ խէամար հէքիմ բերելու: Պիտրոս կըսի. Վէար էասկոն ի, նէա խուրջին ոսկին քիկ, ես աըհէամ եմ ախրօր խասնեմ:

Հէքիմ կըսի. Տղիկ, ձի խէարամ ի կացեր քը ոսկիք, տէար խէատ քիկ, տիւ ջէէլ ես, վէար քիկ կը խրջես:

Տղէն կը խէծնի ուր օլախ, դէաստուր (հրաման) հէքմուց կուզի, կը հէայ մէաղրէապին (մթանը) կը խասնի քաղաք, մարդ չը ճէանչնայ, կը հէայ ջոշ տիւռըմ ոսաս կը գայ, տիւռ կը աըփի, ողիր կըսի ուր քոլին (ստրուկ). Մէախասի (հասիր) նէա վաւ ի իկեր մեր աիւր կը տփի:

Թօլէն կէնինի տիւս՝ կը տիսնայ որ կէղեցիկ տղէմ գէօ վէար ձիուն, նէա ուտէն, նէա խմէն՝ հինի ըրըշկէն: Թօլէն ինչ որ կը տիսնայ՝ քէամակ կըտայ պատին, կըրըշկի ուր մօտէն էլ բէան չի պէայ:

Ողիր կըսի. Եմ քոլէն հէանէա կէանաւ, չիլնի՛ աւեր մարդըմ էր զ'եմ քոլէն ըսպանեց, կէլնի տիւս, կը տիսնայ որ քոլէն գէօ քէամակ տվեր պատին թէամէաշէա կ'անի: Զտղէն իրի տակ ձիուց, էանու ձին տարաւ փէարկէախ, զ'էնէլ տարաւ ուր հօղէն, բէարձեր էթէալ, լրխէփ, դօշակ էթէալ, խաց, բէան հէազրեց, կէրան, խօշ պէշ էլէան, ողրի աշկ ընկեաւ ըզխուրջի ոսկին,

էլէան քնան, ուր քոլէն առեց, կնէաց վէար տղի տեղաց. տըս-վէրկու խէանջէալ էղէար, տղին ըսպանեց. Գիշերնով զ'տղի ջէանդէակ դրին մէջ մութափին (տոպրակ) տարան թալիցին գետ. գետ զ'ջէանդէակ կը տանի իէասկէացըցի ջէաղէացպանիմ պօտ (նաւ). Չուր կը կտրի, ջէաղէացպան կէնի կը տիսնայ որ մութափէմ կայ ջրու մէաչ, կը խնդէանէայ կը ի. Խենք նէա ԲՇ ապրանք ի, Կառկի կը տանի ջէաղէաց. ճրագ կ'անի, մութափի բէրան կը բէանայ, որ տիսնայ, որ նորէախաս (նորահաս) ջը-հէլը դրած են մէաչ էն մութափին, կըրըշկի կը տիսնայ, որ տըսվէրկու խանջէալ տված ին կողեր. պարէ (քայց) էրակըմ տէալ (գեռ) կը թըրթիայ, Դէօր ջէաղէացպան կէնի կը վէաղի, ուր հէրիմը կայ՝ կը խասնի էանու տիւռ կը պօտայ, կըտայ մէաչ հուր զիլսուն կըսի. Հայ հէավար խասի, Հէրիմ կէակէախի կըսի. Հայ մարդ, քիկ ԲՇկ ի իլեր:

Կըսի. Զիկ մէկ որդիմ կէր, նէա եօթ տարի կայ որ եմ մօ-աէն կէացեր էր, մկայ իկեր ի, ճամբախ չըմ զիտի վոր զալըմ խասեր, տըսվէրկու խէանջէալ տվեր հընթըտակ. եան խասնես, եան չը խասնես, շոտ արա, իլի վէր:

Հէրիմ ճար կը կտրի, կենի կը կէայ կըրըշկի, կը տիսնայ որ էրակըմ սաղ ի, գեղմ կը տայ կըսի. Նստի մօտ չում խլիսուն, թի որ խօսեց չխուռ աը ժրի, թի որ չէ ումուտ կտրի մօտէն: Կը թողնի կիհէայ:

Ջէաղէացպան էլ կը նստի իրիսվէր կը տիսնայ որ զօմ (մէկ) ուս իրար կ'առնի, զօմ ձեռ իրար կ'առնի, զօմ լիկիխկոց կընկնի զլէզուն, չում էառէաւտուն մէկ էլ կը հէայ զէէրիմ կը բերի, կը գեղի՝ կը ժըրըշըցի. Կանի ուր խոդէաղէավակ. ամիսըմ էրկու կը մայ. Պուզոս որ թագաւոր էր, ուր խէամ դէարդ զը-մէն կէախ ուր ախրէրն էր, նէա թագաւորթընին կըրըշկէր, նէա ուրիշ բէան կանէր, աէայիմ (միշտ) կը պօտար. Ախրէր, տիւ եմ մէշկ կոտրցիր, տիւ ձիկ մեռցուցիր:

Օըմ կիլնի գէալալ կը տայ կանչել կըսի. Զըմէն մարդ թըզ հազըրմի, կէան էհէանք կան կէալ, որ էրըշկի ուր ախրէր խինք չը տիսնայ մէաչ էանոնց. Դէալէալ կանչըցին, զըմէն մարդ ժողվըվան, թագաւոր էրաման արաւ ուր ողիրքիր, հէյաթ զըմէն ընկէան կէան գալ, որ ուր ախրէր կընտանեն: Էն օր խինդ կուռուշ փարա կընկնի ջէաղէացպանի ձեռ, կըսի տղին. Տղա, տիւ եմ ցեղ (պէս) չըս ապրի, առ նէա փարէն, կընէայ հէամամ լողկէացի, քը կլօխ տուր կնտել, դէարձի մէա ձիկ:

Տղէն փարէն առեց, կնէաց տեղըմ, ողիր էանու ռաստ էկաւ (հանդիպեցաւ), զ'էն ճանչցաւ, նեղ փողնիմ մէաչ էր, ձիով

ուղբէպեց վէրէն, որ սպանէր, պատճառն Բշկ էր. տիրըմ սպաներ էր, ոսկին առեր էր, մկայ էլ կուղի ըսպանի որ ուր խէամար թէալէայ չը ծնի: Զին իտու վէրէն ընցաւ, տղի զլօխ կոտրաւ: Ողիր մէկն էլ դէարձաւ, պալէ փողան նեղ էր, ձին չը զըվուաւ (չդարձաւ), տղէն փախաւ, գնաց ջէաղէացպնի մօտ. խէր կըրըշի կը տիմայ որ տղէն էրնճապաղ իլեր ի, կըսի. Տղիկ, նէա Բշկ իլեր քեկ:

Կըսի. Ուա ողիր արաւ խէա ձիկ: Սորա թագաւոր իշկէանդար կան իրի՞ չը տէսաւ ուր ախրէր, գնաց նստաւ ուր տեղ, ահամ չունի հքմըթից, ակախի չունի թագաւորթնից, իլէա ուր դէարդ կասէաֆէաթ ուր ախրէրն ի:

Օրըմ ուղալքողարքեր (պալատականներ) կիլնին կըսեն. Հօրօխկենք Գորջստան էրկիր, մեր թագաւորին կնիկըմ բիւրենք, բալքի ուր ախրէր մոռնայ, մեր գործիրուն ըրշկի, էասնէա չէլաւ Խօսք արին մէկ, ուրենց դէանկիր (բեռներ) կապըշին, բէտոցին, կէացին ծովու պռուկ, որ նստին գեամին, հէան Գորջստան, ուրենց մթէն (ապրանք) ծախեն, գորջիմ (վրացուհի) գնեն, բիրեն ուրենց թագաւորի խմար:

Ողիր ուր քօլին սաց. Ինաս ֆլան ջէաղէացպնի լաճ տանիս խետ, եփ ինչ կը խասնէք վէար ծովուն, ձեռ բռնիս թէալես ծով, բէտալքի պոծնենք մօտէն Թօլէն զնէաց ջէաղէացպանի տիւռ տփեց, ջէաղէացպան էլաւ տիւռ սաց. Ի՞շ կըսես:

Սաց. Իկիրեմ քը լաճ տը տանեմ Գորջստանի էրկիր:

Կըսի. Հէայ հէաւար, հայ մէտաէաթ, ես ծիրացեր եմ, ձիկ մարդ չկայ՝ էասկընէս մէք անի խէա ձիկ:

Կըսի. Զընի, թագաւոր հրաման արեր ի, կը տանենք:

Ջէաղէացպանի հար կը կարի, զլաճ կըտայ, կառնի կըտանի:

Թօլէն զտղէն առեց, գէացին ծովու պռուկ, մալեր լցըցին մէաչ գէամուն, իրես արին թէաղ Գորջստան էրկիր, կէացին կէս ծովուն, քօլէն ընկրքիրուն սաց: Ողիրի էամին ի որ նէա տղէն թէալինք ծով, տղէն հէաքի (ինչպէս) մոմ էանոնց յիրջն կը վէտովէր, էանոնց կրակը կը վառէր, կեր կէփէր, կալուն կը կրակէր, ջուր կտէր, որ հասլի զըմէն բէան կանէր: Մարդեր սեցին. Նէա մարդ ափսոս ի, թըդ կէնայ, էան տիղէն դէառնանք խասնիք ըստէակ (այստեղ), նոր կը թէալենք ծով:

Թօլէն սաց. Էան էլ աղէկ ի:

Կը գէարկեն կը հէան Գորջստան էրկիր, կը թէամին զա, խանըմ ուրենց խէամար տը գնեն, զ'ուրենց փառօք փէարթալ կը ծախեն, գորջստանին կը գնեն, էփէնդըմ, գօրիս խոն թագոյիմ կան իկին, որ ուրենց թագաւորի խէամար գնեն, շատ կան

իկին՝ թագօմ կնտէան, ուրենց թագաւորի խէամար գընըցին։ Ամէն օր տղէն կը թղնէին մէաչ խանին, կէրթէն ուրենց խէամար կան կիալ։ Օրըմ տղէն կիլնի խանի տիւռ, կը զարկի կը հէայ խանի բէամակ, կը տիսնայ որ պատիկ սարէմ կայ էան տեղ, մէաչ էանու ախչիկմ գէս նատեր փէանջէարէն, աղջկան աշկ կընգնի զ'տղէն, սրտով հէաւասով կուզի զ'էն։ Դօր կը կանչի վէար տղին կըսի. Տղէկ, էրի ըստա. Տղէն կը վէախէանա, կը փախի։ Աղջիկ ձեռ կը գէարկի ուր մէջք, թիսդիկըմ ուկի կը թէալի իրջն տղին, տղէն կըրըշի կը տիսնայ քիսիկ՝ կ'առնի, կը հէայ ուր տեղ, ուր խէամար ջուխտըմ աօլ կ'առնի, սալթէմ կը գնի, կը խակնի. հրկուռ ընկըրքեր կը կէան, կըսեն։ Հօ, ջէազէացպնի լաճ քըպար չի, հիշունց կըտան, կըսի. Դօ ջանըմ, ես ջանըմ, ես ձիր քսուց զատ չըմ կիրեր, չըմ խէակեր, թագաւորի սայից եմ խօր ձեռ յիսուն քառսուն կուռուշըմ ընկէր էր, իտուր ձիկ, մկայ ես վէար ձիկ կը իրջեմ, ըշկի էասնա կանէք խէատ ձիկ։

Խլխուռ ընկըրքեր տիրմ էլ կը հէան տիւռ, էն կինի տիւռ կը շինի, կը հէայ սարի կող կան կէալ. աղչիկ ուր բէսլամին (աղախին) կըսի. Գնա նէա մարդ բանի, բէախտ (վլտահութիւն) տուր, առ բիր բէանձր։ Բէսլամէն կիջնի տակ, կը խասնի, զաղէն կը բանի, կըսի. Աստծու բէախտ քիկ, էրի հէանք եմ խանըմի մօտ, մէկ էրկու բէան քիկ սի (ասի), դարձի ետ։ Տղէն վէախ վէախելէն յիտև բէալէամին կը հէայ, կիլնի բէանձր, կը տիսնայ ուկի աթու դրուկ, ջէավանքբեր մօտէն կախուկ, աղչիկ կը խասնի տղի ձեռ կը բանի, կը նատըցըի վէար աթոռին, ուր կուշտ, չայ, կէանվա, շէաքէար, շէարբէաթ, խաց կը բիրեն կուտեն, կը խմեն։

Աղջիկ կըսի. Հայ տղայ, տիւ գիտես եմ դէարդ թշկ ի, ես քիկ բիրիք եմ ըստէակ։

Կըսի. Թշկ ի, խանըմ։

Կըսի. Եմ աշկ ընկեր ի ըգբիկ, ես քիկ ա'առնեմ, գիտեմ ես վիր աղչիկն եմ, ես թագաւորիմ աղջիկն եմ, որ հքմէաթ զըմէն եմ ձեռն ի, նէա թագօն որ ուղցին ձիր թագաւորին՝ եմ խարամ խողամի ի, մկայ ես քիկ սիրերեմ, տիւ էլ ձիկ կը սիրեմ։

Լաճ կըսի. Եմ բէնից աւել ի նէա բէան, տիւ մէա նէա փառքին, ես նէա շիւար մարդ։ Թնջին ձիկ տ'առնես։

Կըսի. Տղէկ, ես քիկ ընդուներ եմ։

Լաճն էլ կապուլ արաւ. Աղջիկ հօրօխկեց տէրտէր իրի, կարգ կէատէարեց, փսակվան։ Դօրիս հէամէն օր ընկըրքեր եփ կը հէան քաղքի մէջ, տղէն կը հէա աղջկան մօտ, չում հրկուն։ Տը-

դէն կը նստի իշ որ իկեր ուր գլուխ զըմէն կը պատմի աղջկան, էն էւ կը գրի, կը դնի ուր ջօպ:

Աղջիկ կոի լաճուն. Հայ մարդ, հասօր ըշիյեար կաց (արթուն կաց) վէար քիկ, եփ որ էնաք, էրկու օր առաջ ձիկ խէարէար արաւ:

Տղէն հէար կէնէայ կըսի. Ե՞ս ա'իննենք տիւս:

Կըսեն, Դէօ վաղ չէ մէակէալ օր ա'էլնենք տիւս. տղէն կը հէատղչկան կըսի. Վէաղ չէ մէակէալ օր ա'էլնենք տիւս:

Կնիկ կոի. Ես հէասօր նէաջարքեր (հիւսներ) աը բիրեմ, սանտուխըմ կը տամ շինել, էրկու մարդու տեղ. բէանի՛. օր աը խասնենք Անեկայ քաղաք՝ էասկու աւուր խաց թաց աը ծեմ (ածեմ) մէշ, կօպդէս բէալնիս մէաչէն աը տամ շինել, մարդ չը գիտնայ էանու ախու վմբն ի: Ես աը մանիմ մէաչ սանտուխին, եմ բէսլէամին կը սեմ հէամալ բիրի ձիկ բիրի ձիր խանի տիւռ ծախի, մէկ կողմէն էլ սեմ ես տըհամ եմ խօր տուն, որ էն չը գիտնայ ես սանտուխ մէշն եմ, պէալէ սանտուխ չում խէազար սանտուկ ոսկի էլ իինի, չը թղնես ընկնի մարդու ձեռ, ես գէօ մէշն եմ, գիցի, առա քիկ խէազէար խէազէար ոսկի, տար որ զին անես:

Մէկ էլ օր աղջիկն մտաւ սանտոխի մէշ, սաց. Ես ա'հէամ եմ խօր տուն, նէա սանտուխ տուր համալքիրու քէամակ, տար ֆլան խանի տիւռ, դէալէալ տուր կանչել, թըդ սեն. Հէյ, վէաւ նէա սանտուխ առնի՛ փօշման ի, չառնի՛ փօշման ի:

Բէսլէամէն էլէաւ վէր՝ խանըմի ըսածքեր կէատէարեց, սանտուխ իտու համալի քէամակ, իտու կանչել. Հէյ, վէաւ նէա սանտուխ առնի՛ փօշման ի, չառնի՛ փօշման ի:

Մէկ սաց՝ յէարդ կայ հինի, մէկ սաց՝ ոսկի կայ հինի, մէկ սաց՝ դէարտակ ի, նայիսա գին արին, բէանձրացաւ չում խարիր ոսկի, որ յառաջ տանին. տղէն խասաւ յավըցուց, առեց տարաւ խան:

Մէկէլ օր էլան զ'ուրենց բաներ տարան ծովու մօտ, որ զընեն գիտմին, ընկրքեր կըսեն. Ասկուն իինի տիւ ջէաղէացպանիմ լաճ էլնիս՝ սանտուխ տանես խետ:

Կըսի. Հիվի կանեմ (խնդրում եմ). ուշջա կանեմ (աղերսում եմ) եմ խէր խէալվոր ի, ուր խէամար խաց բէան կը դնի մէշ, ձեր քոէն իշ կը հէայ, ախոր քըէն թագաւոր կը տայ:

Դօրիս ուրենց գէտաեր թէալցին մէաչ գիտմուն, կաստ ուրենց Անիկայ քաղցին արին: Գիշիր ինչ որ ընկրքեր կը քնին, տղէն ուր մատ կը զէարկի վէար սընտկին, տիւռ կը բացվի, կը մտնի ուր կնկան մօտ չում խլիսուն, էլլմ կէլնի կը նստի ուր

տեղ. աղիս սեմ, կնիկ ուր մարդուն կըսի. Եփ Բնչ նօպաթ կը խասնի քիկ՝ քի ուր թալեն ծով, սանտուխ տանես թէասլիմ անես թագոյն սա. Ես ջէաղէացպնի լաճն եմ, մարդ ի, մախ, մեռնել կտյ՝ կիլնի ես մեռնեմ՝ նէա սանտուկ թասլիմ անես եմ խօր՝ քի վէարձք ի, մէաչ զիամուն կան կիհաս կոճ կայ մէաչ, կոճմ առնես, բը խէալավեր խակըցես զկոն, զնես վէար զիամու պոկին (եղրին) կէաս մատ զարկես վէար սնտկին, մտնես եմ ծոց, էանոնք չխու (արդէն), կոճ որ թէալեն ծով քը բէաղէալ.

Մնաց չում նօպաթ խասաւ տղին, մարդեր ուրենց խէարըը-քեր արին մէկ, որ զէն թէալեն ծով, սեցին. Հասօր նօպաթ քոն ի, իլի ակէախ կաց: Տղէն էլաւ սանտուխ կըրկնեց, տարաւ մէատ թագօն՝ սաց: Հայ թագօ, ես ջէաղէացպնի լաճն եմ, եմ խէր խալըրցեր ի, էանու խէամէար առեր եմ որ ուր խաց տնի ինի՝ մուկ վըրէն կէան չը կէայ, հասօր նօպաթ եմ ի, վէաւ կիտի, երկիր մախ, մեռնել կայ, սանտուխ առ քը մօտ, կիլնի որ ես մեռայ՝ տանիս եմ խօր թէասլիմ անես:

Թագօն կըսի. Հայ տղէկ, Աստված չանի տիւ մեռնես, տիւ նէա խօրօս տղէն, մարիֆաթի մարդ, ես մեռնեմ տիւ չմեռնես, տփսոս չի՛ տիւ մեռնես, ուխտ էլնի վէար եմ ջանին, Աստված չանի քիկ բէամ ինի՝ նէա սընտուկ որ հէա քը խօր ջէաղէաց:

Էն էլ կնաց նօպաթ բռնեց, արաւ հէալէա. հէալէա (աղմաւէ) չում խալկ քնան. կան իրի կոճ կնդաւ, զուր խալըքեր էխան, խէագըցց զկոճ, իրի, մատ էզէար վէար սանտուխին, կնիկ տիւս էրաց, մտաւ ինի, տիւս շինեց: Ընկրքեր էլէան կոճ բռնըցին, թէալցին ծով: Էասէատուն թագօնին էլաւ սաց. Հուր ի ջէաղէացպանի լաճ, լաճ չկայ, տոր կան իրի չը տեսաւ, ըըրշկեց տեսաւ որ տղի ֆաս գէօ վար ծովուն, սաց. Հայ հէաւէար մէատէաթ, նէա լաճ ըշկի՛ թալիցիք ծով, էանէա խելացի տղէն, եմ աշկեր կորնէր:

Ուրենց ճամբախ գացին, չում խասան Անեկայ քէաղքի մօտ, ջնապ տվին ոզիրքերուն, էկան անոնց, դիմաց տարան որ տը խանեն աիւս: Թագօն սաց. Ես չըմ ինի տիւս, նէա սանտուխ ամանաթ ի, առէաջ զէն խանէք, որ ես եմ խետ տանեմ: Զօրն-տուկ խանըցին, մէկ տեղ առին գացին թագաւորի տուն:

Հրկուն թագաւոր կառնեն կը տանեն թագօ մօտ, էն կըկա կը տիսնայ ուր կնիկ, չխու հինի չըրըկի, կսի. Ախ ախորէր, տիւ նէա իշկ արիր խէատ ձիկ, իմ աշկեր քոոցըցիր, խաց, շէարքէաթ, կահվա զըմէն բէան, ինչ որ բերին, չը մօտեցաւ, ախ ախոց իտիր հինի, կող էլաւ քնաւ, չխու խէարէար չէլաւ թագօ մօտէն, թի օրըմ, թի էրկու, թի իրիք, էապքան մնաց թագաւորթնի փառ-

քի, համէն որ եփ թագօն կելնի կան կը դայ մաչ սահրին, էանու խամար խաց կը բիբեն, կը գէայ տիսնայ որ ինք դալ չը կիբեր զուր խաց կը խմնի, կըսի. Սև կապեմ, տըսեն նէա թագօն աշ-խար զըմէն տ'ուտի, նէա թշ բան էր, ստա բամ կայ, կը մտածի կելնի խտե դռան պախ կը տնի, կը լանի մաչ հօտին զըրընկո-ցըմ կելնի, կըրըշկի կը տիսնայ որ ուր խանըմ մաչ հօտին կայ-ներ ի, կը ճանչնայ, կը պաղի, կը մնայ:

Խանըմ որ տեսաւ, սաց. Թագօ, ձէն ըը մօտէն կէայ տիւս ես քը լէզուն քը պէցնակվէր ուր քէշեմ տիւս:

Էանէլ կսի. Խանըմ, եմ բերնից աւել ի, ես իրջն քի խէա-բար տամ թնչիս քը բէաս տ'անեմ:

Խանըմ կըսի. Թագօ, եփ ինչ ըրկուն թագաւոր կը դայ տուն ուր խաց բան չուտի. մատ զար վէար եմ սնտկին, սա. Ռնտէւկ, սնտէւկ, թ'ամպած սիրես, պատութինըմ արա, պէալքի թագաւոր կիախ ուր ախրէր մոռնայ, ձիկ բիրի ուր միտ:

Հրկուն եփ թագաւորի ընցան իրջն, բերին հէարէամլըզ, (կանանց) էլըմ պօսաց. Ախ, ախրէր, ախ ախրէր, ոչ խաց կէրաւ ոչ խմաւ թագօն վազեց վէար սանտուխին սաց. Սանտուխ, ք'ամ-պած սիրես, տիւ կըսէմ անես իմ թագաւորի խամար, պէալկօմ փշում ուր ախրէր մոռնայ, ձիկ բերի ուր միտ:

Են կեախ նազըք, բարա'լ ձէնըմ ընկաւ տիւս, սաց. Թագօ, ես թշ կըսէմ անեմ քի խէամար:

Սաց. Դու գիտես:

Սանտուխ սաց. Թագաւորըմ կէր, էանու էրկու լաճ կէր, մէկի անուն Պողոս էր, մէկին Պիտրոս Թագաւոր նէա բէան որ լսու՝ մտքի մէշ սաց. Ուա եմ անուն Պողոս ի, եմ ախրօր անուն Պիտրոս, նէա տեղ բէամ կայ եմ տունակու (աւեր) խատ Պիտրոսն:

Սանտուխ սաց. Օրըմ թագաւոր կնէաց նէճիր, լաճ օրօխկեց տուն թէախ ուր գէանակ, էանու խորթ մէր ձեռ էթալ հինի, լաճ չըկնաց խէատ ձեռաց, մէր էլէաւ զինք իրվնդցուց, թագաւոր իրի տուն, սաց. Թիկ թշկ ի իլեր. Սաց. Քը լաճ ձեռ էթալ թէախ ձիկ, չը գէացի խէատ ձեռաց, էասնա արաւ խէա ձիկ. Թագաւոր էլէաւ զուր էրկու լաճեր տըսպանէք' ոզերքեր տարան սար, մաքիմ զի-նեցին, անոնց խէալըվեր թէաթիցին մէշ էրնին, բերին թագաւորին շանք տվին. ուրախցէաւ Տղէտեր կէացին ճամբէախ ընկան վէար յախրըրին քնան, օձըմ էկաւ. Պիտրոս կծեց. ախրէր զնաց քաղաք հէքիմ բիրելու, գէավլաթկուշին թէալցին իրի վէար էանու գլխուն, տարան արին թագաւոր, ախրէր մնաց մէաջ էան հալին. քարվանպաշիմ էկաւ դեղ իտու, ըզՊիտրոս ժըրըցըցուց, էալ չըմ գիտի թնչիս էլաւ:

Նա բէան որ թագաւոր լսաւ՝ էլաւ խասաւ թէախ ուր թագօն, խօշ պէշ էլան:

Սաց. Համէան եմ ախրօր ժըըթնի ձէն լսայ, բաս իւ Քնաւ չում լոսցաւ, էկան թագաւոր տարան վար թէախթին, էասկուն մարիթաթըմ բէասցըցուց, որ երկիր զըմէն զարմացան, սեցին՝ խողի մինք շոտըմ թագաւորին կնիկ բէրէնք, որ էասնէա ուր ախրէր մոռնէր, մեկ թագաւորթեն անէր:

Մնաց չում հէվարին՝ էլըմ ընցան իրջե, տարան տուն. զնէաց ինք մատ էզէար վէար սանտիսին սաց. Աստված սիրես էադ մարդ զումարնէկ (վերջին) թնջին էլաւ:

Սաց. Գնաց էլաւ քաղաքըմ, էլաւ ողիրին մէյլան (հիւր), ողիր էանու կէտար արաւ բէալէ եփ որ տիսաւ խէտա էանու խուրջիմ ոսկի կէր՝ գիշեր բռնեց տըավէրկու խէանջէալ էզար թիվի տակ, տարաւ էթալ գետ, էանու ոսկիք առեց, էալ չըմ գիտի ինչյա էլաւ:

Թագաւոր որ լսաւ, ինկէաւ վէար ճնկներուն չում լոս ախ, ախ արաւ, չը քնաւ, առատուն էկան տարան հէամամ, առին տարան վար թախթին, թագաւոր էլըմ շիտա չառնի. ուր մօտ նստող ողիր որ կը տիսնայ էասկոն՝ ինչ ուր խօր սպանօդ կայնի ուր առաջ, կըսի. Զինլի՛ նէա ողիրն ի արող. նէա խիտ կը զրուցի, նէա էն: Հրկուն կնցնեն հէառաջ, էլըմ կը բերեն տուն: Դիրմ էլ կընէա վար սանտուխին, մատ կը զէարկի կսի ք'աստված սիրես, տիւ բը կսէն թըմըմի:

Զէն տիրմ էլ կսի. Լաճ որ թէալցին գետ, զնէաց էասկէացաւ շէաղցիմ պօտ, շէաղացպան էկաւ ըըզկեց, տեսաւ որ թօռպէմ կայ մաչ բօտին, առեց, տարաւ, էրաց, տեսաւ որ լաճըմ կայ հինի՛ նէա ուտեն, նէա խմեն, թոմաշէա անեն. զնաց ուր հէքմուն կանչեց, էկաւ դեղ իտու ժըրցցուց, արաւ ուր լաճ, օրըմ թագաւոր մարդ իսկեց մաջ երկրին՝ ուր ախրէր ըըըշկելու, կան իկին չը տեսան: Խէր լաճուն ըսեր էր. Իլի զնա խինդ կուռուշ տար, քիկ տու թրաշել. լաճ զնաց, ողիրն սաստ էկաւ, նեղ փողանմ էր, ողիր ձին թշեց վար լաճուն, որ սպանէր, լաճ փախաւ, զնաց խօր մօտ: Մնաց չում օրմ՝ խէալկ էլէան թագաւորին սեցին. ինէանք քիկ թագօմ բիրենք: Էլէան ընկէան յիրար որ աըհէն՝ ողիր էլըմ իր քօլին սաց. Գնա շաղէացպանի լաճ տարէք խէտա ձիկ, թէալէք ծով. էլէան գէացին, զոռով շէաղէացպանի լաճ տարան խետ. վէար ծովուն տըթալէն ծով՝ տեսան որ ուրենց խամար շատ բէան կանէր, ափասուացին, սիցին. Թըխ մնայ չում էան տեղէն տառնանք նոր, գէացին չում Գորջատան, խանըմ բացին, ուրենց մալեր ծախեցին, անտեղաց մալեր առին. թագօմ կնտան առին. Էն լաճ օրըմ ուր խանի տիւս շինեց, զնէաց կան-

դէալ՝ աղջիկմ նստեր էր փէանջէարէն. կանչեց լաճուն, լաճ փախուա, փարու էթէալ, տոեց տարաւ, ուր խամար սու, սալթէմ առեցմէկէլ օր դիրմ էլ գնաց, աղջիկ զուր խոտէամ հօրօխսկեց, լաճ տարաւ ուր տուն, լաճ ուր կասէն էանու խամար արաւ, աղջիկ դիւց տէրտէր իրեր, փսակեց վար ուր, Սաց. Գնէա քը ընկերքերաց խէասկացի մէա խնչք թի տըհէք, իրի ձիկ խէարէար արաւ լաճ ուրենց հէալու օր խէասկէացաւ, իրի էանու սաց. Աղջիկ սանտուխըմ իտու շինև, ուր և լաճու զպրէն իլից մէջ, լաճուն սաց. Ես աը մանեմ մէաչ նէա սնտկին, տամ հէամալի քէամակ, առա քիկ ոսկի, եփ ինչ կը բիրեն ձեր խանի տիւռ ծախեն, քէանիմ կէնին եմ սնտուկ առնես, էասկոն արաւ, լաճ կնեց սնտուկ, տարաւ խէալէն (նաւահանդիսա) որ աը տնէր գեամին՝ ընկըրեր խետ կովան, սաց. Խը ա'իլնի, անր սնտուկ մի թագաւորի սայից զրէք մէաչ գեամուն, տանենք. Դրին տարան, գիշերնից լաճ կը մանէր մէաչ սնտկին, կնկէան մօտ, ցէրէկ կինէր տիւս, խասան աեղըմ վէար նօպաթ աը տէն լաճուն, գիշեր ըսնէն թէալէն ծով. կնիկ լաճուն շանք իտուր, լաճ սընտուկ թէասլիմ արաւ թագօյին, գնէաց զուր խէալվեր էխան, խէակըցուց զկոճըմ, ինք իրի մտաւ մէաչ սնտկին. Մարդեր գիշեր էլան ըզկոն թէալցին ծով, էանոնց խէալկըվէն (կարծիքով) լաճն էր, թագօն էկաւ վէք, շատ կան իրի; տէսաւ լաճու ֆէաս վէար ծովուն ի, շատ տըրտմաւ, էանու սընտուկ առեց, իրեր խետ, եփ խասան ուրենց էրկիր, ոզիրքեր էկին որ աը խանէն տիւս, թագօն չէլաւ տիւս, սաց. Մարդ բիրէք, որ նէա սնտուկ էամէանաթ ի, տանի եմ խետ նոր իհէանք. Մարդ էկաւ սընտուկ զկեց, մէկտեղ տարան թագաւորի հօտէն: Ցէրէկ եփ ինչ թագօյին խաց կը բէրէն՝ ինք կէնէր կէան կէալ, կը կէր կը տիւնէր որ ուր խաց տարած ին, կը զէարմէանար, կըսէր. նէա խէալկ տըսեն մեր թագօն շատակեր ի, օրըմ պախ իտիր, տէսաւ որ ուր խաթուն սնտկից իլեր կայներ հօդի մէջ, դէարմէացաւ սաց. Տիւ մարզու սես՝ ես քը լէզուն աը քէշիմ տիւս, թագօն ձէն կտրեց: Թագաւոր մէկ էլ էկաւ տուն, խաց չէրաւ, ինչ առաւտուն գնէաց, սընտկի խանըմ սաց. Հրկուն որ կը գէայ, գէար վէար սնտկին, ես կըսէմ (հիբիաթ) ա'անեմ, քը թագաւոր քիկ ա'ուզի էասկոն արաւ սընտիւկ ձէմ էխան ուր կըսէն տակմէ զլօխ արաւ: Թագաւոր սաց. Աս ես եմ, եմ ախրէր ապա, գէ սմ (ասա) եմ ախրէր թնչի էլա:

Խանըմ սնտկի տիւս էրաց, զՊիտրոս էթալ մէաչ հօդին՝ սաց՝ Գէօ ի ք'ախոպէր:

Թագաւոր խասաւ ուր ախրէր գրկեց, ուշը կնէաց, թագօն

խասաւ, ջուր իրեր, էթեալ վէրէն ըշեարացաւ, էլաւ վէր սաց. Տիւ
ես մեր թագաւոր:

Սաց. Զէ ես ք'ախօր կնիկն եմ:

Սաց. Ոլա, բըլա, մենք էրկուսն էլ քը ծառէքն ենք, աիւ
մեր թագաւորն ես:

Խըլիսուն թագաւոր էլէաւ վէր հէյիէթ (ժողով) քօմեց, հո-
րօխկեց ըզջէաղէացպան իրի, ըզկազին իրի, նստաւ հէյիէթ
սաց. Հաքըմ ափանտի, շարէաթ արա. էրկու ախրէր կը կէան
վէար ախրին, մէկըն օձ կը կծի, մէկէլ ախրէր էհա հէքմի կան
կէայ, քարվանպաշիմ գեայ տիսնայ ժըրըշըի, լաճ իլնի վէր,
իհէա քէաղար, ոզիրիմ տուն մէյվան իլնի, էն էլ իլնի էանու
ոսկիք տիսնայ կիսասպան անի, տանի թէալի գետ, ջէաղէացպան
տանի շախի, ժըրըշըի, օրըմ ոզրին ուստ գէայ, մէկէլ վազի
որ ըսպանի զլաճ, լաճ յիրչըվէն փախի, օրըմ էլ զուր խո-
լէամ հօրօխկի զլաճ բիրի, տանի թէալի ծով, ապա նէարու
հէախկ թշկ ի:

Կըսի. Էանու հէախկն ի, քէաղջի փէտեր ժողվին, անեն
տէզ, ըզ ոզիր դնեն մէչ, կրակ տան ինի, վառեն, ջէաղէացպա-
նին էլ իսլաթեն:

Թագաւոր էլէաւ տէղ շինեց, ոզիր մէչ վառեց, ջէաղէացպան
արաւ էանու տեղ ոզիր, ոզրի կնիկ փսակեց, վէրէն մալ տօվլէաթ
իտու էանու, կէրան, խման, քէֆ արին:

Էրկնուց իրեք խնձոր էջաւ, մէկ ձիկ, մէկ ասողին, մէկ լսողին:

